



Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, չհետապնդելով որևէ եկամուտ, իր կայքերում ներկայացնելով հայագիտական հրատարակություններ, նպատակ ունի հանրությանն ավելի հասանելի դարձնել այդ ուսումնասիրությունները:

Մենք շնորհակալություն ենք հայտնում հայագիտական աշխատասիրությունների հեղինակներին, հրատարակիչներին:

*Մեր կոնտակտները՝*

*Պաշտոնական կայք՝ <http://www.armin.am>*

*Էլ. փոստ՝ [info@armin.am](mailto:info@armin.am)*

ՅԱԿՈԲ ԶՈԼԱՔԵԱՆ

**ՀԱՅԵՐԷՆԻ  
ԱԻԱՆԴԱԿԱՆ  
ՈՒՂՂԱԳՐՈՒԹԻՒՆ**

---

ՀԱԼԵՊ - 2000

ՉԱՅՆԱԻՈՐՆԵՐՈՒ  
ՈՒՂՂԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Ա

Ա ճայնատրը բառին սկիզբը եւ մէջը կը գրուի Ա, ինչպէս՝ Արամ, Արարատ, առաօտ, աղբիւր, գաղափար, հիւանդանոց, մարդահամար:

Ա ճայնատրը բառին վերջը կը գրուի ԱՅ եւ Ա ձեւերով:

1.- Բառավերջի Ա հնչիւնի դիմաց ԱՅ:

Ա հնչիւնը ԱՅ կը գրենք հետեւեալ պարագաներուն.

ա. - Բազմավանկ բառերու վերջատրութեան, ինչպէս՝ արեղայ, անխնայ, բացակայ, գուլպայ, ծնծղայ, հեռակայ, մանանայ, մօտակայ, ներկայ, պարագայ, սատանայ, վրայ, տղայ, փեսայ, բահանայ եւ այլն: Յ չեն առներ բոլորովին նոր փոխառութիւնները (տես յաջորդ բաժինը):

Յ-ն կ'արտասանուի միավանկ անուններու եւ ճայնարկութիւններու վերջատրութեան, ինչպէս՝ բայ, ճայ, հայ, վայ, բայց չ'արտասանուի միավանկ բայերու եզակի Գ. դէմքին մէջ, ինչպէս՝ կայ, (կու) լայ, (կու) գայ, (կու) տայ:

Յօդեր եւ յոգնակերտ մասնիկներ առնելու պարագային բառավերջի Յ-ին կրած փոփոխութիւնները տես էջ 53:

բ. - ԱԼ խումբի բայերուն դիմաոր ձեւերուն եզակի Գ. դէմքի վերջատրութեան, ինչպէս՝ ԽԱՂԱԼ. - կը խաղայ, պիտի խաղայ, թող խաղայ. ՀԵՌԱՆԱԼ. - կը հեռանայ, պիտի հեռանայ, թող հեռանայ, հեռացայ եւ այլն, բայց հրամայական եղանակի եզակին կը գրուի Ա-ով ու շեշտ կ'առնէ. - խաղայ՝ խաղա՛, պոռայ՝ պոռա՛, լողայ՝ լողա՛ եւ այլն:

գ. - Բանի մը անուններու սեռական-տրական հոլովներու վերջատրութեան. - կնիկ՝ կնկայ, աղջիկ՝ աղջկայ, նաեւ կարգ մը յատուկ անուններու հնաձեւ սեռական հոլովները՝ Սեւանայ լիճ (իբր՝ Սեւանի լիճ), Վանայ ծով.

Գրքոյկը կը ներկայացնէ հայերէնի աւանդական ուղղագրութեան կանոնական պարագաները բառարմատի, ածանցներու եւ մասնիկներու մակարդակներու վրայ: Չայնատրներու, երկբարբառներու եւ բաղաձայններու բաժիններէն բացի՝ նմանաձայն բառերը, կարգ մը ածանցներ, թուականները, գլխագիրի գործածութիւնը, կրճատումները եւ կէտադրութիւնը քննուած են առանձին բաժիններով: Ուղղագրական որոշ երևույթներ բացատրուած են պատմական ակնարկով: Քննուած են նաեւ տառադարձումի որոշ պարագաներ: Օրինակները բաւարար են վարժութիւններ կատարելու համար:

Նախատեսուած է հայերէնի տարրական քերականութեան ծանօթ բոլոր հետաքրքրողներուն համար:

Էջմիածնայ Աթոռ, Սասնայ ծոեր, Մծրնայ վանք, Մարութայ սարեր *և այլն*: Ասոնք գրաբար հորվական ձեւեր են *և ներկայիս կը գործածուին որոշ պարագաներու միայն*:

## 2.- Բառավերջի Ա հնչիւնի դիմաց Ա:

Ա *հնչիւնը Ա կը գրենք հետևեալ պարագաներուն.*

ա. - Անձի *և տեղի հին ու նոր յատուկ անունները.* - Արա, Հարմա, Սոնա, Եա, Սեզա, (անձի), Ամերիկա, Բանատա, Մոսկուա, Երզնկա, Ատանա (տեղի) *և այլն*: ԱՅ ձեւով կը գրուին այն յատուկ անձնանունները, որոնք ծագումով պարզ բառեր են, *ինչպէս՝* Հրաչեայ (հուր-աչ(ք)-եայ՝ կրակէ աչքեր ունեցող), ընծայ Ընծայ:

բ. - Իա վերջաւորութիւնը ունեցող փոխառեալ պարզ բառերը *և անձի ու տեղի յատուկ անունները.* - լուրիա, բիմիա, ֆիզիա, պաքալորիա (պարզ բառեր). Մաղաբիա, Անանիա, Եղիա (անձի). Իտալիա, Սպանիա (տեղի) *և այլն*:

գ. - Բոլորովին նոր փոխառութիւնները կամ բարբառային բառերը, *ինչպէս՝* մամա, պապա, շոբուլա, դաւուրմա, փարա, փախալա, օփերա *և այլն*:

դ. - Չայնանիշերու անունները՝ ֆա, լա:

ե. - Գիրերու անունները՝ դա, գա, ծա, շա:

զ. - Ահա, հիմա, ապա, հապա բառերը:

է. - Համարեալ (գրեթէ) բառը, որ համարել բայի գրաբար հրամայական ձեւն է *և շեշտ կը կրէ*:

ը. - Յուցական դերանուններէն հետևեալ շարքերը. ասիկա, ատիկա, անիկա.

սա, դա, նա. սրա, դրա, նրա (արեւելյահայերէն):

թ. - Չայնարկութիւնները. - հա՛, վա՛, քա՛, պա՛:

ժ. - ԱԼ խումբի պարզ բայերու եզակի հրամայականը. - խաղա՛ (խաղալ), գնա՛ (երթալ), լողա՛ (լողալ), խնդա՛ (խընդալ), պոռա՛ (պոռալ) *և այլն*:

## 3.- Ա ձայնատորը այլ ձայնատորներէ առաջ:

Ա ձայնատորը իրմէ ետք եկող ձայնատորին կը միանայ միշտ Յ կիսաձայնով. - այա, այն, այէ, այի, այը, այո, այու.

*ինչպէս՝* կայան, կայարան, մայել, հմայել, հայեացք, Կայէն, նայիլ, մայիւն, այո, կայուն *և այլն*:

ԱՅ վերջայանգ ունեցող բառերը կրնան աճիլ, այսինքն՝ հորվոխի կամ վերջածանց ստանալ. այդ պարագային մասնիկը ուղղակի կը միանայ բառին, *ինչպէս՝*

սատանայ՝ սատանայի, սատանայէ, սատանայով. գուլպայ՝ գուլպայի, գուլպայէ, գուլպայով:

Սակայն Ա-ով վերջացող բառերու պարագային Յ կ'աւելնայ, *ինչպէս՝*

Արա՛ Արայի, Արայէ, Արայով.

մամա՛ մամայի, մամայէ, մամայով.

լուրիա՛ լուրիայի, լուրիայէ, լուրիայով.

Անանիա՛ Անանիայի, Անանիայէ, Անանիայով:

Ա-ով վերջացող բառերը մականուններու ԵԱՆ մասնիկէն առաջ կը ստանան Յ. - Եղիա՛ Եղիայեան, Արա՛ Արայեան, Թումա՛ Թումայեան, Կանա՛ Կանայեան *և այլն*:

Այս օրէնքը չի գործեր կցական բարդութիւններու մէջ. այդպէս է նաև (նա (ան) + և) բառը:

## 4.- Ա. ձայնատորը տոկուն է:

Ա ձայնատորը տոկուն է, այսինքն՝ շեշտափոխութեան պարագային չի հնչիւնափոխուիր. - ծառ՝ ծառաստան, պողպատ՝ պողպատեայ, բարակ՝ բարակնայ *և այլն*: Ա-ի անկում կայ միայն բանի մը բառաձևերու մէջ. - գաւակ՝ գաւկին, գաւկէն. ճակատ՝ ճակտի, ճակտէն. ճերմակ՝ ճերմկիլ. շալակ՝ շալկել. ցամաք՝ ցամքիլ:

## Ե և Է

### 1.- Ե գիրին երեք արժէքները:

Ե գիրը կը գրուի բառին սկիզբը *և մէջը*. բառին վերջը բնա չի գրուիր: Բառին սկիզբը *և մէջը* ունի երեք արժէք.

ա. - Բառին սկիզբը երկհնչիւն է՝ «եէ», կիսաձայն *և ձայնատոր միացութիւն, ինչպէս՝* եզակի, ելք, եղբայր, եկեղեցի, եղի, եղինձ, եղնիկ, եղջերու, եռալ, եռանդ, ետ,

երագ, երանի, երբեք, երգ, երթալ, երկու *և այլն*:

*Բառասկիզբի Ե-ը բարդութեան կամ ածանցումի մէջ մտնելով կը վերածուի պարզ ձայնատրի.* - ելք՝ վերկը, եղբայր՝ հօրեղբայր, մօրեղբայր, երանգ՝ նրբերանգ, երգ՝ համերգ, մեներգ, խմբերգ, երթ՝ ողջերթ, շքերթ *և այլն*:

*Նոյն փոփոխութիւնը տեղի կ'ունենայ բայերու պարագային, երբ սկիզբը Կ' (ԿԸ) բայական մասնիկը ըլլայ. չենք ըսեր կը երագեմ, այլ՝ կ'երագեմ, նոյնպէս՝ կ'երերամ, կ'երգեմ, կ'երթամ, կ'ելլեմ, կ'եղբայրանամ, կ'եփեմ *և այլն*:*

*էական բայի ներկայի ձևերը՝ եմ, ես, (է), ենք, (էք), են, յօսքի մէջ իրենց նախորդող բառին հետ կ'արտասանուին նոյնպէս պարզ է-ի պէս, թէև առանձին կը գրուին. ես եմ, դուն ես, (ան է),*

*մենք ենք, (դուք էք), անոնք են.*

*վագած եմ, վագած ես, (վագած է),*

*վագած ենք, (վագած էք), վագած են.*

*վագեր եմ, վագեր ես, (վագեր է),*

*վագեր ենք, (վագեր էք), վագեր են:*

*Ե-ը կը պահէ բառասկիզբի հնչիւնը կցական թուականներու մէջ.* - երկու՝ քսաներկու, երեսուներկու. երեք՝ քսաներեք, երեսուներեք. եօթը՝ քսանեօթը, երեսունեօթը *և այլն*:

*բ. - Պարզ ձայնատր է բառին մէջ, բաղաձայնէ մը առաջ, ուր կը նոյնանայ է-ին, ինչպէս՝ բեռ, երես, թերի, լեռ, ծեր, հեռու, մելան, մեղք, մեքենայ, տետրակ *և այլն*: Այս դիրքին մէջ Ե *և* է՝ ձայնատրները ուղղագրական դժուարութիւններ կը պատճառեն:*

*գ. - Կիսաձայն է ԵԱ *և* ԵԱՅ երկհնչիւններուն մէջ (տես էջ 31):*

**2. - Ե ձայնատրը տոկուն է:**

*Ե ձայնատրը տոկուն է այսինքն՝ շեշտափոխութեամբ չի հնչիւնափոխուիր.* - լեռ՝ լեռնային, երես՝ երեսանց, տերև՝ տերևաթափ, ծեր՝ ծերունի, բեռ՝ բեռնակիր *և այլն*: Ե>Ի հնչիւնափոխութիւն կայ միայն դեմ դիւային, դիւահար բառերու պարագային *և* Ե-ի անկում կեղևի՝ կեղուել բային մէջ:

**Յ. - Ը գիրին դիրքերը:**

*Բառին սկիզբը Ը ձայնատրը անշփոթելի է.* - էակ, էգ, էշ, էջ, էրիկ *և այլն*: Ասիկա հին հայերէնի մէջ շեշտափոխութեամբ Ի կը դառնար. - էգ՝ իգական, էջ՝ իջևան, իջնել, էշ՝ իշապան, բայց նոր հայերէնի կազմութիւններուն մէջ անփոփոխ կը մնայ, ինչպէս՝ էջաթիւ, էջադրում:

*Բառին վերջը նոյնպէս անշփոթելի է՝* ափսէ, բագէ, հիլլէ, մանրէ, Շահէ *և այլն*: Ասիկա շեշտափոխութեամբ չի հնչիւնափոխուիր. - հիլլէ՝ հիլլեական, մանրէ՝ մանրեարան, է՝ էական, էութիւն, աշտէ՝ աշտէատր *և այլն*: Բառավերջի Ը-ն այլ ձայնատրի մը կը միանայ ուղղակի կերպով, առանց լսուող Յ կիսաձայնի. - ափսէ՝ ափսէի, ափսէէ, ափսէով. նաև՝ պաշտօնէութիւն, հրէական, հոովմէական, քրիստոնէական, էակ, էական, էութիւն, հիլլեական, մանրէարան *և այլն*:

*Որևմն՝ բառին սկիզբն ու վերջը Ը կը լսենք՝ Ը կը գրենք:*

*Բառին մէջ Ե *և* է՝ գիրերը կը նոյնանան: Այսպէս՝*

ծեր	սէր
նետ	կէտ
լեռ	տէր
բնեգ	պարտեգ
գեհն	օրէն(ք)՝

*Բառին մէջ Ը-ն առկա սահմանափակ գործածութիւն ունի քան Ե-ը: Այսպէս՝ արմատական բառերու նախաշեշտ դիրքերուն մէջ միշտ Ե կը գրենք, ինչպէս՝ բերան, գերան, գերեզման, դեղին, կերաս, հեռու, ճերմակ, մեղու, սեղան *և այլն*: Որևմն բառին մէջ Ը-ի գրութեան միակ դիրքը շեշտակիր վանկն է, արմատական մէկ բաղաձայնէ առաջ, ինչպէս՝ տէր, գէր, սէր, դէպ(ք), պարտեգ, օրէն(ք) *և այլն*: Երկու արմատական բաղաձայններէ առաջ միշտ Ե կը գրենք, ինչպէս՝ բերդ, թերթ, լսենք, հերթ, կերտ(ել), մերթ, ներկ, շերտ, սեղմ, փերթ *և այլն*: Դարձնայ՝ Ղ, Ռ, Ի բաղաձայններէն առաջ, ինչպէս՝ աղեղ, դեղ, ծեղ, հեղ, նեղ, պեղ(ել), բեռ, կեռ, սեռ, սիսեռ, դեւ, թեթեւ, կեղեւ *և այլն*:*

5.- Ինչպէ՛ս որոշել բառամէջի Ե եւ Է գիրերը:

*Բառի փակ դիրքի շեշտակիր Է-ն շեշտափոխութեան, այսինքն՝ ածանցումի եւ բարդութեան առան կը դառնայ Ի, իսկ Ե-ը անփոփոփ կը մնայ: Այսպէս՝*

գէտ՝ գիտուն, գիտնալ	գետ՝ գետակ, գետահուն
սէր՝ սիրել, սիրուիի	սեր՝ սերունդ
պէտ(ք)՝ պիտանի, պիտոյք	պետ՝ պետական, պետութիւն
պարտէզ՝ պարտիզպան	բեհէզ՝ բեհեզեայ
վրէպ՝ վրիպիլ, վրիպակ	երես՝ երեսանց

Է>Ի փոփոխութեան ոլորտը կ'ընդգրկէ շատ ու շատ բառեր. - ապաւէն՝ ապաւինիլ, գէջ (թաց) գիջութիւն, գէս (երկար մագի ծոպ)՝ գիսակ, գէտ՝ գիտակ, գիտնալ, գիտութիւն, գիտուն, դէզ՝ դիզել, դէմ(ք)՝ դիմակ, դիմաց, դիմաւոր, դէպ(ք)՝ դիպուած, դիպուկ, դէտ՝ դիտակ, դիտել, դիտող, երէց՝ երիցական, երիցագոյն, գէն(ք)՝ գինել, գինուոր, կէզ՝ կիզել, կիզիչ, կէս՝ կիսատ, կիսել, հանգէտ (հրրել, նման)՝ հանգիտութիւն, ձէթ՝ ձիթապտուղ, ձիթենի, մէջ՝ միջանցք, միջոց, միջուկ, միջօրէ, մէտ՝ միտում, միտումնաւոր, մէզ՝ միգամած, մէզ՝ միգապարկ, միզել (թայց մզիլ «քամիլ»), նուէր՝ նուիրել, շէկ՝ շիկահեր, շիկնիլ, շէջ՝ շիջիլ, պէս՝ այսպիսի, սէզ՝ սիգապանծ, սէր՝ սիրել, վէժ (ջրվէժ)՝ վիժիլ, վիժում, վէճ՝ վիճիլ, վէմ՝ վիմագրութիւն, վիմափոր, վէպ՝ վիպասան, վիպում, վէր(ք)՝ վիրակապ, վիրաւորել, վրէպ՝ վրիպակ, վրիպիլ եւ այլն:

Մակայն այս օրէնքը միշտ չի գործեր: Անփոփոխութեան պարագաները կարելի է խմբել հետևեալ ձևով.

ա. - Բառեր, որոնցմով կազմուած կարգ մը ածանցումներու եւ բարդումներու մէջ է:>Ի հնչիւնափոխութիւն կայ, իսկ ուրիշներու մէջ չկայ. - գէշ՝ գիշատիչ, բայց՝ գէշութիւն, գէշնալ, գէր՝ գիրուկ, գիրնալ, նաեւ՝ գերնալ, գերութիւն, կէտ՝ կիտել, կիտուած, բայց՝ կէտադրութիւն, շէն(ք)՝ շինել, շինական, շինութիւն (շինուածք), բայց՝ շէնութիւն (գուարթութիւն), շէնշող, շէննալ, պէտք՝ պիտանի, պիտոյք, բայց՝ պէտքարան, վրէժ՝ վրիժառու, բայց՝ վրէժխնդիր, տէր՝ տիրել, տիրական, տիրամայր, տիրութիւն, բայց՝ տէրութիւն, տէրու-

նական, անտէրութիւն, քէն՝ քինախնդիր, բայց՝ քէնտիլ, օրէն(ք)՝ օրինական, օրինաւոր, օրինապահ, օրինագիրք, բայց՝ օրէնագէտ, օրէնագիրք, օրէնադիր եւ այլն:

բ. - Բառեր, որոնք կամ բարդութեան մէջ չեն մտներ նաեւ կամ չեն հնչիւնափոխուիր, ինչպէս՝ աղէկ (աղէկնալ, աղէկութիւն), աղուէս (աղուէսագիրք), աշխէտ (կարմիր դեղնագոյն ձի), առէջ (հիսկեղէնի երկար թելերը), առնէտ, արդէն, բզէզ, բրէտ (պիծակ մը), գէթ, գոմէշ, երէկ, երնէկ, թէժ (բորբ), լէշ (անասունի դիակ), խէթ, խէժ, լալէզ, խոնջէնք, ծուէն, (ծովա)հէն (ծովի առագակ), հէզ, հրէշ (հրէշալին), մալէզ, մողէզ, մէկ (մէկական, մէկնոց, մէկալ), մէն մի, պատնէշ, պարսէտ, պարէտ (իշխան), սէզ, վէզ, վէս, վէտ, տէզ, փէճ (ուսին երեսը), փէշ, քարտէզ (քարտէզագրել, քարտէզագիր. ոմանք՝ քարտէս), քէնդ (քած՝ շուն կամ կատու), քէշ (պարսից կրօնք) եւ այլն:

Աղէտ բառէն կազմուած բառերը ոմանք կը պահեն անփոփոխ, իսկ ուրիշներ կը գրեն Ե-ով կամ Ի-ով. առեյի տարածուած են անփոփոխ ձևերը՝ աղէտալի, աղէտաբեր, աղէտաւոր:

Է-ն չի փոխուիր նաեւ կցական բարդութիւններու մէջ, ինչպէս՝ դէպի (դէպ ի), երէցկին (երէց կին), կէսօր (կէս օր), կէսկատար(կէս կատար), մէկզմէկ (մէկ զ-մէկ), մէկտեղ (մէկ տեղ), մէկտեղել, մէջտեղ (մէջ տեղ), մէջընդմէջ (մէջ ընդ մէջ), տէրտէր (տէր տէր), թէս (թէ եւ), թէկուզ (եթէ կ'ուզես), թէպէտեւ (թէ պէտ եւ), չէզոք (չէ զ-ոք) եւ այլն:

գ. - Բառեր, որոնց մէջ չհնչիւնափոխուող Է-ն կը գրուի Ե-ով. - եղէզ՝ եղևզնայ, եղևզնուտ, Եղևզնաձոր, Եղևզիս, պարէն՝ պարենաւորել, պարենապահ, պարենատոմս, պարենամթերք, պարենալին, պատճէն՝ պատճենել, պատճենահան: Գմրեթ բառը երկրորդաբար աւանդուած է նաեւ գմրէթ ձևով. ոմինք գմրեթարդ, գմրեթաւոր: Է>Ե տառափոխութեամբ կը գրուին նաեւ Արմէն՝ Արմենուիի, Արմենիա, Արմենակ յատուկ անունները:

Է>Ե հնչիւնափոխութեան պարագան գրաբարի մէջ կը կատարուէր ոչ միայն ածանցումներու եւ բարդումներու,

այլ հոյովաձևերու մէջ եւս. - պատճէն՝ պատճենից, պատ-  
ճենի: Այս պարագան չի գործեր արդի հայերէնի մէջ, որով-  
հետև ի և Ն գիրերը հնչիւնապէս նոյնացած են արդէն:  
Ասով հանդերձ ոմանք ի-ն տեղ մը անփոփոխ կը պահեն,  
այլ տեղ Ե-ի կը վերածեն: Այսպէս ի-ն անփոփոխ կը մնայ  
հոյովաձևերուն մէջ, ինչպէս պատճէն՝ պատճէնի, պատ-  
ճէնէ, պատճէնով, պարտէզ՝ պարտէզի, պարտէզէ, պար-  
տէզով: Սակայն կայ ամէն բառի ոմանց գործածած ամենէն  
ձեր՝ Ե-ով, ասիկա բացառական հոյովաձև է՝ ամէն, ամէ-  
նուն, ամէնէն, ամէնով, և թելադրելի է ի-ով գրել:

Ամէն բառէն կազմուած ածանցաւորները ունին Ե՝ ամե-  
նելին, ամենայնդէպս, այսու ամենայնի, բայց ամէնքը՝ Է:

Բարդութիւններուն մէջ ունինք Ե և ի: Այսպէս՝ Ա յօդա-  
կապով կազմուած իսկական բարդութիւններուն մէջ Ե կը  
գրենք: Այս ձևով կը կազմենք ածականներու գերադրա-  
կան աստիճանը, ինչպէս՝ ամենալաւ, ամենաթոյլ, ամենա-  
բաջ, ամենազէշ, ամենակարող, ամենատկար և այլն:  
Նոյնը կարելի է արտայայտել նկարագրական ձևով՝ ամէ-  
նէն լաւ, ամէնէն թոյլ և այլն: Չայնաւորով սկսող ածական-  
ներուն գերադրական աստիճանը ոմանք կը թելադրեն  
կազմել նկարագրական ձևով, ինչպէս՝ ամէնէն աղոտը,  
ամէնէն երիտասարդ, ամէնէն ուշ, ամէնէն անուշ և այլն,  
սակայն խօսակցական լեզուին մէջ սովորական ձևեր են  
ամենաուշ, ամենարնտիր, ամենաարագ և այլն:

Ամէնք բարդ բառեր կը կազմէ նաև բայահիմքերէ,  
որոնք «ամէն բան...ընող» կամ «ամէն բան ...եղող»  
իմաստները ունին, ինչպէս՝ ամենատես, ամենագէտ,  
ամենակալ, ամենատէր, ամենակեր, ամենահաս և այլն:  
Նոյն կարգի բառերէն ոմանք անյօդակապ են: Անյօդա-  
կապ բարդութիւններուն մէջ ամէն բաղադրիչը ի-ն կը  
պահէ, ինչպէս՝ ամէնատեղծ (ամէն ինչ ստեղծող), ամէ-  
նիմաստ (ամէն իմաստ ունեցող), ամէնիմաց (ամէն ինչ  
գիտցող), ամէնատեսաց (բոլորէն առուած), ամէնընտիր  
(բոլորէն ընտրուած) և այլն: Ամենարնտիր և ամէնընտիր  
բառերուն իմաստային տարբերութիւնները յայտնի են:

Է-ն նոյնը կը մնայ կցական բարդութիւններուն մէջ եւս,  
ինչպէս՝ ամէնուր, ամէնուրեք, ամէնօրեայ, ամէնժամեայ:  
Ոմանք ի-ն տառափոխութեան երևոյթին մէջ կ'առնեն  
մեծ թիով այլ բառեր եւս: Թելադրելի է ի-ն տառափո-  
խութեան նշուած պարագաներէն դուրս չելլել:

6.- Է-ի գրութեան այլ ոլորտներ:

ա. - Է, ԷՆ և ԷՍ վերջաւորութիւնները ունեցող յատուկ  
անունները՝ Բէլ, Բեթէլ, Գնէլ, Դանիէլ, Իսրայէլ, Մանուէլ,  
Նաթանայէլ, Ռաֆայէլ, Արէն, Արսէն, Բարզէն, Գուրգէն,  
Խորէն, Մարէն, Վազգէն, Փառէն, Արիստակէս, Մովսէս,  
Յովհաննէս, Ներսէս, Վրթանէս և այլն:

բ. - ԷՆ վերջաւորութեամբ ոչ բայական բառեր եւս, ինչ-  
պէս՝ պատճէն, պարէն, արդէն, ամէն, (ծովա)հէն, մէն  
(միակ), հելէն: Ատեն բառը ծագած է ատեան, իսկ գեհեն  
բառը գեհեան ձևերէն՝ եա>ն հնչիւնափոխութեամբ: Նաև՝  
դէս ու դէն բարբառային ցուցականը, իսկ Ե-ով կը գրուին  
տառանունները՝ բեն, կեն, մեն:

գ. - Էթ վերջաւորութիւնը ունեցող բոլոր միավանկ բա-  
ռերը և յատուկ անունները. - գէթ, խէթ, ձէթ, Սէթ, Եղիսա-  
բէթ, Յարբէթ, Համլէթ և այլն: Բազմավանկ բառերը կը  
գրուին Ե-ով՝ արեթ, անհեթեթ, փաթեթ, գմբեթ (երկրոր-  
դաբար՝ գմբեթ) բառերը:

դ. - Փոխառեալ բառերու ԷԱ, ԷՈ և ԷՅ երկհնչիւննե-  
րուն մէջ (համապատասխանաբար տես էջ 33-34):

7.- Է և Ե գիրերը օտար բառերու մէջ:

Օտար բառերուն սկիզբն ու վերջը Է-ն անշփոթելի է,  
ինչպէս՝ Էլիզապէթ, Էլսի, Էլպիս, Բերսափէ, Բելէ:

Բառասկիզբին «եէ» երկհնչիւնը օտար բառերուն մէջ  
ևս կը գրուի Ե, ինչպէս՝ Ենիգոմուշեան, Ենգիպարեան,  
Եկատերինա, Ենովա և այլն, բայց Ե կիսաձայնէն ետք  
եկող միւս ձայնաւորները կը գրենք, ինչպէս՝ եար, եաման,  
Եարալեան, Եորկի, Եոհաննէս, Եունէս և այլն:

Սակայն բառին մէջ ներկայիս բառս մը կը տիրէ մեր

մամուլին մէջ: Շրջան մը տարածուած էր բառին մէջ ամէն տեղ է-ի գրութիւնը, ինչպէս՝ բերմէս, փէնէսէլին, քոլէրա, Սէմէրճեան, Թէքէեան, Պէրպէրեան և այլն: Ոմանք նախաշեշտ դիրքերուն մէջ կը սկսին Ե գրել, իսկ շեշտակիր դիրքին մէջ՝ Է: Այսպէս էր նաև հին հայերէնի մէջ, ինչպէս՝ մեքենայ, վեղար, եկեղեցի, Կեսարիա, Եղևսիա, Ալեքսանդրէք և այլն, թէև շեշտակիր փակ դիրքին երկուքն ալ կը հանդիպին, ինչպէս՝ Աթէն(ք), Սաղէմ, Երուսաղէմ, կրկէս, պարէտ, քարտէզ, Եղիսարէթ, Յարէթ, Յովսէփ, բայց՝ Սեպտեմբեր, Հոկտեմբեր, Նոյեմբեր, Դեկտեմբեր, կանթեղ, գմբէթ և այլն: Վերջերս կը նկատուի բառին մէջ բոլոր դիրքերուն Ե գրելու միտում մը, ինչպէս՝ Սեմերճեան, Պերպէրեան, Պոշկեզեան:

Ամէնէն ճիշդը պիտի ըլլայ գրել հին հայերէնի մօտիկ եղանակով մը, նախաշեշտ՝ Ե, ինչպէս՝ Բեսապ, Բեպէք, Նենէթ, իսկ շեշտակիր՝ Է, ինչպէս՝ աթէթ, քասէթ, օմլէթ, Բեպէթ, Պոշկեզէնեան, քերմէս, Ալէն, Անժէլ, Հալէպ և այլն: Է կը գրուի նաև ԷՅ, ԻԷ, ԷՕ կապակցութիւններուն մէջ, ինչպէս՝ Շէյքափիր, Մէյրի, Ժիլիէթ, Ուիլիէմ, Մարիէթ, Էօժենի, Կէօվէնեան, Կէօթէօզեան և այլն:

8.- Ե և Է գիրերը մասնիկներու մէջ:

✓ Ե գիրը գոյականի քերականական մասնիկներուն մէջ.  
ա.- Ե-ը նաև սեռական հոլովի ներքին մասնիկ է գրաբարի մէջ. բանի մը բառերու պարագային տակաւին կը գործածուի իբրև հնարանութիւն. - կայսր՝ կայսեր (կայսրի), աստղ՝ աստեղ (աստղի), դուստր՝ դստեր (դուստրի):  
բ.- ԵՆ և ՆԵՆ յոգնակերտ մասնիկները. - բար՝ բարեր, տուն՝ տուներ, գարդ՝ գարդեր, թերթ՝ թերթեր, բազէ՝ բազէներ, կատու՝ կատուներ, սեղան՝ սեղաններ, հրեշտակ հրեշտակներ, պատուհան՝ պատուհաններ և այլն:

գ.-- ԵՆՔ/ԵՆՅ մասնիկը կը կազմէ հաւաքական անուններ. - Սարգիսենք՝ Սարգիսենց, Մարկոսենք՝ Մարկոսենց, Սօսիենք՝ Սօսիենց, Ռաֆֆիենք՝ Ռաֆֆիենց:

Իսկ Է-ն բացառական հոլովի մասնիկ է, որ կրնայ կրել

Ս, Դ և Ն յօդերը. - ծառ՝ ծառէ, ծառէս, ծառէդ, ծառէն: Կարգ մը դերանուններ և գոյականներ բացառական հոլովը կը կազմեն ՄԷ մասնիկով. - ես՝ ինձմէ, մենք՝ մեզմէ, դուն՝ քեզմէ, դուք՝ ձեզմէ, ինք՝ իրմէ, իրենք՝ իրենցմէ, որ՝ որմէ, Աստուած՝ Աստուծմէ:

Ե գիրը բայական քերականական մասնիկներուն մէջ.  
ա.- ԵԼ խումբի բայերը՝ գրել, վագել, սիրել, ատել, երգել, երագել, բարևել, հաշուել, մտնել, գտնել և այլն: Ասոնք գոյականին պէս կը հոլովուին, ինչպէս՝

գրել - գրելու - գրելէ - գրելով:

բ.- Բայական ԵԼ և ԻԼ խումբերու ապառնի դերբայներու վերջաորութիւնները՝ ԵԼՈՒ և ԵԼԻՔ. - գրել՝ գրելու, գրելիք. խօսիլ՝ խօսելու, խօսելիք:

գ.- Վաղակատար դերբայի վերջաորութիւնը ԵՐ, (Յ)ԵՐ. - գրել՝ գրեր, խօսիլ՝ խօսեր, խաղալ՝ խաղցեր:

Վաղակատար դերբայ + էական բայ՝ կը կազմեն բայի բաղադրեալ ժամանակները.

Վղկտր. ներկայ. - վագեր եմ, վագեր ես, վագեր է.

վագեր ենք, վագեր էք, վագեր են:

Վղկտր. անկտր. վագեր էի, վագեր էիր, վագեր էր.

վագեր էինք, վագեր էիք, վագեր էին:

դ.- Ել խումբի բայերուն եզակի արգելականը: Հրամայականը արգելականի կը վերաճուի ՄԷ՝ մասնիկով:

ԳՐԵԼ գրէ՝ մի՛ գրեր.

ԳՏՆԵԼ գտի՛ր՝ մի՛ գտներ

ԽԱՂՅՆԵԼ խաղցո՛ւր՝ մի՛ խաղցներ

ե.- ԵԼ խումբի դիմատր բայերու ներկայ ժամանակներու վերջաորութիւնները. - ԵՄ, ԵՍ, (Է), ԵՆՔ, (ԷՔ), ԵՆ:

ԳՐԵԼ գրեմ, գրես, (գրէ). գրենք, (գրէք), գրեն:

գ.- Անցեալ կատարեալ ժամանակի բայերուն ԵՅ կապակցութեան մէջ.

ՎԱԶԵԼ վագեցի, վագեցիր, վագեց.

վագեցինք, վագեցիք, վագեցին:

ԽՕՍԻԼ խօսեցայ, խօսեցար, խօսեցաւ.



խօսեցանք, խօսեցար, խօսեցան:

Է գիրը բայական քերականական մասնիկներու մէջ.  
ա. -ԵԼ և ԻԼ խումբերու անցնայ անկատար ժամանակ-  
ներու վերջատրութիւնները միշտ Է-ով կը գրուին. -

ԷԻ, ԷԻՐ, ԷՐ, ԷԻՆՔ, ԷԻՔ, ԷԻՆ.

ԳՐԵԼ գրէի, գրէիր, գրէր. գրէինք, գրէիք, գրէին:

ԽՕՍԻԼ խօսէի, խօսէիր, խօսէր. խօսէինք, խօսէիք, խօսէին:  
բ. - Դիմատր բայերու վերջը և Բ-էն առաջ.

կը վազէ, պիտի վազէ, թող վազէ, վազէ՛.

կը վազէք, վազեցէ՛ք, մի՛ վազէք:

Վ

Ը

1.- Գրուող և չգրուող Ը:

Ը ձայնատրը վանկարար է ու կը հանդիպի բառի բոլոր դիրքերուն մէջ, բայց կայ գրուող Ը և չգրուող Ը, որ կ'արտասանուի, բայց չի գրուիր:

Լ ստող, բայց չգրուող այս ձայնատրը կը կոչուի «գաղտնավանկ ր» կամ «սող ր»:

Ը ձայնատրը հայերէնի ամէնէն թոյլ ձայնատրն է և այդ պատճառով ալ շեշտ չի ստանար: Բառաշեշտը միշտ կ'իյնայ նախորդող ձայնատրին վրայ, ինչպէս յօդառութեան պարագային՝ գի՛րբը, գի՛րբս, գի՛րբդ, գի՛րբն րս, գի՛րբն րդ, նաև բառերու ուղիղ ձևին մէջ՝ Աղեքսան՛դր, կա՛րծր, սա՛նր, թա՛նձր, վա՛գր, ա՛ստղ, կա՛յր, դո՛ւստր և այլն:

Ը ձայնատրը տոկուն է ձայնարկութիւններու մէջ, ուր կը ստանայ շեշտ ու երկար, ինչպէս՝ փը՛ստ, փը՛թ, մը՛րթ, ճը՛ռռ, սը՛սս, քը՛շշ և այլն:

2.- Ը հնչիւնը բառին սկիզբը:

ա. - Չի գրուիր բառին սկիզբը՝ ստորև դրուած բաղաձայններու կապակցութիւններէն առաջ.

(գդ), ստ, սք> ստանալ, ստոյգ, ստրուկ. սքափիլ, սքափ:  
զգ, սկ, սք> զգալ, զգոյշ, զգեստ, զգօճ. սկսիլ, սկիզբ,

սքանչելի, սքողել:

զր, սպ, սփ> գրադիլ, գրօսանք. սպասել, սպանդ, սպի, սպունգ. սփովել, սփինքս:

սֆ> Սֆէյր, Սֆահանի (օտար բառեր):

շտ> շտապել, շտապ, շտեմարան:

զմ> զմայլիլ, զմելիլ:

Սկիհ բառը կարդայ ս(ը)կիհ, իսկ զմոսել բառը՝ զ(ը)-մ(ը)ոսել:

Վերի բառերը բարդութեան մէջ բաղաձայնէ մը ետք գալու պարագային գաղտնավանկ Ը-ը կը հնչուի, ինչպէս՝ վերստանալ, վերստուգել, գերզգայուն, անսկիզբ, հապըշտապ և այլն, իսկ ձայնատրէ մը ետք գալով չի հնչուիր, ինչպէս՝ բազմագրադ, հիասքանչ, դարասկիզբ և այլն:

բ. - Ը-ը կը գրուի բառասկիզբի միւս բոլոր պարագաներուն, գլխատրարար Մ և Ն բաղաձայններէն առաջ, ինչպէս՝ ըմբիշ, ըմբոշխնել, ըմբոստ, ըմբոնել, ըմպել, ընել, ընթացք, ընթերցել, ընթրել, ընծայ, ընկալել, ընկեր, ընկեցիկ, ընկլուգիլ, ընկղմիլ, ընկոյզ, ընծողտ, ընտանի, ընտիր և այլն: Միւս բաղաձայններէն առաջ ունինք ըլլալ, ըղձալ, ըսել և այլն: Ասոնք բարդութեան մէջ մտնելով Ը-ը կը պահեն. - դասընթացք, նախընթրիք, վերընծայել, դասընկեր, հնդկընկոյզ, վերընտրել, նորընտիր և այլն:

3.- Ը հնչիւնը բառին մէջ:

Չի գրուիր բառամէջի երկու բաղաձայններու միջև, ինչպէս՝ բազմացնել, թրթռալ, կռուիլ, կոխկռտել, պոռպոլալ, պտտիլ, վազվզել, փնտռել և այլն: Բառամէջին յտուող, բայց չգրուող Ը հնչիւնը շատ անգամ այլ ձայնատրի մը կամ երկհնչիւնի մը տղումէն յառաջացած է, ինչպէս՝ Ի. - սկիզբ՝ սկսիլ, գիր՝ գրատուն. ՈԻ. - սուգ՝ սգալ, սուր՝ սրածայր. ՈՅ. - պտոյտ՝ պտտիլ, բոյր՝ քրոջ և այլն:

Բառամէջի Ը հնչիւնը կը գրուի միայն ՈԻ (Վ) բաղաձայնէն ետք, ինչպէս՝ պահուրտիլ, կռուրտիլ, գգուրտիլ, նաև՝ ՈԻԱՆ հոյովումին բացառական հոյովին մէջ՝ իրիկուրնէ, առտուրնէ, կէսօրուրնէ, գիշերուրնէ և այլն: Ը կայ

նան 01ԸՆԵՐ բարբառային յոգնակերտին մէջ, գոր կ'առնեն կարգ մը բառեր միայն, ինչպէս՝ աշուրներ, ձեռուրներ, ոտուրներ, ծնկուրներ, մատուրներ:

Ոմանք անցնել ներգործական բայը կը գրեն անցրնել, որպէսզի հակադրուի անցնիլ չէզոք բային: Ասիկա չ'արդարանար, որովհետև այս երկու բայերը իրենց յօդորոշեամբ հակադրուած են արդէն իրարու: Ոմանք պտտիլ բայը կը գրեն պտրտիլ. ճիշդ չէ. կը գրենք գիր՝ գրել, սուր՝ սրել, այդպէս ալ պէտք է գրել պտոյտ՝ պտտիլ:

Ը հնչիւնը, ինչպէս տեսանք, կը գրուի բարդութիւններու մէջ, երբ երկրորդ բաղադրիչը իրմով կը սկսի, ինչպէս՝ դասընթացք, հատընտիր, նախընթրիք, դասընկեր և այլն:

4. - Ը հնչիւնը վերջին վանկին մէջ:

Չի գրուիր բառի վերջին փակ դիրքին մէջ, ինչպէս՝ անգղ, աստղ, բարձր, գողտր, դուստր, քանձր, վագր, ծանր, կարծր, կայսր, մանր, մեղր, ոսկր, ուստր, բուռն, դառն, խառն, խուռն: Այս բառերուն մէջ սուղ Ը-ով կազմուած վանկը լիարժէք չի նկատուիր, կը կոչուի «կէս վանկ», իսկ այդ բառերը՝ «մէկուկէս վանկանի» բառեր:

Սուղ Ը կ'առաջանայ նաև Ս և Դ յօդերէն առաջ, ինչպէս՝ գիրքս, գիրքդ, մատիտս, մատիտդ:

Սուղ Ը կայ նաև օտար ծագումով բառերու վերջավանկին մէջ, ինչպէս՝ Աղեքսանդր, լիտր, կղմիւտր, կուպր, մեթր, օշինդր և այլն:

Բառավերջին կը գրուի իբրև յօդ. - ծառ՝ ծառը, անտառ՝ անտառը, դասարան՝ դասարանը:

Ը հնչիւնը թուականներու մէջ տե՛ս էջ 74:

5. - Ը հնչիւնը միավանկ մասնիկներու, ածանցներու և բնաձայններու մէջ:

ա. - Սահմանական եղանակի ներկայ և անցեայ անկատար ժամանակներու բայերը կը կազմուին ԿԸ (Կ՝ և ԿՈՒ) ցուցիչով, որ բաղաձայնով սկսող բայերէն առաջ առանձին կը գրուի.

Ներկայ ժամանակ կը վագեմ, կը վագես, կը վագէ.  
կը վագենք, կը վագէք, կը վագեն:  
Անկատար անցեայ կը վագէի, կը վագէիր, կը վագէր.  
կը վագէիք, կը վագէիք, կը վագէիք:

ԿԸ մասնիկը ձայնատրոպ սկսող բայերէն առաջ կը կորսնցնէ Ը հնչիւնը, որուն գեղջումին ի նշան ապաթարց կը դրուի՝ Կ՛: Կ'արտասանուի ու կը գրուի բային հետ. - արդուկել՝ կ'արդուկեմ, ափսոսալ՝ կ'ափսոսամ, ըսել՝ կ'ըսեմ, ըմպել՝ կ'ըմպեմ, իմացնել՝ կ'իմացնեմ, իջնել՝ կ'իջնեմ, ուշանալ՝ կ'ուշանամ, ուզել՝ կ'ուզեմ, օրօրել՝ կ'օրօրեմ, օրհնել՝ կ'օրհնեմ: Բառակիրգրի և Ո գիրերը Կ՛ առնելով փակ դիրքին մէջ կը մտնեն ու կը կորսնցնեն բառակիրգրի իրենց յատուկ արտասանութիւնը՝ վերածուելով պարզ ձայնատրոնկերու. - երթալ՝ կ'երթամ, երգել՝ կ'երգեմ, երագել՝ կ'երագեմ, որոշել՝ կ'որոշեմ, որոնել՝ կ'որոնեմ և այլն:

Գաղտնապանկ Ը-ով սկսող բայերու պարագային ԿԸ մասնիկը նոյնպէս առանձին կը գրուի, բայց կ'արտասանուի բային հետ, ճիշդ Ը ունեցող բայերուն պէս: Համեմատել. գրադիլ՝ կը գրադիմ, ըսել՝ կ'ըսեմ  
սպասել՝ կը սպասեմ ընել՝ կ'ընեմ  
սթափիլ՝ կը սթափիմ ընթրել՝ կ'ընթրեմ  
շտապել՝ կը շտապեմ ընկերանայ՝ կ'ընկերանամ  
ԿԸ մասնիկին փոխարէն ԿՈՒ մասնիկը կ'առնեն միայն երեք միավանկ բայեր՝ ԳԱԼ, ՏԱԼ, ԼԱԼ. - կու գամ, կու գաս, կու գայ... կու գայի, կու գայիր, կու գար և այլն:

բ. - Անորոշ յօդերը՝ ՄԸ և ՄԸՆ, որոնք առանձին կը գրուին. - աշակերտ մը, նկարիչ մը, ծառ մը. ես աշակերտ մըն եմ. դուն նկարիչ մըն ես. կաղնին ծառ մըն է:

գ. - Միավանկ նախդիրները. - ԸՆԴ՝ ընդհանուր, ընդմիջել, ընդօրինակել, ընդօրկեայ, մէջընդմէջ, անընդհատ, ընդդէմ, ընդդիմանալ. ԸՍՏ՝ ըստ ամենայնի, ըստ սովորութեան, ըստ օրէնքի, օրըստօրէ:

դ. - Բնաձայնները՝ ճր՝ ոռ, վը՝ զզ, փը՝ թ, մը՝ թ և այլն:

6.- Ը հնչիւնը օտար բառերու մէջ:

Ը հնչիւնի գրութեան նոյն օրէնքները պահուած են հին փոխառութիւններուն մէջ: Բառին սկիզբը չի գրուիր Սկոպտիա, Սպանիա, սպունգ, սփինքս *և նման դիրքերու մէջ (տես էջ 14 -15):* Չի գրուիր նաև երկու բաղաձայններու միջև ինկած դիրքին մէջ, ինչպէս՝ կրամ, կլիմայ, դրամ, տոամ, կլայ, բրոմ, բրոնիկ, ֆրանգ *և այլն:*

Հակառակ վերի օրինաչափութեան՝ կը դրուի այն պարագային, երբ բաղաձայններու կուտակում կայ *և ուղղախօսութեան համար Ը-ը գրելը անհրաժեշտ կը նկատուի, օրինակ՝ Գլրճեան (և ոչ՝ Գլճեան), Ճղլլեան (և ոչ՝ Ճղլեան):*

Վերջին վանկին մէջ սովորաբար կը գրուի, ինչպէս՝ Փարբըր, Հաճըն, Պոսթըն, Սարթըր, Բարթըր *և այլն, թէև գրական լեզուին մէջ տեղ գտած հին փոխառութիւններու մէջ չի գրուիր՝ Աղեքսանդր, լիտր, կուպր, կղմիւտր, մեթր և այլն:*

+

Ի

1.- Ի ձայնատրին դիրքերը:

Ի ձայնատրի հայերէնի մէջ կը գրուի բառի բոլոր դիրքերուն մէջ *և ուղղագրական դժուարութիւն չի պատճառեր, ինչպէս՝* իղձ, իրիկուն, իմանայ, իժ, միս, կիրթ, սրբիչ, անկողին, գեղանի, գինի, ձի, թի *և այլն:*

Ի ձայնատրի այլ ձայնատրի մը կը միանայ ուղղակի, առանց կիսաձայն Յ-ի գրութեան. - գինի՝ գինիի, գինիէն, գինիով. ձիուկ, միակ, միութիւն: ԻԱ, ԻԱՅ, ԻՈ, ԻՈՅ *և ԻՕ երկհնչիւնները տես էջ 33-34:*

2.- Ի ձայնատրին փոփոխութիւնները:

Ածանցումի *և բարդումի ատեն շեշտակիր դիրքի Ի-ն հետեւնայ փոփոխութիւնները կը կրէ.*

ա. - Փակ դիրքի մէջ կը կորսուի. - գրիչ՝ գրչաման, մա-

հիճ՝ մահճակայ, անկողին՝ անկողնոց, դեղին՝ դեղնուց, տիկին՝ տիկնայք *կամ կը վերածուի գաղտնավանկ Ը-ի. -* դիրք՝ դրութիւն, միս՝ մսեղէն, թիթ՝ թթածակ, գիր՝ գրել *և այլն:*

բ. - Բառասկիզբին կարգ մը բառերու մէջ կը վերածուի Ը-ի. - ինչ՝ ընչագուրկ, իղձ՝ ըղձայ, ինձ՝ ընձառիծ, ընձուղտ *և այլն: Այս համարանութեամբ ոճանք կը գրեն առնչութիւն, առնչուիլ (առ-ինչ-ութիւն. ներկայիս տարածուած է՝ առնչութիւն, առնչուիլ ձևը՝ ոչինչ (ոչ-ինչ)՝ ոչնչանալ օրինակին պէս):* Կարգ մը բառերու մէջ այ կը մնայ նոյնը. - իր՝ իրեղէն, ինք՝ ինքնակայ, իսկ՝ իսկապէս *և այլն:*

գ. - Միավանկ բառերու բաց դիրքին մէջ անփոփոխ կը մնայ. - մի՝ միութիւն, թի՝ թիակ, թիավարել, դի՝ դիակ, դիահերձում, ձի՝ ձիատր, ձիարշաւ, ձիարոյծ *և այլն:*

դ. - Բազմավանկ բառերու բաց դիրքին մէջ ունի բանի մը տեսակ փոփոխութիւններ.

1. - Ա յօղակապին միանալով կը դառնայ Ե. - գարի՝ գարեջուր (գարի-ա-ջուր), գինի (գինի-ա-մոյ) գինեմոյ, գօտի՝ գօտեպինդ, հոգի՝ հոգեկան, որդի՝ որդեկորոյս, ոսկի՝ ոսկեգոյն, ոսկեգնդակ, տարի՝ տարեմուտ *և այլն: Հոգէտ (հոգին առնող) բարդ բառին մէջ՝ Է:*

2. - ԱԿ փաղաքշական մասնիկը Ի-ին միանալով կը կազմուի ԵԱ երկբարբառը. - որդի՝ որդեակ, հոգի՝ հոգեակ, պատանի՝ պատանեակ *և այլն:*

3. - ՈՒԹԻԻՆ ածանցէն առաջ կ'իյնայ. - վայրենի՝ վայրենութիւն, ընտանի՝ ընտանութիւն, բարի՝ բարութիւն *և այլն:*

3.- Ի հնչիւնը հոլովական համակարգի մէջ:

Ի ձայնատրի նաև հոլովական մասնիկ է: Ի հոլովումին կ'ենթարկուի գոյականներու մեծամասնութիւնը, այդ պատճառով այ ան կը կոչուի ընդհանրական կամ հասարակ հոլովում. - մատ՝ մատի, սեղան՝ սեղանի, Արա՝ Արայի, Ֆըրանսա՝ Ֆրանսայի, սատանայ՝ սատանայի, բազէ՝ բազէի, հիլէ՝ հիլէի, մատանի՝ մատանիի, գիւղացի՝ գիւղացիի, գինի՝ գինիի, կատու՝ կատուի, առու՝ առուի, Մարօ՝ Մարոյի, Դրօ՝ Դրոյի, հաւաքածոյ՝ հաւաքածոյի *և այլն:*

Հոլովումի մէջ բառին արմատական Ի-ն կրնայ հետեւեալ վիճակներուն ենթարկուիլ.

ա. -Բառավերջին կը մնայ անփոփոխ. - գինի՝ գինիի, գինիէն, գինիով:

բ. -Գրաբար հոլովածներուն մէջ Ո-էն առաջ կը դառնայ Ի. - հոգի՝ հոգոյն (հոգիի), գինի՝ գինով (գինիով), մատանի՝ մատանոյն (մատանիին):

գ. -Փակ դիրքի մէջ չի հնչիւնափոխուիր. - մատիտ՝ մատիտի, մատիտէ, մատիտով. կալիճ՝ կալիճի, կալիճէ, կալիճով. գալիթ՝ գալիթի, գալիթէ, գալիթով. ուսուցիչ՝ ուսուցիչի, ուսուցիչէ, ուսուցիչով... Սակայն այս անցումը արևմտահայերէնի մէջ տակաւին չէ ամբողջացած. ոմանք կը գործածեն հին ձևեր. - գիր՝ գրի, փոխանակ՝ գիրի, ուսուցիչ՝ ուսուցչի, փոխանակ՝ ուսուցչի: Թելադրելի է գործածել անփոփոխ ձևեր, երբ մանաւանդ Ի հնչիւնի սղումը բոլորովին խորթ կրնայ հնչել բացառական եւ գործիական հոլովներուն մէջ: Տիրական ձևեր են գիրէն, գիրով, ուրեմն՝ գիրի. գիրքէն, գիրքով, ուրեմն՝ գիրքի. ուսուցիչէն, ուսուցչով, ուրեմն՝ ուսուցչի: Ի-ի անկում կ'ունենան շարք մը բառեր միայն. - երկիր՝ երկրի, երկրէ, երկրով, երկինք՝ երկնի (սովորական՝ երկինքի), լուսին՝ լուսնի, պատիւ՝ պատուի եւ այլն:

ՆԵՐ մասնիկով յոգնակի բառերուն մէջ Ի-ի սղում չի նկատուիր. - մատիտ՝ մատիտներ, ուսուցիչ՝ ուսուցիչներ, երկիր՝ երկիրներ, երկինք՝ երկինքներ, անմիտ, անմիտներ, նամակագիր՝ նամակագիրներ: ԵՐ մասնիկով յոգնակի շարք մը բառեր կը շարունակեն գործածուիլ Ի հնչիւնի անկումով. - գիր՝ գրեր, գիրք՝ գրքեր, սիրտ՝ սրտեր, բայց ամէն պարագայի՝ նախընտրելի է անփոփոխ պահելը, ինչպէս՝ գիրեր, գիրքեր, սիրտեր, միրգեր, լինտեր: Նոյնն է պարագան այն բարդ բառերուն, որոնց երկրորդ բաղադրիչը միավանկ արմատ մըն է, ինչպէս՝ զարդագիրեր, շնղագիրեր, պատմագիրքեր եւ այլն:

#### 4. -Ի նախդիրը:

Ի ձայնատրը հին հայերէնի մէջ նախդիր էր, ինչպէս «ի տուէ եւ ի գիշերի»: Ի նախդիրը ձայնատրէ առաջ կը դառնար Յ՝ յանուն հօր, յառաջ, յամենայն եւ այլն: Ասոնցմէ ոմանք նոր հայերէնի մէջ քարացած ձևեր են, ինչպէս՝ ի վեր, ի վար, ի գին, ի խնդիր, ի նպաստ, ի ծնէ, ի սկզբանէ, ի հեճուկս, յանուն, յառաջ եւ այլն: Ոմանք առաջին երկու բառերը կը գրեն միասին՝ իվեր, իվար: Ի նախդիրը կայ նաեւ կցական բարդութիւններու մէջ, ինչպէս՝ զատիթափ, զառիվար, զառիվեր, խառնիխառն, հեւիհեւ:

### Ո Եւ Օ

#### 1. - Ո Եւ Օ գիրերը բառին սկիզբը:

որդի	ով	օր
որսորդ	Ովսաննա	օձ
որքան	ովկիանոս	օղակ
ոգնի	ովկիան	օշինդր
ոգի	Ովսիա	օղի
ոտք	ովասիս	օթևակ

Վերի երեք շարքերէն կ'եզրակացնենք.

ա. - Բառին սկիզբը Ո-ն միշտ «վօ» կը հնչուի, բացի Վ գիրէն առաջ:

Բառին սկիզբի Ո-ն (վօ) կը կորսնցնէ իր «վ» բաղադրիչը ու կը վերածուի պարզ ձայնատրի՝ բառը բարդութեան մէջ մտնելու կամ նախածանց մը առնելու պարագային. - ողորմ՝ անողորմ, ողոր՝ անողորք, ողջ՝ առողջ, ոջիլ՝ փայտոջիլ, ոսկոր՝ կրծոսկր, որ՝ երբոր, որակ՝ անորակ, որդ՝ երիզորդ, որոջ՝ բացորոջ, որս՝ ձկնորս եւ այլն:

Բառի սկիզբը «վօ» հնչիւնը «վո» ձևով կը գրուի միայն վոհմակ բառին մէջ:

«Վօ» կ'արտասանուի նաեւ երկու օտարամուտ բառերու մէջ՝ Գէորգ (Գետրգ) եւ քաոս (քաոս): Արեւելահա-

յերը նոյն ձևով կ'արտաբանեն Մատթեոս (Մաթևոս) և Թադէոս (Թադևոս) յատուկ անունները:

բ. - Բառին սկիզբը Վ բաղաձայնէն առաջ «օ» կը լրսենք, բայց Ո կը գրենք՝ Ովսաննա, ովկիան, ովասիս, ովկիանոս:

գ. - Վերի պարագայէն դուրս՝ «օ» հնչիւնը բառին սկիզբը միշտ Օ կը գրուի: Այս բառերը բարդութեան մէջ մտնելէ ետք Օ-ն անփոփոխ կը պահեն. - օրէն՝ տնօրէն, ընդօրինակել, օթևակ՝ զիշերօթիկ, օր՝ օրօր, օղ՝ ականջօղ և այլն:

Օ գիրը Այբուբենին վրայ աւելցած է յետագայ դարերուն, երբ տեղի ունեցած է աւ>օ պատմական հնչիւնափոխութիւնը, երկբարբառին բաղաձայնէ մը առաջ ինկած դիրքին մէջ. - ար՝ օր, աւձ՝ օր, արար՝ արօր, արատ՝ արօտ, առաւատ՝ առաւօտ և այլն:

## 2. - Ո և Օ գիրերը բառին մէջ:

Բառին մէջ Ո և Օ գիրերը հնչիւնապէս կը նոյնանան և ուղղագրական դժուարութիւններ կը ստեղծեն.

նոր	տօն
փոր	արօտ
գորտ	աղօտ
հորթ	աղօթք
հոտ	հօտ

Օ գիրը բառին մէջ շատ աւելի քիչ կը հանդիպի, քան Ո-ն. ուրեմն՝ յիշենք այդ բառերը. - ակօս, աղօթք, աղօտ, աղօրի(ք) (ջաղացք), ամօք, անօթ (աման), (ա)նօթի, (ա)նօտր, առաւօտ, արղեօք, արտօնել, արտօսր (արցունք), արօս (շերկուած արտ), արօտ, արօր (հերկելու գործիք), արօտ (յուսածագ), բարօր, բօթ (գէշ լուր), գեղօն (գովերգութիւն), գօտի, դրօշ, դօղօշ (ցամաքային գորտ), եօթը, զբօսանք, զգօն, զօրութիւն, զօրք, թափօր, թօթուկ, թօթափել, թօն (տեղատարափ անձրև), թօշ (շատ լայն՝ կօշիկ կամ հագուստ), թօշնիլ, ժօտատ (ակոսները թափած), լօղիկ (կարճ վերարկու), լօթի (խման, մսխող), լօշ (լաւաշ հաց), լօռ (ջրային մամուռ), լօրիկ (կարճահասակ ու կրորիկ

անձ), լօփիկ (գիրուկ), լսօլ, լսօնաւեր (համեղ ուտելիք և խմելիք սիրող), լսօսիլ, լսօսնայր (փնսացու), ծանօթ, ծնօտ, կարօտ, կրօն, կօշիկ, համառօտ (կարճառօտ), հետագօտել, հօտ, հօրու (խորթ հայր), հօփալ (հաւփալ, վայրի աղանի), ձօն (նուէր, ուղերձ), դօղանջ, դօղիլ (պահուրտիլ), ճօճան (օրօրուող), ճօճ(ք) (օրօրում), ճօշան (մորթէ պատրաստուած վահան), ճօշալ (բամբասել), մօտ, մօր/մօրտ (ցելս), մօրու (խորթ մայր), մօրուք, յօղ (կապ), յօղուած, յօղել (իրարու փակցնել, զօղել), յօտոց (պարտիզպանի մկրատ), յօտել, յօշկ (մանրկ՝ միսր), յօշոտել (բզրտել), յօժար, յօնեղ, յօրանջել, յօրինել, յօնք, նարօտ, նօթ (կարմիր ներկ մը), նօնօշիկ, նօտար (պետական քարտուղար), նօտր, նօտրագիր (շնդագիր), շօշափել, պաշտօն, սօսի, սքօղել, սօսաիւն (տերևներու ձայն, սօսափիւն), սօսափիլ (խշրտալ՝ տերևները), տկօշ (գէր, ուռած), տօն, տօսալս (կարծր փայտ տուող թուփ), ցօղ, ցօղուել, ցօղուն, քօշ (արու այծ), քօղ, քօղարկել: Օ ունիւնք նաև հետևեալ ածանցներուն մէջ. - ՕՆ(Ք). - գործօն, թափօն, թրթօն, ծամօն, կրծօն, կտրօն, զարթօնք և այլն: Թատրոն և կեղրոն բառերուն վերջայանգը չշփոթել ածանցին հետ: ՕՔ (գրարարի յոգնակի գործիական հոլովի քարացած ձևերուն մէջ). - ատննօք, ընտաննօք, առօք-փառօք, ցաւօք, բայց՝ բարութք, բարութել:

Հին հայերէնի մէջ Օ պարզ ձայնաւորը միշտ տառադարձուած է Ո, ինչպէս՝ կաթողիկոս, եպիսկոպոս, Օգոստոս, Եղոս, Հոկտեմբեր, Եգիպտոս, հոեաոր, Սողոմոն և այլն: Պաղոս-Պօղոս օտար անունին մէջ Օ ունիւնք աս>աւ երկբարբառին պարզացումով:

Նոր հայերէնին մէջ բարբառային և օտար բառերուն մէջ սովորութիւն եղաւ գրել Օ, ինչպէս՝ փօլիս, Սօնիա, ոմանթիզմ, փարատօքս, ինչ որ օրինաչափութեան խախտում ստեղծեց հին ու նոր փոխառութիւններու մէջ: Վերջերս կարգ մը թերթեր սկսած են բառին մէջ, բացի վերջայանգէն, բոլոր դիրքերուն ալ Ո գրել, ինչպէս՝ լոպի, կոլ, ռոմանթիզմ, Սոնիա, Փոլ, փարատոքս, փոլիս, Ֆոթպոլ և այլն:

Ու Ն Օ ձայնատրոնները տոկուն են, այսինքն՝ բառի վերջին վանկին մէջ ածանցումի կամ բարդումի պարագային չեն հնչիւնափոխուիր: Ուն չ'արտասանուիր Սողոմոն յատուկ անուան մէջտեղի դիրքին մէջ:

3.- «Օ» հնչիւնին գրութիւնը բառին վերջը:

Բառերու վերջատրութեան «օ» հնչիւնը կը գրուի երեք ձեով՝ ՈՅ, Ու Ն Օ:

ա.- Բազմավանկ բառերու վերջատրութեան ՈՅ կը գրուի, բայց կը հնչուի «օ», ինչպէս՝ ի վերջոյ, յետոյ, պահածոյ, դրածոյ, չափածոյ, հաւաքածոյ, ժողովածոյ, բրածոյ, հանածոյ *և այլն*: Այս օրինակափութեան մէջ չեն մտնել բարբառային բառերն ու բոլորովին նոր փոխառութիւնները:

Միավանկ բառերու վերջայանգ Յ-ն կ'արտասանուի, ինչպէս՝ Նոյ, խոյ, գոյ: Բառավերջի այս երկհնչիւնը արտասանութեամբ կը տարբերի բառամէջի ՈՅ երկհնչիւնէն, ինչպէս՝ ծոյլ, գոյն, թոյլ, տմոյն *և այլն*:

Յօդեր *և* յոգնակերտ մասնիկներ առնելու պարագային բառավերջի Յ-ին կրած փոփոխութիւնները տես էջ 53:

բ.- Արդի հայերէնի մէջ բառին վերջը Ո ունիւնք միայն այդ բառին մէջ:

Օտար բառերու *և* յատուկ անուններու բարբառային ձևերու վերջատրութեան «օ» հնչիւնը ոմանք առաջարկած են գրել Ո-ով կամ ՈՅ-ով.- Մանուէլ՝ Մանու կամ Մանոյ *և ոչ* Մանօ, նաև Ծիբակո կամ Ծիբակոյ: Ասոնք որքան այնքան անբարեխաղ են հայերէնի աւանդական ուղղագրութեան տրամաբանութեան չեն ընդհանրացած: Սովորութիւն է Օ գրել անձնանուններու փաղաքշական ձևերու *և* օտար բառերու վերջատրութեան.- Սաթենիկ՝ Սաթօ, Վարսենիկ՝ Վարսօ, Կարապետ՝ Կարօ, Գրիգոր՝ Գոգօ, Մանուէլ՝ Մանօ, Սաղաթէլ՝ Սաղօ, քիլօ, մեթրօ, օթօ *և այլն*:

Այս բառերը Ս, Դ, Ն յօդերը *և* ՆԵՐ յոգնակերտը ստանալու պարագային Օ-ն կը պահեն նոյնութեամբ, ինչպէս՝ Կարօն, Սարօն, Մարօն, իմ օթօս, քու օթօղ, օթօներ:

Սակայն հոյովումի ատեն բառավերջի Օ գիրը կը դառ-

նայ Ու *և* յաջորդ ձայնատրին կը միանայ Յ-ով, ինչպէս՝ Մարօ՝ Մարոյին, Մարոյէն, Մարոյով.

օթօ՝ օթոյին, օթոյէն, օթոյով:

Օ-ով վերջացող յատուկ անունները մականուն դառնալու ատեն Օ-ն կ'ըլլայ ՈՅ.- Շառօ՝ Շառոյեան, Թամօ՝ Թամոյեան, Բենկօ՝ Բենկոյեան, Մարտօ՝ Մարտոյեան:

Օտար բառերու վերջատրութեան «նօ» ձայնը ԻՕ կը գրենք, ինչպէս՝ Խոյիօ, Անթնիօ, Օնթարիօ, սենարիօ:

Օ-ով կը գրենք ա) ձայնարկութիւնները՝ տօ՛, ծօ՛, լօ՛, հօ՛ *և այլն*. բ) կարգ մը ձայնանիշերու անունները՝ տօ, սօ. գ) հայերէն կարգ մը գիրերու անունները՝ թօ, հօ, ցօ:

4.- ՈՅ-ն *և* Օ-ն իբրև հոյովում:

Ի հոյովումին ենթարկուող բառերէն ոմանք արեւմտահայերէնի մէջ զուգաձևաբար կը պահեն գրաբարեան ՈՅ հոյովաձևը.- մամուլ՝ մամլոյ, սուգ՝ սզոյ, պատի՛ պատույ: Հոգի՛ հոգույն *և* տարի՛ տարույն բառերը յօդով կը գործածուին: Նոյն ձևով կրնան հոյովուիլ կարգ մը տեղանուններ *ևս*.- Կարին՝ Կարնոյ, Մուշ՝ Մշոյ, Սասուն՝ Սասնոյ: Սէր՝ սիրոյ, Աստուած՝ Աստուծոյ, Կ. Պոլիս՝ Կ. Պոլսոյ միայն ՈՅ հոյովումին կ'ենթարկուին. նաև՝ ԻԱ-ով վերջացող տեղանունները.- Իտալիա՝ Իտալիոյ, Սուրիա՝ Սուրիոյ *և այլն*: Այս ձևերէն ոմանց մէջ Ս, Դ, Ն յօդերու առկայութեան պարագային ՈՅ-ն կ'արտասանուի իբրև երկհնչիւն՝ սի-րոյն, պատույն, հոգույն *և այլն*:

Օ գիրը նաև ներքին հոյովում է: ԱՅ>Օ փոփոխութեամբ սեռական հոյով կը կազմեն հայր, մայր, եղբայր *և* ասոնցմով կազմուած բարդ բառերը, ինչպէս՝ կնքահայր, կնքամայր, հօրեղբայր, մօրեղբայր:

հայր - հօր - հօրմէ - հայրով (հօրմով):

հօրեղբայր - հօրեղբօր - հօրեղբօրմէ - հօրեղբայրով:

Բայերու ԵԼ, ԻԼ, ԱԼ խումբերուն ներկայ դերբայը կը կազմուի ՈՂ կամ (Յ)ՈՂ մասնիկով.- գրել՝ գրող, խօսիլ՝ խօսող, խաղալ՝ խաղցող:

ԻԻ կապակցութիւնը կը հանդիպի բառին բոլոր դիրքերուն մէջ, բայց երես տարրեր արժէքներով՝ ձայնատր, երկհնչիւն եւ ձայնատր+բաղաձայն կապակցութիւն:

1.- ԻԻ կապակցութիւնը ձայնատր եւ երկհնչիւն:

1.- ԻԻ կապակցութեան բաղադրիչ գիրերը բաղաձայնէ մը առաջ իրար հետ կը ձուլուին եւ պարզ ձայնատր մը կ'արտարկեն, ինչպէս՝ ալիւր, առիւծ, արիւն, դիւրին, հիւսիս, ձիւն, մլախիւն, սիւն, սկիւռ, սօսափիւն եւ այլն: Սակայն բառին սկիզբը եւ ՈՒԹԻԻՆ ածանցին մէջ ԻԻ ունի երկհնչիւնային արտասանութիւն՝ «ևու», ինչպէս՝ իւր, իւրաքանչիւր, քաջութիւն, համբերութիւն, բարեկամութիւն, ուրախութիւն եւ այլն: Ահա այս պատճառով ալ ԻԻ-ը ունի ձայնատրներու շարքին կ'աւելցնեն, ունի՝ երկհնչիւններու:

ԻԻ-ը տոկոն է եւ բացի բանի մը մասնակի պարագաներէ՝ հնչիւնափոխութեան չ'ենթարկուիր. - ձիւն՝ ձիւնամրրիկ, ձիւնածածկ (բայց՝ ձնծաղիկ), սիւն՝ սիւնագարդ, բիւր՝ բիւրապատիկ, թիւր՝ թիւրիմացութիւն, դիւր՝ դիւրին, դիւրեկան, հիւր՝ հիւրանոց, հարիւր՝ հարիւրամեայ, արիւն՝ արիւնաթաթախ (բայց Չարենցը ունի՝ արնանման) եւ այլն: Սփիւռ(ք) եւ մրջիւն բառերու պարագային կ'իյնայ՝ սփռել, սփռոց, մրջիւն՝ մրջնիկ, մրջնանոց:

ՈՒԹԻԻՆ ածանցով բառերու (քաջութիւն, բարեկամութիւն, եղբայրութիւն, գրականութիւն, բերականութիւն) հոլովական ձևերու կազմութեան մէջ կայ ԻԻ երկհնչիւնի հնչիւնափոխութիւն. - քաջութիւն՝ քաջութեան, քաջութենէ, քաջութեամբ: ԻԻ>Ե հնչիւնափոխութիւն տեղի կ'ունենայ ՈՒԹԻԻՆ ածանցով բառի աճման պարագային եւս. - բնութիւն՝ բնութենապաշտ, միութիւն՝ միութենական:

Արիւն բառը նոյնպէս կը հնչիւնափոխուի սեռականտրական եւ գործիական հոլովներուն մէջ, ԻԻ>ԵԱ ձևով. - արիւն՝ արեան, արիւնէ, արեամբ: ԻԻ>Ե փոփոխութիւն ու-

նիւր նաև եղջիր՝ եղջերատր, եղջերափող բառերուն մէջ:

ԻԻՆ ածանցով կազմուած բնաձայնական գոյականները ածականի կը վերածուին ՈՒՆ եւ ԱՆ ածանցներով, ինչպէս՝ հնչիւն - հնչուն, գնգիւն - գնգուն, գոնգիւն - գոնգուն, շառաչիւն - շառաչուն, սօսափիւն - սօսափուն, մլախիւն - մլախան, հաջիւն - հաջան, կշկշիւն - կշկշան եւ այլն: Ատոնք հնչիւնափոխական երևոյթներ չեն:

2.- ԻԻ ձայնատր+բաղաձայն կապակցութիւնը:

ԻԻ-ը իրրու ձայնատր+բաղաձայն կապակցութիւն կ'արտասանուի «իվ» եւ կը հանդիպի.

ա. - Բառավերջին, ինչպէս՝ անիւ, արծիւ, թիւ, կռիւ, հովիւ, պատիւ, քիւ եւ այլն: ԻԻ-ը շեշտափոխութեան հետեանքով կը վերածուի ՈՒ-ի, որ կ'արտասանուի իրրու «վ». - թիւ՝ թուական, հովիւ՝ հովուական, հովուերգակ, պատիւ՝ պատուական, արծիւ՝ արծունի եւ այլն: Հոլովումի տեսն Ի-ն չի կորսուիր, ինչպէս. - քիւ՝ քիւի, անիւ՝ անիւի, թիւ՝ թիւի, հովիւ՝ հովիւի, արծիւ՝ արծիւի. արդէն դուրս ձգուած են թուի, հովուի, արծուի ձևերը, սակայն պատուի (փոխանակ՝ պատիւի) ձևը տակաւին լայնօրէն կը գործածուի: Ունիւր նաև պատույ (պատիւի) հին ձևը, նոյնպէս թույն (թիւին), սահմանափակ գործածութեամբ:

բ. - Բառին մէջ, ձայնատրէ մը առաջ, ինչպէս՝ դիւան, հիւանդ, տիւան, Զիւան:

## ՈԻ

1.- ՈԻ կապակցութեան արժէքները:

ՈԻ կապակցութիւնը բառին մէջ ունեցած իր դիրքին համաձայն ունի ձայնատրի եւ բաղաձայնի (Վ) կրկնակի արժէքներ: Ատոնք կ'արտարկուին երկու բաղադրիչներուն ամբողջական ձուլումով:

ՈԻ ձայնատրը կը հանդիպի բառին սկիզբը, մէջը, միշտ

բաղաձայնէ մը առաջ, եւ բառին վերջը. ինչպէս՝ ուղեղ, ուր, ուրանայ, ուրբաթ, ուրիշ, ուզել, ուշ, ամուր, գուրգուրայ, մուրացիկ, նուշ, նուտ, քնքուշ, ածու, բու, թթու, կատու, կծու, հլու եւ այլն:

Ո՛ր կապակցութիւնը ձայնատրէ մը առաջ բաղաձայն է եւ կ'արտասանուի Վ-ի պէս.

- ուա> Նուարդ, նուագ
- ուե> ստուեր, կեղուել
- ուէ> նուէր, պատուէր
- ուի> տարուիլ, սիրուիլ
- ուր> պահուրտիլ, կոուրտիլ, առտուրնէ
- ուո> աղուոր, բանուոր, զինուոր
- ուօ> ազնուօրէն
- ուու> թուում, արժանապատուութիւն, հովուութիւն եւ այլն:

Բացառութիւն են սորվիլ (սովորիլ), օսհվիրայ եւ Սիլվա, ուր ձայնատրէ առաջ Վ կայ:

Մանուէլ եւ Մամուէլ անուններուն մէջ Ո՛ր կապակցութիւնը տակաւին կը պահէ ձայնատրի իր արժէքը:

Ո՛ր բաղաձայնը իրրու միջածանց ներգործական բայերէն կը կազմէ կրատրական բայեր. – սիրել՝ սիրուիլ, դատել՝ դատուիլ, արհամարհել՝ արհամարհուիլ, գտնել՝ գտնուիլ, տեսնել՝ տեսնուիլ, սպաննել՝ սպաննուիլ եւ այլն:

Արեւելահայերէնի սահմ. եղանակի ներկայ ժամանակի բայերուն մէջ Ո՛ր կրատրական մասնիկը Ո՛ր ձայնատրէն առաջ կը գրենք Ի՝ բանտարկում է, պատժում է, հեռացում է: Նաև կարգ մը հին հոլովածներու մէջ. – պատի՛ պատույ, թի՛ թույն, տարի՛ տարույն, հոգի՛ հոգույն, բարի՛ բարութ:

2. – Ո՛ր ձայնատրին հնչիւնափոխութիւնը:

Ո՛ր ձայնատրը թոյլ է ու շեշտափոխութեամբ կա՛մ բոլորովին կը կորսուի, կա՛մ կը վերածուի անգիր Ը-ի. – մածուն՝ մածնապուր, գլուխ՝ գլխատել, ամուր՝ ամրանայ, ամրութիւն, մարուր՝ մարրութիւն. մուխ՝ մխայ, ծուխ՝ ծխանելոյզ, լուտ՝ լուել, լուակաց, լուր՝ լրարեր, լրատու եւ այլն:

Գաղտնավանկի վերածումը կը գտնենք ոչ բոլոր բազ-

մավանկ բառերուն մէջ. – խնդում՝ խնդումներես, ուսում՝ ուսումնական (բայց թաղում՝ թաղմանական) եւ այլն. վաթսուն՝ վաթսունամեակ, եօթանասունամեակ, ութսունամեակ (բայց՝ յիսուն՝ յիսնամեակ): Ո՛ր Մ եւ (Ա)ՍՈ՛ր Ե ածանցներու ձայնատրը առհասարակ չի սղիր:

Միավանկ բառերու սկիզբը չի փոխուիր. – ութ՝ ութսուն, ունկն՝ ունկնդրել, ուս՝ ուսադիր, ուշ՝ ուշանայ, ուլ՝ ուլիկ եւ այլն: Բայց ումպ բառէն ունիւր ըմպել, ըմպելի, ըմպանակ:

Բառավերջին շեշտափոխութեան հետևանքով կը վերածուի «Վ» բաղաձայնի, բայց կը պահէ գրութեան աւանդական իր ձևը. – կատու՝ կատուագգի, թթու՝ թթուաշ, կծու՝ կծուիլ, աղու՝ աղուաձայն, թէև գոյականի թեր ձևերուն մէջ արևմտահայերէնի մէջ կը պահենք ձայնատրի արտասանութիւնը. – կատու՝ կատուին, կատուէն, կատուով. ածու՝ ածուին, ածուէն, ածուով: Այս օրինակներն այ ցոյց կու տան, որ Ո՛ր ձայնատրը ուրիշ ձայնատրի մը կը միանայ ուղղակի կերպով, առանց կիսաձայն Յ-ի գրութեան:

Ի հոլովումի ձևերուն մէջ Ո՛ր-ն չի կորսուիր. – մածուն՝ մածունի, մածունէ, մածունով. ջուր՝ ջուրի, ջուրէ, ջուրով. դոտ՝ դոտի, դոտէն, դոտով. շուն՝ շունի, շունէ, շունով եւ այլն: Հոս պէտք է նշել, որ այլ հոլովումներու ենթարկուող կարգ մը բառեր Ո՛ր-ի սղում կ'ունենան. – դոտ՝ դրան, դոնէն, դոնով, մատոտ՝ մատրան, աշուն՝ աշնան, գարուն՝ գարնան, մուկ՝ մկան: Ո՛ր Մ (ումն) ածանցով գոյականները ԱՆ հոլովումին ենթարկուելու պարագային Ո՛ր-ն կը կորսուի. – շարժում՝ շարժման, հոլովում՝ հոլովման, համբարձում՝ համբարձման եւ այլն, բայց նախընտրելի է գործածել Ի հոլովումի ձևերը՝ շարժումի, հոլովումի, համբարձումի:



ԵՐԿՆՆՉԻՒՆՆԵՐՈՒ  
ՈՒՂՂԱԳՐՈՒԹԻՒՆԸ

ԱՅ և ՈՅ

1. – ԱՅ կապակցութեան երկու արժէքները:

ԱՅ կապակցութիւնը կը հանդիպի բառի բոլոր դիրքերուն և ունի երկու արժէք, երկհնչիւն և պարզ Ա:

ա. – Իբրև երկհնչիւն կայ բառին սկիզբը, բառին մէջը և միավանկ բառերու վերջատրութեան. – այգի, այլ, այրել, մայր, հայր, եղբայր, դայլայլ, հայ, բայ, վայ, ճայ:

Վերջայանգի ԱՅ երկհնչիւնը ուրիշ ձայնատրէ մը առայց կ'երկփնդկուի. – հայ՝ հայու, հայէ, հայով. բայ՝ բայական, բայանուն. կայ(ք)՝ կայուն, կայան, կայարան և այլն:

բ. – Բազմավանկ բառերուն վերջը կը կարդացուի պարզ Ա-ի պէս, Յ գիրը չի հնչուիր. ինչպէս՝ մանանայ, բահանայ, գուլպայ, սատանայ, կը խաղայ, պիտի երթայ և այլն: Միավանկ բայերու վերջատրութեան ևս չի հնչուիր. – կայ, (կու) գայ, (կու) տայ, (կու) լայ:

2. – ՈՅ կապակցութեան երեք արժէքները:

ՈՅ կապակցութիւնը կը հանդիպի բառի բոլոր դիրքերուն և ունի երեք արժէք՝ երկու երկհնչիւն և պարզ Ո:

ա. – Առաջին երկհնչիւնը կու գայ բաղաձայնէ մը առաջ, ինչպէս՝ առոյգ, առուոյտ, արտոյտ, բոյն, գոյն, թոյն, խարոյկ, լոյս, ողջոյն, պատրոյգ և այլն: Կը գրուի ՈՅ, կ'արտասանուի «ոյ»: Ձայնարկութիւններու և օտար բառերու մէջ կը գրուի՝ ինչպէս որ կը լսուի. – ույ, հույ, վույ և այլն:

Ածանցումի և բարդումի առեն ՈՅ երկհնչիւնը սովորաբար կը դառնայ ՈՒ, իսկ կարգ մը պարագաներու կը կորսուի կամ անփոփոխ կը մնայ. – բոյն՝ բունկալ (բայց՝ բնակար), բոյթ՝ թթամատ, բոյր՝ բուրակ, գոյն՝ գունատոր, գունագեղ, թոյն՝ թունատոր, թոյլ՝ թուամորթ (բայց՝ թոյլտուութիւն,

թոյլատրել), լոյս՝ լուսատոր, խարոյկ՝ խարուկահանդէս, ծոյլ՝ ծուլանալ, կապոյտ՝ կապուտաչեայ, կապուտակ, բայց՝ կապտորակ, կապտիլ, համբոյր՝ համբուրել, ողջոյն՝ ողջունել, պտոյտ՝ պտուտահողմ, պտուտակ, բայց՝ պտտիլ, սայր՝ սուրալ, բայց՝ սրարջաւ, սառոյց՝ սառցակոյտ, սառցադաշտ, ստոյգ՝ ստուգել և այլն:

Բառին սկիզբը ՈՅ ունին միայն ոյծ և ոյծ բառերը. առաջինը ներկայիս առանձին չի գործածուիր. ունինք ուծանալ և ուծացում. երկրորդը շատեր ողղախօսաբար սկսած են գրել ուծ ձևով, նաև՝ ներուծ, աշխուծ: Անոյք բառը այժմ կը գրուի անուշ, բայց անձնանուններու պարագային ՈՅ-ով Անուշ, Հայկանուշ, Մայրանուշ, նաև՝ արևնուշ բառը:

բ. – Երկրորդ երկհնչիւնը կը հանդիպի միավանկ բառերու վերջատրութեան, բայց արտասանութեամբ տարբեր է բառամէջի դիրքէն. – Նոյ, գոյ, խոյ և այլն: Ենչտափոխութեան պարագային չի հնչիւնափոխուիր, բայց ձայնատրէ մը առայց կ'երկփնդկուի. – գոյ՝ գոյական, խոյ՝ խոյանալ, խոյակ, Նոյ՝ Նոյկան Տապան:

ՕՅ ձևով կը գրուի ձայնարկութիւններու և օտար բառերու վերջատրութեան, ինչպէս՝ հօյ, ճօյ, պօյ (թրք.՝ հասակ):

3. – Բազմավանկ բառերուն վերջը կը կարդացուի պարզ Ո-ի պէս, ինչպէս՝ բրածոյ, դշխոյ, ի վերջոյ, հաւաքածոյ, յևտոյ, պահածոյ, տպածոյ և այլն:

Յօդը և յոգնակերտ մասնիկներ առնելու պարագային բառավերջի Յ-ին կրած փոփոխութիւնները տես էջ 53:

ԵԱ, (Ա/Ո)ՅԱ, (Ա/Ո)ՅԵԱ, ԵԱՅ,  
ԻԱ, (Ա)ՅԻԱ, ԻԱՅ, ԷԱ

Ասոնք ողղախօսական տեսակէտէն նոյնն են ներկայիս, բայց ծագումով ու դիրքով իրարմէ կը տարբերին: ԵԱ, (Ա/Ո)ՅԱ, (Ա/Ո)ՅԵԱ, ԵԱՅ կը պատահին հայերէն, իսկ ԻԱ, (Ա)ՅԻԱ, ԻԱՅ, ԷԱ՝ ծագումով օտար բառերու մէջ:

## 1.- ԵԱ, (Ա/Ո)ՅԵԱ, (Ա/Ո)ՅԱ, ԵԱՅ

ԵԱ-ն կր գրուի հայերէն բառերու մէջ, բաղաձայնէ մը ետք, ինչպէս՝ ատեան, կեանք, մատեան, մանեակ, պատեան, պատանեակ, Արուսեակ, սպասեակ, վառեակ, այծեամ, սենեակ, ոսպնեակ, սարեակ, ժանեակ, օթեակ, լիբանանեան, ամերիկեան, Պօղոսեան, առաօտեան *և այլն*:

Եա երկհնչիւնը միայն մէկ բառի վերջաորութեան կը հանդիպի՝ համարեա՛:

ԵԱ կը գրենք բառին սկիզբը, օտարամուտ բառերու *և ձայնարկութիւններու մէջ, ինչպէս՝* եաման, եար, Եարալեան, Եանիկեան, եատէս, եախնի, եա՛, եա՛հ:

ՅԵԱ կը գրուի ածանցաւոր բառերու մէջ, ուր Յ կ'իսաձայնը արմատին մէջ կայ, բայց ածանցեալ ձեռին մէջ անձայն կը դառնայ. - դայեակ, Հմայեակ, հայի՛ հայեացք, երեկոյ՛ երեկոյեան, Նոյ՛ Նոյեան, դանայեան տակառ:

ՅԵԱ-ին մէջ Յ-ն յաւելուած է այն մականուններուն մէջ, որոնք ստեղծուած են Ա-ով *և* Օ-ով վերջացող օտար բառերէ ու բարբառային անուններէ, ինչպէս՝ գարա (թրք.՝ սեւ)՝ Գարայեան, տանա (թրք.՝ երինջ)՝ Տանայեան, Թումա (Թովմաս)՝ Թումայեան, Եղիա՝ Եղիայեան, Արա՝ Արայեան, Գարօ (Գարրիէլ)՝ Գարոյեան, Համօ՝ Համոյեան *և այլն*:

ՅԱ կապակցութիւնը ունի նոյն արտասանութիւնը, բայց կու գայ Ա *և* Ո ձայնատրոններէն ետք, ինչպէս՝ կայան, տղայական, Հայաստան, խոյակ, խոյանալ, գոյական *և այլն*:

ԵԱՅ կը գրուի հայերէն բառերուն վերջաորութեան, ուր Յ-ն անձայն է, ինչպէս՝ հրեայ, քրիստոնեայ, պաշտօնեայ: ԵԱՅ ածանցը գոյականներէն յարաբերական ածականներ կը կազմէ, ինչպէս՝ գետեգերեայ, ծովափնեայ, երկօրեայ, եօրեայ, երկամեայ, պղնձեայ, բիրեղեայ, թիթեղեայ *և այլն*: Այս ածանցով ունինք յատուկ անուն մըն այ՛ Հրաչեայ:

## 2.- ԵԱ *և* ԵԱՅ երկհնչիւններու փոփոխութիւնը:

ԵԱ երկհնչիւնը թոյլ է *և* բառի ածման պարագային վերջին վանկին մէջ կ'ենթարկուի հնչիւնափոխութեան *և* կը վերածուի Ե-ի. - ատեան՝ ատենապետ, ատենագրու-

թիւն, ժանեակ՝ ժանեկագործ, կեանք՝ կենարար, հայեացք՝ հայեցակէտ, մանեակ՝ մանեկագարդ, մատեան՝ մատենագիր, պատեան՝ պատենաոր, պատանեակ՝ պատանեկիկ, վայրկեան՝ վայրկենական, սենեակ՝ սենեկապետ *և այլն*: Նոյնը զր պատահի ՈՒԹԻԻՆ ածանցով գոյականներու սեռական-տրականի հիմքէն բացառական հոլովի կազմութեան տեսն. - քաջութիւն՝ քաջութեան, քաջութենէ. լաւութիւն՝ լաւութեան, լաւութենէ:

Վերի օրինաչափութենէն դուրս ունինք յորելեան՝ յորելիճական (ոմանք բռնագրօսիկ ձեով կը գրեն՝ յորելեակեան, իսկ ուրիշներ անփոփոխ կը պահեն): Անփոփոխ մնալու այլ պարագաներ այ կան. - ախոյեան՝ ախոյեանութիւն, ախոյեանական, արբանեակ՝ արբանեակա՛նա, արբանեակե՛տար, դայեակ՝ դայեակութիւն (երբեմն՝ դայեկութիւն):

Եայ>Է. շեշտափոխական հնչիւնափոխութիւն կայ հետեւեալ բառերուն մէջ. - հրեայ՝ հրէական, հրէութիւն, հրէից, գործունեայ՝ գործունէութիւն, պաշտօնեայ՝ պաշտօնէութիւն, քրիստոնեայ՝ քրիստոնէական, քրիստոնէութիւն, քրիստոնէից, այժմեայ՝ այժմէական: Այս է-ն կայ այլ ածանցաւոր բառերու մէջ *ևս, ինչպէս՝* բաղդէական, արամէական, հոռմէական *և այլն*:

## 3.- ԻԱ, (Ա)ՅԻԱ, ԻԱՅ, ԷԱ

Ասոնք կը գրուին փոխառեալ բառերու մէջ:

ԻԱ կը գրուի օտար բառերու մէջը *և* վերջը, ինչպէս՝ Անթիլիաս, Արփիար, Բենիամին, Գողիաթ, իմփերիալիզմ, հեթիաթ, միլիառ, Անանիա, Եղիա, Մատաթիա, Սոնիա, լուրիա, քիմիա, ֆիզիա, Իտալիա, Ռումանիա, Գերմանիա *և այլն*: ԻԱ-ն կը հնչիւնափոխուի միայն մէկ պարագայի. - օտար տեղի անուններու սեռական-տրական ձեռին մէջ. - Իտալիա՝ Իտալիոյ. Թուրքիա՝ Թուրքիոյ. Ռուսիա՝ Ռուսիոյ: ՅԻԱ ունինք միայն Գայիանէ անունին մէջ:

ԻԱՅ ունինք միայն կրիայ բառին վերջաորութեան:

ԷԱ ունինք ֆրանսերէնէ տառադարձեալ իտէա, իտէալ բառերուն *և* յունարէնէ եկած Անդրէաս անձնանունին մէջ:

Ասոնք, բացի վերջինէն, ուղղախօսական տեսակէտէն նոյնն են արդի արևմտահայերէնի մէջ, բայց ծագումով ու դիրքով իրարմէ կը տարբերին. ԵՕ և ՅՈ կը հանդիպին հայերէն բառերու մէջ, իսկ ԵՈ, ԻՈ, ԻՈՅ, ԷՈ, (Ա)ՅՈ, (Ա/Ո)ՅՕ և ԷՕ՝ օտար բառերու մէջ:

Արդի հայերէնի մէջ ԵՕ մնացած է քանի մը բառերու մէջ միայն՝ եօթը, արդևօք, ընտանևօք, կարծևօք:

(Ա)ՅՈ ունի նոյն արտասանութիւնը, բայց կու գայ Ա ձայնատրէն նտք: Կայ միայն այդ հայերէն բառը:

ԵՈ ունինք օտար բառերու սկիզբը, ինչպէս Եոհան, Եոլանտ, Եոհաննէս, Եորկի և այլն:

ԻՈ ունինք օտար բառերու մէջը, ինչպէս՝ ամպիոն, շնմփիոն, քիմիոն, միլիոն, միսիոնար, միսիոն, Անտիոք, Սրապիոն, Պիոն, Սիոն, Լիոն, Գիոս, Յուլիոս, Բիզանդիոն և այլն, իսկ ԻՕ՝ բառերու վերջը, ինչպէս՝ Անթոնիօ, Օնթարիօ, սենարիօ: Հայերէն օրիորդ բառը ունի այլ ծագում. օրի և որդ՝ «իշխանի որդի»:

ԻՈՅ կ'ունենանք ԻԱ վերջաւորութեամբ տեղանուններու սեռական-տրական հոլովին մէջ. Իտալիա՝ Իտալիոյ, Սուրիա՝ Սուրիոյ, Գերմանիա՝ Գերմանիոյ և այլն:

ԷՈ ունինք ֆրանսերէնէ տառադարձեալ միայն լեզէոն և պանթէոն բառերուն մէջ: Նաև յունարէնէ անցած յատուկ անուններուն մէջ, ինչպէս՝ Թէոդոս, Թէոդորոս, Մատթէոս, Թադէոս, Բարթողիմէոս, Չակքէոս, Տիմիթէոս, Կղէոպատրա, նաև՝ Գէորգ, որ կ'արտասանուի «Գևորգ» ձևով: Արևելահայերը նոյն ձևով կ'արտասանեն նաև Թադէոս (Թադևոս) և Մատթէոս (Մաթևոս) անունները: Սիմոն յատուկ անուան գրութեան նախկին ձևն է՝ Սիմէոն:

ԷՕ ձևը միւսերէն իր հնչիւնով այ կը տարբերի. ունինք օտար բառերու մէջ, ինչպէս՝ Էօմենի, Կէօքճեան, Կէօվ-շէնեան, Չէօրէքճեան և այլն: Հայոց մականուններու թրքարմատներուն մէջ շատ կը հանդիպի:

Հայերէնի բաղաձայնները ըստ իրենց արտասանութեան ձևին՝ կ'ըլլան. – պայթականներ՝ բ, պ, փ, գ, կ, ք, դ, տ, թ. պայթաշփականներ՝ ձ, ծ, ց, ջ, ճ, չ. շփականներ՝ մ, ն, զ, ս, ժ, շ, դ, խ, լ, վ, ֆ, յ, ր, ռ, յ, հ:

Արևմտահայերէնի մէջ պայթականները և պայթաշփականները զրաբարի և արևելահայերէնի դիմաց հիմնական փոփոխութիւններու ենթարկուած են: Նոյնացած են Բ և Փ, Գ և Բ, Դ և Թ, Չ և Յ, Չ և Չ բաղաձայնները: Միս կողմէ նոյնացած են և օտար բառերու մէջ զիրար կը փոխարինեն արևելահայերէնի Բ և արևմտահայերէնի Պ զիրերը և համապատասխանաբար՝ Գ և Կ, Դ և Տ, Չ և Ծ, Չ և Ճ: Հետևաբար՝

– Հոն ուր Բ տառադարձուած է արևելահայերէնի մէջ՝ կը գրենք Պ. – ամբիոն՝ ամպիոն, բանկ՝ պանք, բասկետոլ՝ պասքեթպոլ, բետոն՝ պեթոն, բենզին՝ պենզին, իսկ ուր որ Պ տառադարձուած է՝ կը գրենք Փ (և ոչ թէ Բ). – պասսիվ՝ փասսի, պանսիոն՝ փանսիոն, պաթետիկ՝ փաթեթիք, պալտո՝ փալթօ, պարտիա՝ փարթի, պարտիզան՝ փարթիզան և այլն: Եւ վերջապէս, ուր որ Փ տառադարձուած է՝ կը պահենք նոյնութեամբ. – փաթրոն, փախլալա, փեհլիան:

– Հոն ուր Գ տառադարձուած է արևելահայերէնի մէջ՝ կը գրենք Կ. – գագ՝ կագ, գագոլին՝ կագոլին, գաբարդին՝ կապարտին (կտոր մը), գեստապո՝ կեսթափօ, իսկ ուր որ Կ տառադարձուած է՝ կը գրենք Բ (և ոչ թէ Գ). – կագինօ՝ քագինօ, կալորիա՝ քալորի, կակտոս՝ քաքթոս, Կանադա՝ Բանատա, Կալիֆորնիա՝ Բալիֆորնիա և այլն: Եւ վերջապէս, ուր որ Բ տառադարձուած է՝ կը պահենք նոյնութեամբ. – քիմիա, քլոր, քլորոֆիլ, քրոնիկ, քրոնիկոն:

Թրքերէնէ և արաբերէնէ եկած կոկորդային պայթական Չ հնչիւնը սովորութիւն էր տառադարձել Գ-ով: Ասիկա շատ կը հանդիպի մականուններու և տեղանուններու

մէջ, ինչպէս՝ Գարակիլլէան, Գալիագեան, Գատրնեան, Գալէմտէրեան, Գարահիսար, Պարտագեան, Անգարա, Գրրգլսան *և այլն*: Անոր գրութիւնը աւանդաբար կը շարունակուի գլխաւորաբար մականուններու մէջ:

– Հոն ուր Դ տառադարձուած է *արևելյահայերէնի մէջ՝ կը գրենք Տ*. – դամա՝ տամա (*խաղ մը*), դելտա՝ տելթա, դելֆին՝ տելֆին, դեկոր՝ տեքոր, դարչին՝ տարչին, *իսկ ուր որ Տ տառադարձուած է՝ կը գրենք Թ (և ոչ թէ Դ)*. – տախտ՝ թախթ, տակտիկա՝ թաքթիք, տաքսի՝ թաքսի, տեկստիլ՝ թեքսթիլ, տրակտոր՝ թրաքթոր, տերիտորիա՝ թերիթորիա *և այլն*: Եւ վերջապէս, ուր որ Թ է՝ կը պահենք նոյնութեամբ. – թենիս, թալիսման, թէյ, թայֆա:

– Պայթա-շփականներուն մէջ հոն ուր Չ տառադարձուած է *արևելյահայերէնի մէջ՝ կը գրենք Ճ*. – ջահէլ՝ ճահէլ, ջան՝ ճան, ջաննաթ՝ ճաննաթ, ջատու՝ ճատու, Ջինա՝ Ճինա, Ջիմի՝ Ճիմի, *իսկ ուր որ Չ է՝ կը պահենք նոյնութեամբ*. – չայ, չոլ, չաղր՝ չատըր, չալել, չերթէզ, չոբան՝ չոպան, չինար:

Աւելցնենք, որ մեր մամուլն ու տպագրութիւնը սովորութիւն ունին *արևելյահայերէն գրուածքներու մէջ օտար բառերու տառադարձութիւնը պահել իր բնագրային վիճակով, ինչպէս՝ ամբիոն, պարտիա, գեստապօ, դեկոր, ջան*:

Արևմտահայերէնի մէջ Պ, Կ, Տ, Ծ և Ը գիրերը գրեթէ չեն շփոթուիր, բայց Բ և Փ, Գ և Բ, Դ և Թ, Զ և Յ, Զ և Չ նոյնացած ըլլալով ուղղագրական դժուարութիւններ կը յարուցեն: Միայն որոշ պարագաներ օրէնքներով կարելի է որոշել, իսկ մեծ մասը պէտք է սերտողութեամբ իրացնել:

## Բ, Փ և Պ

1. – Օրինաչափական պարագաներ:

ՄԲ օրէնք. – ամբար, ամբասիր, ամբարտակ, Ամբերդ, ամբոլս, ամբարիշտ, ապստամբ, բամբասել, բամբիռ, գմբեթ, դամբան, դամբանական, ըմբոստ, ըմբոշխնել,

ըմբիշ, թանբ, թումբ, թմբուկ, լամբակ, լամբար, խումբ, կաղամբ, կշտամբել, համբառնայ, Համբարձում, համբուրել, համբերել, համբաւ, ճամբել (*արևելյահայերը՝ ճամբել*), Մամբրէ, շամբուտ, ջամբել, սմբակ, սմբուկ, նանս գործիական հոլովի ՄԲ մասնիկը. – քաջութիւն՝ քաջութեամբ, լաութիւն՝ լաութեամբ, արիւն՝ արեամբ, ծագում՝ ծագմամբ, հոլովում՝ հոլովմամբ *և այլն*: ԲՅՌ.

ա. – Ամփոփ, ամփոփել, շամփուր, փամփուշտ, խորմփալ, գամփո (*ոմանք՝ գամբո*):

բ. – Բանի մը բառերու մէջ Մ-էն ետք ունինք Պ, ինչպէս՝ ամպ (ամպամած, ամպել, ամպրոպ), ամպիոն, բամպակ, ումպ (րմպելի, րմպանակ):

Պէտք է ճանչնայ ԱՆ մխտական նախածանցը, ուր Ն բաղաձայնը կրնայ Բ, Պ և Փ բաղաձայններէն առաջ շփոթուիլ Մ-ին հետ. – բիծ՝ անբիծ, բան (*գործ*)՝ անբան, բախտ՝ անբախտ, բնակելի՝ անբնակ, անբարբառ (*անխօս*), անբարոյ, անբաժան, անբաւ, անպատիւ, անպէտք, անփառունակ *և այլն*:

ՂԲ օրէնք. – աղբ, աղբակոյտ, Աղբակ, աղբերակ, աղբիս, աղբիւր, բողբոջ, եղբայր, Կողբ, ճողբել, ճողբիւն, ողբալ, Սեղբոս *և այլն*:

ԲՅՌ. – աղփում (*տկար*), յղփանայ, շաղփաղփել (*շատախօսել*), փաղփում, փաղփիլ, փողփողիլ:

ԶԲ օրէնք. – գրօսանք, գրաղիլ, սկիզբ *և այլն*, մինչ Ս կու գայ Պ և Փ բաղաձայններէն առաջ, ինչպէս՝ սպասել, ասպետ, ասպնջական, սփոփել, սփիտք *և այլն*:

ԲԲ օրէնք. – արբնայ, արբունք, արբանակ, բորբոքիլ, դարբին, լիրբ, Խարբերդ, հարբիլ, հարբոլս, ներբան, նութք, որք, որբութիւն, սուրբ, սրբան, քարբ *և այլն*:

ԲՅՌ. – Արփի, Արփիար, Երփն (*երփներանգ, երփնագիր*), թարփ (*ցանց ձկնորսի*), տարփանք, փրփուր:

ԱՓ օրէնք. – ափ, ափկից, ափսէ, ափսոս, գաղափար, դափ, դափնի, թափ, թափահարել, թարթափել, թափառիլ, թափուր, թափօր, լափել, խարխափիլ, ծափ, կա-

ռափ (զյուխ, գազաթ), կափարիչ, կափկափել, մրափել, յափշտակել, շօշափել, չափ, սարսափ, սափոր, սթափիլ, սօսափ, տարափ, փափուկ, փափաք *և այլն*: ԲՅՌ. – արևթ, արբայ, արար, բարախել, խարել (խարևբայ, խարուսիկ, խարէութիւն), ճարոտոր, շարաթ, տարատ: ԱԲ ունին նաև օտար *Ե գիրով գրուող անձնանուններն ու տեղանունները, ինչպէս՝* Արամելիք, Արգար, Արէլ, Արիսողոմ, Արրահամ *և այլն*:

ՈՓ *օրէնք*. – ամփոփ, դոփել, դոփիւն, խոփ, Ծոփք, կոփել, Շոփէն, շորշոփ, սփոփել, տրոփել, ցոփ, ցոփութիւն, փոփոխութիւն *և այլն*: Բացառութիւն են Յակոբ, Յոր, Չենոր, Սերոր, Բերոր *Ս. Գրային անունները*:

Փ-ով կը գրուի կրկնաոր բառերուն առաջին բաղադրիչը, որ առանձին գոյութիւն չունի, ինչպէս՝ սեփ-սեւ, ճեփ-ճերմակ, դեփ-դեղին, կափ-կանաչ *և այլն*:

## Գ, Բ Եւ Կ

1. – Օրինական պարագաներ.

ԷԳ *օրէնք*. – եղէգ, էգ, հէգ, մէգ, սէգ, վէգ, տէգ: ԲՅՌ. – Արեգ, Արեգակ, Արեգնագան:

ԵԲ ունին երևք, չորևք (շարթի), երբևք, թևք, ամէնուրեք, պասևք (*հրէական գատիկ*), մևք (*գրք*. մենք) բառերը:

ԷԲ *օրէնքին մէջ կը մտնեն.*

*ա. – Բայերու յոգն. Բ. դէմքի վերջաւորութիւնը, ինչպէս՝* կը վազէք, պիտի վազէք, վազէք, վազեցէք:

*բ. – ԷԲ ածանցը, որ կը կազմէ ծէսերու անուններ, ինչպէս՝* դոնբացէք, հիմնարկէք, նշանդէք, ջրօրհնէք, տնօրհնէք. նաև՝ արժէք, արժէքատր, կողպէք բառերը:

*գ. – ՉԷԲ ածանցը, որ վարձրի անուններ կը կազմէ. –* կաղանդչէք, կարողչէք, ներկողչէք, բանողչէք *և այլն*:

ԱԳ *կը գրուի բաական երկար շարք մը բառերու մէջ. –* ազի, ազահ, ազարակ, ազուգայ, անագ, արագ, աուգ,

ագռաւ, Բագարան, բագին, գագաթ, դրուագ, թագ, թագուիի, ծագիլ, կարագ, հագնիլ, հագուստ, ձագ, ձագար, ճագար, ճրագ, մագաղաթ, մարագ, յագենայ, յագուրդ, պագ, սագ, վագր, վայրագ, Վարագ *և այլն*: ԱԳ-ը կարելի չէ օրինաչափական նկատել, որովհետև անդին կան մեծ խումբ մը բառեր, որոնք ԱԲ ունին, ինչպէս՝ արացի, արսոր, արցան, արլոր, արաղաղ, առաքինի, առաքեալ, արտաքին, մաքի, թանաք, կարաւ, հաւարել, մաքառիլ, մետաքս, մարուր, մաքս, սայթաքիլ, ցամաք, բաղար, փափաք *և այլն*: Թարուն *և* թարնուիլ բառերը Գ-ով գրողներ կան տակաւին: Միսար *և* Սեղրաք անունները չշփոթել ԱԿ-ով վերջացող ածականէ գոյացած յատուկ անուններուն հետ՝ Հրակ, Խաժակ, Սևակ *և այլն*:

ՈԲ *կու գայ շատ բառերու մէջ, ինչպէս՝* ամորել, անամոր, ատոր, բորբոր, թոր, մորմոր, ոլոր, որ, չորիլ (*ծնկաչոր*), պոպոր, փորոր, փորր *և այլն*: Այս եւս օրինաչափական չէ, որովհետև անդին ՈԳ ունեցող բառերն այբիչ չեն, ինչպէս՝ գոգ, գոգցես, հոգ, հոգի, մոգ, յոգնակի, յոգնիլ, շոգ, շոգի, ոգի, ոռոգել, տոգորել *և այլն*:

ՆԳ *օրէնք*. – անգամ, անգղ, արձագանգ, գանգատ, եղունգ, երանգ, գանգ, գանգակ, թանգարան, ժառանգ, հանգանակել, հանգիստ, հանգոյց, հանգչիլ, հինգ, հրահանգ, մանգաղ, յանգիլ, նահանգ, նենգ, սրինգ, վարունգ: *Կարգ մը բառերու մէջ Ն-էն ետք եկող Բ-ն ածանց է. –* զէնք՝ զինել, լայնք՝ լայնութիւն, կեանք՝ կենարար, հանք՝ հանել, ջանք՝ ջանալ, վանք՝ վանական:

ԶԳ *օրէնք*. – ազգ, ազգութիւն, գգալ, գգայուն, գգեստ, գգոյշ, գգետնել, գգօն, լեգգի, Վագգէն *և այլն*, մինչ Ս կու գայ Կ *և* Բ *գիրերէն առաջ, ինչպէս՝* սկսիլ, սկիզբ, սկիտ, հսկայ, հսկիչ, սքանչելի, սքոշել *և այլն*:

ԲԳ *օրէնք*. – անարգ, արգանդ, արգահատանք, արգասիք, արգաւանդ, արգելք, բուրգ, գրգիտ, երգել, թարգմանել, կարգ, մարգ, մարգագետին, միրգ, յարգել, նարգիս,

Սարգիս, սիրամարգ, վարգել *և այլն*:

ԲՅՌ. – արքայ, արքեպիսկոպոս, ընդերք, թուրք, հերքել, հետաքրքիր, քրքիչ, սարք, սարքել: Բ *ածանցը կը ճանչցուի անկումով*. – գիրք՝ գրակալ, բարք՝ բարոյական, վարք՝ վարուիլ, շարք՝ շարել, բերք՝ բերել, խորք՝ խորունկ, ձիրք՝ ձրի, չարք՝ չարութիւն *և այլն*:

ՈՅԳ *օրէնք*. – առոյգ, գոյգ, նժոյգ, պատրոյգ, ստոյգ: ՈՅԲ վերջատրութեան մէջ Բ-ն ածանց է. – հաճոյք՝ հաճելի, գոյք՝ գոյակ: *Կայ նաև* ՈՅԲ *ածանցը*. – պիտոյք՝ պիտանի, կահոյք՝ կահ-կարասի, գահոյք՝ գահակալ *և այլն*: ԳԷՆ *վերջատրութիւնը անձնանուններու մէջ՝ Վազգէն, Գուրգէն, Բարգէն*:

ՂԳ *ունիւնք* հեղգ, հեղգամիտ, շողգամ, *իսկ* ՂԲ՝ աղքատ, աղքատութիւն, խաղք, ճեղք (ճեղքել), մեղք (մեղքնալ), տաղք: *Բառավերջի Բ-ն ածանց է*:

2.- Ինչպէ՞ս որոշել բառավերջի Գ եւ Բ գիրերը:

*Արմատ բառերու վերջատրութեան Գ եւ Բ տառերը որոշելու համար պէտք է դիմել ածանցումի եւ բարդումի. Գ-ը կը մնայ իրրև արմատական հնչիւն, իսկ Բ-ն կը կորսուի իրրև ածանց, ինչպէս՝*

միրգ՝ մրգաստան	դիրք՝ դրութիւն
կարգ՝ կարգապահ	աչք՝ աչագորկ
այգ՝ այգաբաց	ձեռք՝ ձեռնոց
հեղգ՝ հեղգութիւն	կրնք՝ կրեսուն
յանգ՝ յանգաւոր	հիմք՝ հիմնել
զանգ՝ զանգակ	հանք՝ հանել

*Այս օրինաչափութիւնը շահեկան է բաղաձայնէ մը ետք եկող դիրքին համար, որովհետև Բ-ն ձայնաւորէ ետք, մանաւանդ Ա եւ Ո ձայնաւորներէն ետք, կրնայ արմատական ըլլայ, ինչպէս՝ թանաք, հանաք, հաւաք, քաղաք, ցամաք, փափաք, անոք(կ), բորբոք, թոք, մորմոք, ոք *և այլն*:*

*Պէտք է գիտնայ նաև, որ վերի օրինաչափութիւնը բացարձակ չէ. Բ ածանցը կրնայ չիյնայ կարգ մը ածանցումներու եւ բարդութիւններու մէջ. – մեղք՝ մեղաւոր, բայց՝ մեղ-*

*քրնալ, կուրծք՝ կրծկալ, բայց՝ կրծքավանդակ, դիրք՝ դրութիւն, բայց՝ դիրքորոշում, աչք՝ աչալուրջ, բայց՝ աչքառու, վարք՝ վարմունք, բայց՝ վարքագիծ, վարքաբանութիւն:*

3.- Բ-ն քերականական մասնիկներու մէջ:

*ա. – Գրարարի մէջ Բ յոգնակերտը մնացած է տղայ՝ տղաք, նաև, իրրև հնարանութիւն, տիար՝ տիարք, ծնող՝ ծնողք բառերուն մէջ: Դարձեալ իրրև հնարանութիւն ԱՅԲ յոգնակերտը ունին տիկին՝ տիկնայք, կին՝ կանայք *և պարոն՝ պարոնայք բառերը: Տեղացիութիւն նշող բառերը ՆԵԲ յոգնակերտը կրնան փոխարինել Բ-ով. – տեղացի՝ տեղացիք, քաղաքացի՝ քաղաքացիք, հալէպցի՝ հալէպցիք *և այլն*:**

*բ. – Դերանուններու յոգնակիի վերջատրութիւններուն մէջ. – ես՝ մենք, դուն՝ դուք, ան՝ անոնք, իր՝ իրենք, որ՝ որոնք:*

*գ. – Բայի բոլոր դիմաւոր ձևերու վերջատրութեան, ուր կրկին յոգնակիի իմաստ կ'արտայայտէ. –*

- կը գրենք, կը գրէք, կը խօսինք, կը խօսիք,
- կը խաղանք, կը խաղաք.
- կը գրէինք, կը գրէիք, կը խօսէինք, կը խօսէիք,
- կը խաղայինք, կը խաղայիք.
- գրեցինք, գրեցիք, խօսեցանք, խօսեցաք,
- խաղեցանք, խաղեցաք.
- գրեցէք, խօսեցէք, խաղցէք.
- մի՛ գրէք, մի՛ խօսիք, մի՛ խաղաք...

*դ. – Ածանցները Բ կ'ունենան միայն (և ոչ Գ), ինչպէս՝ խաղ(ալիք), պաղատ(անք), լուծ(արք), խոնջ(էնք), տնօրհն(էք), վար(մունք), հաճ(ոյք), պատմ(ուածք), բարձ(ունք), աղօթ(ք), զարթ(օնք) *և այլն (տե՛ս ածանցներու բաժինը)*:*

Դ, Թ եւ Տ

1.- Օրինաչափական պարագաներ.  
ՆԴ *օրէնք*. – անդ, անդամ, աղամանդ, անդաստան, ան-

դորր, անդունդ, անդրանիկ, աանդ, բովանդակ, գև-  
րանդի, գնդակ, դանդաղ, եռանդ, ընդհանրապէս,  
ընդհանուր, թնդանօթ, թունդ, թոնդրակեցի, խանդ,  
խնդուք, խնդիր, ծնունդ, կարկանդակ, կենդանի, հան-  
դիպիլ, հնագանդ, հանդէս, հանդարտ, ճարմանդ, մա-  
նաանդ, մարմանդ, յանդգնիլ, յանդիմանել, պան-  
դուխտ, սերունդ, սնդիկ, սուրհանդակ, տաղանդ,  
տենդ, ցնդիլ, քանդակ, քանդել, օժանդակ *և այլն:*

*Բառավերջի Դ-ն կրնայ շփոթուիլ Տ-ին հետ, այսինքն՝*  
*արտասանուիլ Տ-ի պէս, ինչպէս՝ թունդ (ծայրայեղ,*  
*բոուն), պինդ, Հրանդ (ոմանք՝ Հրանտ), խանդ, խինդ,*  
*Կոնդ և այլն: Հունդ հին բառը արդէն հունտ կը գրենք:*  
*Գունդ (խումբ) բառը Տ-ով գրելով անոր կու տանք այլ*  
*իմաստ՝ գունտ (կլոր մարմին): Բաղադրութիւններու մէջ*  
*միշտ Դ է՝ երկրագունդ, գնդասեղ, գնդակ, գնդիկ,*  
*գնդապետ, գօրագունդ և այլն: Ն-էն ետք Տ ունին՝*  
*բանտ, գնտան, ընտանի, ժանտ, լինտ, կենտ, կրդ-*  
*մինտր, ման(տ)ր, սան(տ)ր, սանտ (ոմանք՝ սանդ):*

ՆԴ օրինաչափութեան մէջ կը մտնեն. - ՈՒՆԴ վերջա-  
ծանցը՝ ծնունդ, սերունդ, սնունդ. ԱՆԴԻ նախածանցը՝  
անդրադարձ, անդրաշխարհ, անդրշիրիմեան, Անդր-  
կովկաս. ԸՆԴ նախդիրը՝ ընդարձակ, ընդդէմ, ընդդի-  
մանալ, ընդդիմութիւն, ընդհանուր, ընդօրինակել, ընդ-  
գծել, ընդհատել, ընդմիշտ, ընդհարում *և այլն:*

ԲՅՌ. - ընթանալ (ընթացք, ընթացիկ, ընթացաւարտ),  
ընթեր (քով), ընթերցում, ընթրիք, թաղանթ, խենթ,  
կանթ, կանթեղ, շանթ. նաև՝ ԵՆԹ նախածանցով բա-  
ռերը. - ենթակայ, ենթասպայ, ենթադրել, ենթարկել:  
*Անշուշտ ասոր հետ պէտք չէ շփոթել Թ-ով սկսող*  
*բառերէն առաջ եկող ԱՆ նախածանցը՝ անթառամ,*  
*անթափանց, անթարթ, անթոյլատրելի, անթիւ և այլն:*

ԲԴ օրէնք. - արդ, արդար, արդուկ, արդի, բարդ, բերդ,  
բուրդ, դրդել, երդիք, երդում, թակարդ, խառնուրդ,  
խարդախ, խլուրդ, կարդալ, մարդ, յարդ, յորդ, ջարդ,  
վարդ, վրդովիլ, սարդ, սրդողիլ *և այլն:*

*Այս օրէնքին մէջ կը մտնեն բանի մը վերջածանցներ. -*  
*ԱՐԴ՝ գմբեթարդ, խորանարդ, կորնթարդ. ՈՒՐԴ՝ ա-*  
*ճուրդ, արձակուրդ (արձակել Քայէն), ժողովուրդ, խառ-*  
*նուրդ, խորհուրդ, յագուրդ. ՈՐԴ՝ բաժանորդ, ճամբորդ,*  
*յաճախորդ, որսորդ, վարորդ, քառորդ և այլն:*

ԲՅՌ. - ԲԹ-ով կը գրուին՝ Արթիկ, արթուն, երթալ,  
գարթնիլ, գուարթ, թարթել, թերթ, լուրթ, խորթ, խրթին,  
կարթ, կիրթ, հարթ, հորթ, մնրթ, շողոթորթ, շուրթ, որթ,  
սաղարթ, փարթամ, փերթ, փարթ (փորի ճարպ) *և այլն:*

ՂԹ օրէնք. - աղթարթ, գաղթ, թուղթ, մաղթել, յաղթել, շղթայ:  
ԲՅՌ. - խեղդել, յողդողդ:

ՋԴ օրէնք. - ազդ, ազդակ, ազդր, կազդուրել, Արտաազդ,  
Հրագդան, Որմիզդ, Վարագդատ *և այլն, մինչ Ս կու*  
*գայ Տ և Թ գիրերէն առաջ, ինչպէս՝ ստեղծել, աստղ,*  
*լաստ, համեստ, գովեստ, սքափիլ և այլն:*

ՅԹ օրէնք. - բոյթ, ժայթթել, խայթ, ճառագայթ, ճայթիլ, մայթ,  
մոյթ, փոյթ, հասոյթ, համոյթ, ճաշկերոյթ *և այլն:*  
ԲՅՌ. - այդ:

ՇՏ օրէնք. - անշուշտ, աշտարակ, աշտէ, հրեշտակ, յա-  
փրշտակել, պաշտպանել, պաշտել, պաշտօն, պար-  
կեշտ, շեշտ, վիշտ, միշտ, հրաժեշտ *և այլն:*  
ԲՅՌ. - ճիշդ, ճշդել, ճշդում:

ԺԴ ունինք իրրելու առանձին օրէնք, ինչպէս՝ Աժդահակ,  
աժդահայ, խոժդոժ, նժդեհ (պանդուխտ):

## 2, 3 և Ծ

1. - Օրինաչափական պարագաներ.

Ն2 օրէնք. - անձ, անձաւ, անձկութիւն, անձուկ, անձրել,  
զանձ, զանձանակ, ընձառիծ, ընձուղտ, թախանձել  
թանձր, ինձ, խանձել, հունձք, յանձնել, նախանձ,  
պղինձ, պապանձիլ, ստանձնել, սանձ, տանձ *և այլն:*  
ԲՅՌ. - առանց, զանց, յանցանք, անց(նիլ):

Ես դերանունին ինձմէ և ինձմով հոյովածներուն կը հակադրուի ինծի (նախկին՝ ինձ) հոյովածներ:

ԲՁ օրէնք.- արձագանգ, արձան, արձակ, արձակուրդ, բարձ, բարձր, դարձ, դարձդարձիկ, դերձան, լորձունք, խորձ, Համբարձում, հանդերձարան, ձորձ, մարձում, մերձ, յարձակում, յորձանք, որձ, ուղերձ, վարձք, վարձել, վրձին, փորձ, փորձանք և այլն:

ԲՅՌ.- ապաթարց, արցունք, Արցախ, ընթերցում, հարց, ուրց, մուրց, մրցում, պախուրց, տրցակ, բուրց:

ՂՁ օրէնք.- ակադձուն, Աղձնիք, ատաղձ, բաղձալ, գեղձ, նշագեղձ, գուղձ, դեղձ, դեղձանիկ, ըղձալ, իղձ, հեղձամահ, հեղձամղձուկ, մաղձ, մղձաւանջ, փղձկիլ և այլն:

ԲՅՌ.- քաղց(ածութիւն), քաղցր, աղցան (աղ - ցան), յնղց (յնցուն, առի):

ՅՆ օրէնք.- բառին սկիզբը՝ Ն-էն առաջ, ինչպէս՝ ցնցոտի, ցնցուղ, ցնցել, ցնորք, ցնորիլ, ցնդիլ, ցնծալ: Չնծաղիկ բառը այլ կառոյց ունի (ծին-ծաղիկ):

2.- Յ-ն քերականական մասնիկներու մէջ:  
Յ-ն հին հայերէնի մէջ Բ յոգնակերտ մասնիկին յարացուցալին տարրերակն է, կը յայտնուի սեռական-տրական հոյովածներուն մէջ: Նոյն օրինաչափութիւնը մասամբ կը գործէ արդի հայերէնի մէջ հետևեալ պարագաներուն.

ա. - Դերանուններուն մէջ՝ ոնք/ոնց փոփոխութեամբ. - որոնք՝ որոնց, որոնցմէ, որոնցմով. անոնք՝ անոնց, անոնցմէ, անոնցմով. իրենք՝ իրենց, իրենցմէ, իրենցմով:

բ.- Տղաք՝ տղոց, տղոցմէ, տղոցմով. մարդիկ՝ մարդոց, մարդոցմէ, մարդոցմով յոգնակիներուն մէջ: Նոյն ձևով կարգ մը բառերու յոգնակի սեռականը ագ, անց, ոց, ից վերջաւորութիւններով կը գտնենք իրրև բարացած ձևեր կամ հնարանութիւն՝ որոշ պարագաներու, ինչպէս՝ ծնողաց հանդէս, չարեաց փոքրագոյնը, տիկնանց մասնաճիղ, արանց և կանանց հագուստեղէն, աղջկանց վարժարան, օրիորդաց միութիւն, ուսուցչաց և պաշտօնէից ժողովներ, թարգմանչաց տօն, կենաց (կենսօրին) ծառ, հարսանեաց

խնճոյք, յարգանաց հաւաստիքը, եպիսկոպոսաց և վարդապետաց, ռուսաց և թրքաց, արքայից (արքաներու) Արքայ, հրէից (հրեաներու) գառիկ, քրիստոնէից (քրիստոնեաներու) տօն, հայոց պատմութիւն, Գիրք Ծննդոց, հնոց և նորոց (հիներու և նորերու) և այլն:

գ.- ՈՒԹԻՒՆ ածանցով գոյականներու յոգնակի սեռական-տրական ձևին մէջ իրրև հնաձև տարրերակ.- իշխանութիւն՝ իշխանութիւններու/իշխանութեանց, հաստատութիւն՝ հաստատութիւններու/հաստատութեանց, մուրթիւն՝ մուրթիւններու/մուրթեանց և այլն:

դ.- Յ կայ մականուններու ԵԱՆՅ հնատիպ վերջաւորութեան, ինչպէս՝ Մալխասեանց, Ղևոնդեանց, Արամեանց, Մինասեանց. հաւարական անուններ կազմող ԱՆԲ/ԱՆՅ, ԵՆԲ/ԵՆՅ, ՈՆԲ/ՈՆՅ վերջաւորութիւններուն մէջ.- Վարդանանք՝ Վարդանանց, Սարգիսենք՝ Սարգիսենց, Մարկոսենք՝ Մարկոսենց, Սօսիենք՝ Սօսիենց, Ռաֆֆիենք՝ Ռաֆֆիենց, պապոնք՝ պապոնց, մամոնք՝ մամոնց և այլն:

Յ կայ (և ոչ թէ 2) նաև բայական մասնիկներու մէջ.

ա.- ԵՅՆԵԼ, ԱՅՆԵԼ կամ ՅՆԵԼ ածանցը չէզոք բայերէն պատճառական բայեր կը կազմէ. - քայլի՝ քայլեցնել, վազել՝ վազեցնել, խօսիլ՝ խօսեցնել, սահիլ՝ սահեցնել, տառապիլ՝ տառապեցնել, պառկիլ՝ պառկեցնել, նստիլ՝ նստեցնել, պտտիլ՝ պտտեցնել, յալ՝ յալցնել, եռալ՝ եռացնել, յաղալ՝ յաղցնել, յանդալ՝ յանդացնել և այլն: Սոսկածանցաւոր բայերը ՅՆԵԼ մասնիկը կ'առնեն սոսկածանցը կորսնցնելով. 2.- փախչիլ՝ փախցնել, թոչիլ՝ թոցնել, դպչիլ՝ դպցնել. Ն.- մեռնիլ՝ մեռցնել, բուսնիլ՝ բուսցնել. ԱՆ.- քնանալ՝ քնացնել, հեռանալ՝ հեռացնել.- ԵՆ՝ մօտենալ՝ մօտեցնել, մերձենալ՝ մերձեցնել:

2 ունիք դառնալ՝ դարձնել, համբառնալ՝ համբարձում:

բ.- ԱԼ խումբի բայերուն ներկայ (ող), յարակատար (ած) և վաղակատար (եր) դերբայները կը կազմուին Յ հիմքին վրայ.

խաղալ՝ խաղցող, խաղցած, խաղցեր.



*հեռանայ՝ հեռացող, հեռացած, հեռացեր:*

*գ. - Անցեալ կատարեալ ժամանակի մէջ Յ-ն գոյութիւն ունի բայերու մեծ խումբի մը մէջ.*

ՎԱԶԵԼ (եյ՝ պարզ)	վազեցի, վազեցիր, վազեց. վազեցինք, վազեցիր, վազեցին:
ԽՕՍԻԼ (իլ՝ պարզ)	խօսեցայ, խօսեցար, խօսեցաւ. խօսեցանք, խօսեցար, խօսեցան:
ԽԱՂԱԼ (այ՝ պարզ)	խաղացայ, խաղացար, խաղացաւ. խաղցանք, խաղցար, խաղցան:
ՄԵՐՉԵՆԱԼ (սոսկանծ.)	մերձեցայ, մերձեցար, մերձեցաւ. մերձեցանք, մերձեցար, մերձեցան:
ԽՄՅՆԵԼ (պատճառական)	խմցուցի, խմցուցիր, խմցուց. խմցուցինք, խմցուցիր, խմցուցին:

*Նոյնպէս հրամայական լեզուակի յոգնակիներուն մէջ. - վազել՝ վազեցէ՛ք, խօսիլ՝ խօսեցէ՛ք, խաղալ՝ խաղցէ՛ք, խմցնել՝ խմցուցէ՛ք:*

*դ. - Վերջածանցներու մէջ միայն Յ կը գրուի (և ոչ Չ) ինչպէս՝ գիղ(ացի), հարսն(ցու), հայն(ացք), հիւանդ(անոց), խարտ(ոց), սրտ(անց) (տե՛ս ածանցներու բաժինը):*

## Ջ, Չ և Ը

1. - Օրինաչափական պարագաներ.

**ԲՋ օրէնք.** - անուրջ, արջ, արջառ, արջասպ, բաղարջ, Դերջան, Լըջանիկ, լուրջ, կամուրջ, մորջ, մրջին, յորջորջել, շուրջ, շրջան, որջ, վերջ, վերջանալ, բուրջ *և այլն:*  
**ԲՅՌ.** - փարչ, չարչի, տարչին *օտար բառերը:* Չարչարել բայը չար բառի կրկնատրոն է: Միւս պարագաները ձայնատրի կորուստով կը բացատրուին. - վարիչ՝ վարչութիւն, ոսկերիչ՝ ոսկերչութիւն:

**ՆՋ օրէնք.** - լանջ, խխունջ, խոնջայլ, խրխինջ, մունջ, մըրմունջ, յօրանջել, նինջ, նարինջ, շշունջ, ջինջ, ջնջել, տրտունջ, վրինջ, փունջ *և այլն:*

**ԲՅՌ.** - գնչու, դունչ, թանչ (*աղիքի խանգարում*), թանչել (*հեւար*), ինչ (ոչինչ, ոչնչանալ), մանչ, պինչ (*քիթի ծակերը*), տննչ: *Կարգ մը բնածայնութիւններ կը վերջանան ԻՆՉ ածանցով և ունին Ռ. - կոինչ (կոիչիւն, կոնչել), գոինչ (գոնչիւն, գոնչել), ճոինչ (ճոնչիւն, ճոռնչել), խոինչ (խոնչիւն, խոնչել): Միւս բնածայնութիւններն ալ Ռ և Չ կ'ունենան (միասնաբար կամ անջատաբար), ինչպէս՝ բառաչել, հառաչել, կանչ, բացագանչել, կչկըչալ, հունչ, հնչիւն, շունչ, շնչել, պոռչտալ, պոռալ, թառանչ (*ցափ հեծեծանք*), գոռալ, փոնգտալ, փոռտալ: Բայց Ջ-ով և Բ-ով (միասնաբար կամ անջատաբար) կը գրուին ալ շարք մը բնածայնական բառեր, ինչպէս՝ վրինջ (վրնջել, վրնջիւն), խրխինջ, (խրխնջալ), յօրանջ (յօրանջել), հաջել (հաջիւն), շշունջ (շշնջալ), մըմունջ (մըմնջել), տրտունջ (տրտնջալ) *և այլն:**

**ՂՋ օրէնք.** - աղջամուղջ, աղջիկ, առողջ, բղջախոհ, գաղջ, գեղջուկ, գեղջկական, Լեղջերու, Լեղջիր, գղջալ, հաղարջ, շեղջ, ողջ, ողջոյն, չղջիկ, ռնգեղջիր *և այլն:*  
**ԲՅՌ.** - գեղչ (գեղչել, գեղչում), փախչիլ:

2. - Ջ և Չ գիրերը մասնիկներու մէջ:

**ա.** - ՈՋ հոլովում. - ՈՋ-ը սևռական հոլովի մասնիկ է. անոր հիմքին վրայ կը կազմուին գոյականին յաջորդ հոլովները.

Քոյր	բրոջ	բրոջմէ	բրոջմով (բոյրով)
------	------	--------	---------------------

ՈՋ հոլովումին կ'ենթարկուին տէր, ընկեր, տագր, բոյր, տալ, աներ, կեսուր, կին *և ասոնցմով կազմուած բարդ բառերը.* - տիկին՝ տիկնոջ, հօրաբոյր՝ հօրաբրոջ, դասընկեր՝ դասընկերոջ, հողատէր՝ հողատիրոջ *և այլն:* Ասոնցմէ տագր, ներ, տալ *և* կեսուր բառերը կրնան հոլովուիլ նաև Ի հոլովումով:

**բ.** - Չ ժխտական մասնիկը. - Չ-ն ժխտական մասնիկ է խոնարհումի մէջ: Ուղղակի կը կցուի բոլոր դերբայներուն

և բայական ձևերուն սկիզբը, թէև, եթե բայը բաղաձայնով սկսի՝ «չը» կամ «չի» կը լսուի:

դերբայներուն հետ.

- գրել՝ չգրել, գրած՝ չգրած, գրելու՝ չգրելու, գրելիք՝ չգրելիք, գրող՝ չգրող.

- Դիմատր բայերուն հետ.

գրեցի՝ չգրեցի, գրեցիր՝ չգրեցիր, գրեց՝ չգրեց...

գրեմ՝ չգրեմ, գրես՝ չգրես, գրէ՝ չգրէ...

պիտի գրեմ՝ պիտի չգրեմ, պիտի գրես՝ պիտի չգրես...

պիտի գրէի՝ պիտի չգրէի, պիտի գրէիր՝ պիտի չգրէիր...

կամ չկամ, կաս՝ չկաս, կայ՝ չկայ...

կայի՝ չկայի, կայիր՝ չկայիր, կար՝ չկար...

եմ՝ չեմ, ես՝ չես, է՝ չէ, ենք՝ չենք, էք՝ չէք, են՝ չեն:

«Կը» ցուցիչով ժամանակներու մխտականը կը կազմուի էական բայի մխտականով և յատուկ դերբայով մը.

կը վազեմ՝ չեմ վազեր կ'երազեմ՝ չեմ երազեր

կը վազես՝ չես վազեր կ'երազես՝ չես երազեր

կը վազէ՝ չի վազեր կ'երազէ՝ չ'երազեր

կը վազենք՝ չենք վազեր կ'երազենք՝ չենք երազեր

կը վազէք՝ չէք վազեր կ'երազէք՝ չէք երազեր

կը վազեն՝ չեն վազեր կ'երազեն՝ չեն երազեր

կը վազէի՝ չէի վազեր կ'երազէի՝ չէի երազեր

կը վազէիր՝ չէիր վազեր կ'երազէիր՝ չէիր երազեր

կը վազէր՝ չէր վազեր կ'երազէր՝ չէր երազեր

կը վազէինք՝ չէինք վազեր կ'երազէինք՝ չէինք երազեր

կը վազէիք՝ չէիք վազեր կ'երազէիք՝ չէիք երազեր

կը վազէին՝ չէին վազեր կ'երազէին՝ չէին երազեր

գ.- 2 սոսկածանցը. - 2 սոսկածանցը կը գործէ միայն երեք բայերու մէջ՝ փախչիլ, թռչիլ, դաչիլ: Վերջինը ունի նաև դպնալ ձևը: Արմատական հնչիւն կը գիտակցուի հանգչիլ բառին մէջ, իսկ սառչիլ և կորչիլ հին ձևերը կը գործածուին սառիլ և կորսուիլ (արեւլ.՝ կորիլ) ձևերով: Ուրեմն հանգչիլ, սառիլ և կորսուիլ բայերը ոչ սոսկա-

ծանցաւոր, այսինքն՝ պարզ բայերու պէս կը խոնարհուին:

Փախչիլ, թռչիլ, դաչիլ բայերու 2 սոսկածանցը կը կորսուի յարակատար (ած) և վաղակատար (եր) դերբայներուն մէջ. - փախչիլ՝ փախած, փախեր, թռչիլ՝ թռած, թռեր, դաչիլ՝ դպած, դպեր: Կը կորսուի նաև սահմանական եղանակի անցեալ կատարեալ ժամանակին մէջ՝ փախայ, փախար, փախաւ, փախանք, փախարք, փախան, և հրամայական եղանակին մէջ՝ փախի՛ր, փախե՛ք:

Այս երեք բայերը միւս ժամանակներուն մէջ կրնան խոնարհուիլ սոսկածանցով կամ առանց անոր. - կը փախչիմ/կը փախիմ, պիտի փախչիմ/պիտի փախիմ, մի՛ փախչիր/մի՛ փախիր և այլն:

դ.- Վերջածանցներու մէջ միայն 2 կը գրուի (և ոչ Զ) ինչպէս՝ գր(իչ), վայել(ուչ), առհաւատ(չեայ), կարող(չէք) և այլն, նոյնպէս՝ 2 նախածանցը. - չտես, չբեր, չունևոր, չաստուած, չկամ (տես՝ ածանցներու բաժինը):

## Զ և Ս

Այս երկու բաղաձայնները չեն շփոթուիր, բացի պայթականներէն առաջ ինկած դիրքին մէջ, ուր Զ-ն կ'արտասանուի Ս-ի պէս. Զ կու գայԲ, Գ, Դ բաղաձայններէն առաջ, իսկ Ս կու գայ Պ, Փ, Տ, Թ, Կ, Բ բաղաձայններէն առաջ (տես՝ համապատասխան պայթականներու բաժինները):

Պէտք է գիտնայ նաև, որ ԹՍ կապակցութիւնը բառերու մէջ կ'արտասանուի կրկնակի Յ-ի պէս՝ վաթսուն և ութսուն:

Զ-ն հին հայերէնի մէջ հայցական հոլովի նախդիր էր. ներկայիս բարացած ձևով հանդէս կու գայ կցական բարդութիւններու՝ չէգոք (չէ գ-ոք), մէկգմէկ (մէկ գ-մէկ), հետըզհետէ (հետ գ-հետէ), ինչպէս և կարգ մը դերանուններու հայցական հոլովի կազմութեան մէջ. - ով՛ գով, գիրար (իրար), այն՛ զայն, անոնք՛ զանոնք, ինք՛ զինք և այլն:

## Ժ եւ Ծ

Ժ-ն կրնայ շփոթուիլ Ծ-ին հետ բաղաձայնէ առաջ իր դիրքին մէջ. - Աժդահակ, աժդահայ, դժխեմ, խուժդուժ, նժդեհ (պանդուխտ), ուժգին, ուժգնօրէն, պժգալ:

ԴԺ եւ ՏԺ ժխտական նախածանցները չեն շփոթուիր. - դժգոհ, դժկամ, դժբախտ, տժգոյն: ԹԾ կայ թշշալ, թշուատ (խեղճ), թշնամի բառերուն մէջ: Դժուար (ոչ դիրքին) ու թշուատ բառերը նմանաձայնութիւններ են:

## Խ եւ Ղ

Խ եւ Ղ բաղաձայնները գրեթէ չեն շփոթուիր, ինչպէս՝ խաղաղ, խաղող, խաղ, մխել, մղել, օ խ, օղ, ա խ, աղ, գնխ, գեղուլ, ցնխ, ցեղ, պնխ, պեղել, սողալ, սոխ, վախ, վաղ, տառնխ (ձուկ մը), տառեղ (թռչուն մը) եւ այլն:

Ղ գիրը բառին սկիզբը կը հանդիպի քանի մը բառերու մէջ միայն, ինչպէս՝ դափամա, դեկ, դենջակ (գոգնոց), դրկել, դրուշ, դօղանջել, դօղիլ (պահուրտի):

Ղ-ը Խ-ին հետ կրնայ շփոթուիլ ՂԲ, ՂՓ, ՂԳ, ՂԶ, ՂԾ, ՂԸ, ՂԹ օրինական պարագաներուն մէջ (տե՛ս համապատասխան բաղաձայնները):

Խ եւ Ղ գիրերը Տ-էն առաջ չեն շփոթուիր՝ ուղտ - ոխտ, աղտ - ախտ: ՂՏ ունինք եղտոր, գաղտնի, գաղտուկ, խտղտել, կեղտ, ուղտ, տաղտուկ, տղտղել եւ այլն: Տ-էն առաջ Խ տեղի շատ կը հանդիպի, ինչպէս՝ ապուխտ, բախտ, գխտոր, դժբախտ, դրախտ, երախտիք, գմրուխտ, թախտ, ժխտել, լախտ, հիւծախտ, խախտել, խրոխտ, մխտել, Շահանդուխտ, ուխտ, պանդուխտ, Սանդուխտ, սխտոր, վխտալ եւ այլն:

ՂԸ օրէնք. - խեղճ, խեղճուկ, խեղճանալ, խիղճ, խղճամիտ, աղճատել. Ճ-էն առաջ Խ ունինք ճախճախտ, յախճապակի, նախճիր, վախճան: Ասոնց հետ կրնան

շփոթութեան մէջ իյնալ ՂԶ օրէնքի բառերը (տե՛ս Ձ): Ղ-ն Խ-ի հետ կրնայ շփոթուիլ նաեւ ԲԱՂ (կից, միասին, իրարու հետ) նախածանցին մէջ՝ բաղիիսել, բաղատել, դաղատական, բաղատութիւն եւ այլն: Սանդուղ/սանդուղք բառը կը գրուի նաեւ սանդուխ ձևով: Նախընտրելի է գործածել սանդուղք ձևը: Հին հայերէնի բողխ արմատը արդի հայերէնի մէջ կը գրուի բուխ ձևով՝ բխիլ, սրտաբուխ, յորդաբուխ:

## Հ եւ Յ

1.- Հ եւ Յ բաղաձայնները:

Հ գիրը կը պահէ իր հնչիւնը բառի գրեթէ բոլոր դիրքերուն մէջ, ինչպէս՝ հանգիստ, հարաւ, ահա, ահ, մահ, գահ, ազահ եւ այլն: Հ բաղաձայնը չ'արտասանուիր Բ-էն ետք կարգ մը բառերու մէջ, ինչպէս՝ խորհուրդ (խորհրդական, խորհրդակցի, խորհրդակցութիւն), աշխարհ (աշխարհիկ, աշխարհական, աշխարհագրութիւն, աշխարհամաս), շնորհ (շնորհել, շնորհիւ, շնորհագարդ): Օրհնել, (օրհնութիւն, օրհնանք) բառին մէջ Բ-ն կապակցութիւնը կ'արտասանուի «րթ»: Նիրի եւ ժպիրի բառերուն վերջը կը հնչուի: Ընդհանուր (ընդհանրապէս, ընդհանրական, ընդհանրացնել) բառին մէջ նոյնպէս Հ-ն չ'արտասանուիր:

Հ հնչիւնի ոլորտը ընդարձակուած է Յ գիրին շնորհիւ, որ բառին սկիզբը Հ կ'արտասանուի, ինչպէս՝ յագուրդ, յախտոն, յածիլ, յաղթել, յաճախ, յամառ, յամենալ (ուշանալ), յամր (դանդաղ), Յայսմաուրթ, յանցանք, յաչաղանք (նախանձ), յապաղիլ (ուշանալ), յապտել (կրճատել), յաջող, յառաջ, յառել (սեւեռել), յառնել (յարութիւն առնել), յասմիկ, յատակ, յատել (յօտել), յատուկ (յատկութիւն), յաւերժ, յաւէտ, յիմար, յիշատակ, յոգնիլ, յոխորտալ, յոյս, յորդ, յուզում, յստակ, յօդ, յօրանջել եւ այլն:

Բառը բարդութեան մէջ մտնելէ կամ նախածանց ստա-

նայէ ետք կը պահէ Յ գիրը, ինչպէս՝ անյաջող, անյոյս, առյաւէտ, կենսայորդ, մեծայարգ, ակնյայտ, բազմայաղթ, բարձրայարկ, սիրայօժար և այլն:

Հինգ թուականին տասնատրը յիսուն է:

Միայն որոշ պարագաներու կարելի է որոշել, թէ բառին սկիզբը ո՞ր է, ո՞ր՝ Յ, իսկ մեծ մասը պէտք է սերտողութեամբ իւրացնել:

2.- Յ-ի օրինաչափական պարագաները:

ա.- Յ կը գրուի փոխառնայ յատուկ ու հասարակ բաներուն սկիզբը կը համապատասխանէ օտար լեզուներու յ և ջ գիրերուն, ինչպէս՝ Յարէթ, յակինթ, Յակոբ, Յասմիկ, Յիսուս, յրելեան, Յովակիմ, Յովասափ, Յովհաննէս, Յովնաթան, Յովնան, Յովսէփ, Յուդա, Յուլիս, Յունաստան, Յունիս, Յունուար, Յորդանան և այլն:

բ.- Յ-ն շատ բառերու սկիզբը ածանց է և որ կարելի է կռահել, ինչպէս՝ յառաջ, յառաջդիմել, յառաջադէմ (առաջ բառէմ), յարգել, յարգելի, մեծայարգ (արգ արմատէմ մեծարգոյ), յափշտակել, յափափել (ափ բառէմ), յետ, յետոյ, յետագայ (ոմանք՝ հետագայ, իրրել «հետևող»), յետադաս, յետադիմել (ետ բառէմ), յիրաւի (իրաւ բառէմ), յուղարկատրութիւն (ուղարկել բառէմ), յուշագրել, յուշել, յուշամատենան, յուշարար (ուշ միտք բառէմ, ունինք ուշիմ՝ յսելացի), յօրինում, յօրինուած (օրէնք բառէմ), յանձնել, յանձնախումբ, յանձնաժողով (անձ բառէմ), յանելում, յանելուած (անելի բառէմ) և այլն:

գ.- ՅՂ օրէնքը բացարձակ է, ինչպէս՝ յղել, յղկել, յղկիչ, յղի, յղանայ, յղացում, յղութիւն, յղփանայ, յղփասէր, յղացք: Բաղաձայնէ առաջ, բառասկզբին, ունինք նաև յտակ բառը (յտակութիւն, յտակատես, յտականայ): Միւս բաղաձայներէն առաջ միշտ է է, ինչպէս՝ հմայել, հպարտ, հպիլ, հսկայ, հսկում, հրաժարիլ, հրապարակ և այլն:

3.- Յ գիրին երեք արժէքները:

Յ գիրը ունի երեք արժէքներ.

ա.- Բաղաձայն, կը համապատասխանէ Հ գիրին, և ինչպէս տեսանք՝ կը հանդիպի միայն բառին սկիզբը.՝ յամառ, յամբ (դանդաղ), յննիլ, յիշել, յուշ, յղկել և այլն:

բ.- Կիսաձայն, որ կը գրուի բառին մէջ ձայնատրէ ետք և միավանկ բառերու վերջը.՝ կայան, կայնիլ, գոյական, իյնայ, հայ, ճայ, բայ, գոյ, խոյ, Նոյ և այլն: Միավանկ բառերը ե՛ր յոգնակերտը և Ս, Դ, Ը յօղերը առնելով փոփոխութիւն չեն կրեր.՝ հայ՝ հայեր, այդ հայը, իմ ճայս, բու բայդ, թէ և Ս և Դ յօղերէն առաջ անգիր Ը կը յտուի:

գ.- Անձայն, որ կը հանդիպի բազմավանկ բառերու վերջատրութեան՝ ԱՅ և ՈՅ ձևով.՝ վկայ, բացակայ, վրայ, յետոյ, ի վերջոյ, հաւաքածոյ և այլն: Այս բառերը Ս, Դ, Ն յօղերը և ՆԵՐ ու Բ յոգնակերտները առնելով կը կորսնցնեն Յ-ն.՝ գուլպայ՝ իմ գուլպաս, բու գուլպադ, գուլպան, գուլպաներ. տղայ՝ իմ տղաս, բու տղադ, տղան, տղաք և այլն:

## Մ Ե Ն

Մ և Ն անշփոթելի են առհասարակ, միայն Մ-ն Ն-ի պէս կ'արտասանուի Բ, Պ և Փ բաղաձայններէն առաջ (տն՛ս համապատասխան բաժինները):

2.- Ն արմատական հնչիւնը:

Հին հայերէնի մէջ բաղաձայն+Ն վերջատրութիւն ունեցող մեծ թիւով բառեր կային: Ն-էն առաջ գաղտնավանկ Ը կը յտուէր: Այս բառերը նոր հայերէնին անցած են առանց Ն-ի և գաղտնավանկ Ը-ի.՝ ամառն՝ ամառ, ձմեռն՝ ձմեռ, լեռն՝ լեռ, դուռն՝ դուռ, մուկն՝ մուկ, թոռն՝ թոռ, գառն՝ գառ, եզն՝ եզ, ոտն՝ ոտ(ք), ձեռն՝ ձեռ(ք) և այլն: Եօթը, ինը, տասը թուականներու վերջայանգի Ը-ը յառաջացած է Ն-էն առաջ գտնուող գաղտնավանկ Ը-էն (եօթն, ինն, տասն): Ասոնց

համարանութեամբ այ ուր: Բացի ինը թուականէն, միսերը կրնան գրուիլ նաև առանց Բ-ի՝ կօթ, ութ, տաս: Բանի մը բառեր կը պահեն արմատական Ն հնչիւնը՝ յատն, խտուն, դառն, բուն:

Կարգ մը միավանկ բառեր յոգնակին կը կազմեն ՆԵՐ մասնիկով, ուր Ն արմատական հնչիւն էր գրաբարի մէջ. - լեռ(ն)՝ լեռներ, թոռ(ն)՝ թոռներ, ծոռ(ն)՝ ծոռներ, գառ(ն)՝ գառներ: Արմատական Ն ունեցող կարգ մը բառեր այ յոգնակին կրնան կազմել երկու ձևով ալ. - հարս՝ հարսներ/հարսեր, դուռ՝ դռներ/դուռեր, մատ՝ մատներ/մատեր, եզ՝ եզներ/եզեր, միս՝ միսներ/միսեր, բեռ՝ բեռներ/բեռեր *և այլն*: Ն-ով ձևերէն կարելի է խուսափիլ:

- Բարդ *և* ածանցաւոր բառեր կազմելու ատեն արմատական Ն-ն շատ անգամ երևան կու գայ. - լեռ՝ լեռնալանջ (լեռն-ա-լանջ), դուռ՝ դռնփակ (դուռն-փակ), ձուկ՝ ձկնորս (ձուկն-որս), մուկ՝ մկնիկ (մուկն-իկ), մկնղեղ (մուկն-ղեղ), ակնարոյժ (ակն-ա-րոյժ), ոտնաման (ոտն-աման), ձեռնածալ (ձեռն-ա-ծալ), մատնանշկ (մատն-ա-նշկ), ողնայար (ողն-ա-յար), ամառնային (ամառն-ային), ձմեռնային (ձմեռն-ային), սառնարան (սառն-արան), գառնուկ (գառն-ուկ), եզնարած (եզն-արած) *և այլն*:

3. - Ն-ն սուկածանցներու մէջ:

Սուկածանցաւոր կը կոչուին այն բայերը, որոնք ԵԼ, ԻԼ, ԱԼ մասնիկներէն առաջ բային հիմքին վրայ ունին Ն, ԱՆ, ԵՆ *և* Չ ածանցները: Ասոնք սուկածանց կը կոչուին: Ն՝ տեսնել, հասնիլ, գտնել, մտնել, մեռնիլ, հատնիլ, գիրնայ, ճանչնայ, երկննայ, արթննայ, սպաննել, կլկլ (կլ-անկ) > կլնկ > կլկ) *և այլն*:

ԵՆ՝ մօտենայ, մերձենայ:

ԱՆ՝ հեռանայ, սաստկանայ, բարկանայ, վերանայ, գոհանայ, բնկերանայ, հիւանդանայ, առողջանայ *և այլն*:

Բայի կարգ մը ձևերուն մէջ սուկածանցները կը մնան, որիչներու մէջ կը կորսուին: Կը կորսուին յարակատար

(ած) *և* վաղակատար (եր) դերբայներուն մէջ. - գտնել՝ գտած, գտեր. սպաննել՝ սպանած, սպաներ, հասնիլ՝ հասած, հասեր, մեռնիլ՝ մեռած, մեռեր: ԱԼ խումբի բայերը սուկածանցը կը կորսնցնեն նաև ներկայ դերբային մէջ (ճանչնայ՝ ճանչցած, ճանչցեր, ճանչցող): Բայի դիմաւոր ձևերուն մէջ սուկածանցները կը կորսուին սահմանական եղանակի անցեալ կատարեալ ժամանակին (գտնել՝ գտայ, գտար, գտաւ. մեռնիլ՝ մեռայ, մեռար, մեռաւ. ճանչնայ՝ ճանչցայ, ճանչցար, ճանչցաւ) *և* հրամայական եղանակին մէջ (գտնել՝ գտի՛ր, սպաննել՝ սպանէ՛, մեռնիլ՝ մեռի՛ր, ճանչնայ՝ ճանչցի՛ր):

Նոյն ձևով ալ ելլել բայի երկրորդ Լ գիրը (<Ն) կը կորսուի վերոնշեալ դիրքերուն մէջ. - ելլել՝ ելած եմ, ելեր եմ. ելայ, ելար, ելաւ... ել, ելէ բ:

## Ռ ԵՐ

Ռ *և* Ր գիրերը հին հայերէնի *և* արեւելահայերէնի մէջ յտակօրէն տարբեր հնչիւններ են, բայց արևմտահայերէնի մէջ նոյնացած են *և* ուղղագրական դժուարութիւններ կը պատճառեն:

Ռ *և* Ր գիրերը կը հանդիպին բառի բոլոր դիրքերուն մէջ: Միայն որոշ պարագաներ օրէնքներով կարելի է որոշել, իսկ մեծ մասը պէտք է սերտողութեամբ իւրացնել:

1. - Օրինական պարագաներ:

ա. - Բառին սկիզբը միշտ Ռ կը գրենք, ինչպէս՝ ուզմիկ, ուզմաճակատ, ուսիվիրայ, ուսեան, ուսմիկ, ուստին, ուսնիկ, ուսմը, ուսարկու, ուսնգ, ուսպ, Ռ-ումանիա, Ռ-ուսաստան, Ռ-աֆֆի, Ռ-աֆայէլ, Ռ-ուպէր *և այլն*: Ոմանք յետին փոխառութիւնները Ր-ով կը գրեն. թելադրելի է պահել ստանդական գրելակերպը:

ԲՅՌ. - բուպէ, բոք (մանելիք) *և* հայ վիպասան՝ Ռաֆֆի: ք. - Արմատական բառերու մէջ Ն բաղաձայնէն առաջ

*միջտ* Ռ կր գրուի: Այսպէս՝

1. - Առնէտ, խոնջայլ, հոնդիւն, խառն, խուռն, բուռն, դառն, եղեռն, լիսեռն *և* այլն, *ինչպէս նաև ասոնցմէ կազմուած բարդ ու ածանցաւոր բառեր, ինչպէս՝* բռնի, բրոնօրէն, բռնաբարկ, բռնադատել, դառնանայ, դառնահամ, խառնել, խառնիճաղանճ, խառնակիչ, խառնիխուռն, խուռներամ, ձմեռնային, եղեռնական *և* այլն:

2. - *Բառավերջի Ն-ն կորսնցուցած արմատական բառեր.* - ամառ, բուռ (*կայ նաև* բուռն *ածականը՝ «սաստիկ»*), բեռ, գառ, դուռ, թոռ, լեռ, ձեռ(ք), ձմեռ, նուռ, սառն՝ սառ *և* այլն, *բայց այս բառերը ածանցումի կամ բարդումի ենթարկելու ատեն Ն-ն մէջտեղ կ'նկէ.* - ամառ՝ ամառնային (*ամառն-ային*), ան՝ առնել (*առն-ել*), բեռ՝ բեռնայ, բեռնակիր (*բեռն-այ, բեռն-ա-կիր*), գառ՝ գառնուկ, գառնարած (*գառն-ուկ, գառն-արած*), դուռ՝ դռնապան (*դուռն-ա-պան*), թոռ թոռնիկ, թոռնուհի (*թոռն-իկ, թոռն-ուհի*), լեռ՝ լեռնային (*լեռն-ային*), ձեռք՝ ձեռնածայ (*ձեռն-ա-ծայ*), ձմեռ՝ ձմեռնային (*ձմեռն-ային*), նուռ՝ նոռննի (*նուռն-ենի*), սառ՝ սառնարան (*սառն-արան*) *և* այլն: Այս շարքի արմատներէն ոմանք կրնան առանձին չգործածուիլ. - մեռնիլ՝ մեռալ, մոռնալ՝ մոռցալ, առնել՝ առալ, կամ բուն ձևով, երբեմն ածանցաւոր կերպով դառնայ բարդութեան երկրորդ բաղադրիչը. - մեռնիլ՝ անմեռ, անմեռուկ, մոռնալ՝ անմոռ, անմոռանալի, առնել՝ հոգէտ *և* այլն: Առնել բային արմատը առու, առուչ, առոց *և* առիկ ձևերով կայ շարք մը բարդութիւններու մէջ՝ փորձառու, ակնառու, սրտառուչ, արտառոց, բացառիկ, ապառիկ, անառիկ:

ԲՅՌ. - *Կարգ մը բառերու մէջ Ն-էն առաջ Բ կու գայ, որովհետև անոնք ծագումով այլ կազմութիւն ունին, ինչպէս՝* գարնել (*գարկանել*), կրնալ (*կարենալ*), վերնալ (*վերանալ*), վերնատուն (*վերին տուն*), գիրնալ (*գիրանալ*), գարնան (*գարուն բառին սեռականը*), վրնջել (*վրինջ*) *և* այլն:

Գ. - *Պէտք է գիտնալ նաև, որ բնաձայնական բառերու մէջ Ռ հնչիւնը բնաձայնին վերջաւորութեան կը գրուի Ռ-ով, իսկ մէջը ըլլալու պարագային՝ Բ-ով, այսպէս՝*

ճր՛ոռ	ճոռոց	ճոռալ	ճոճոալ	ճոճոոց
տր՛ոռ	տոռոց	տոռալ	տոտոալ	տոտոոց
մր՛րթ.	մրթալ	մրթոց	մրթմրթալ	մրթմրթոց
բր՛րթ	բրթալ	բրթոց	բրթբրթալ	բրթբրթոց

*Նոյնպէս ԱՆՉ, ԱՉ, ԻՆՉ, ՆՉԻԻՆ վերջաւորութիւններով բնաձայնութիւնները կը գրուին Ռ-ով, ինչպէս՝* բառաչ, բառաչել, գոինչ, գոնչել, խոինչ, խոնչել, կոինչ, կոնչել, կառաչ, կառաչել, կառանչ (*ագրաւի ձայն*), կառանչել, հառաչ, հառաչել, ճոինչ, ճոնչել, մոունչ, մոնչել: Միս բնաձայնութիւններն այ Ռ կ'ունենան պոռալ, գոռալ, պոպոռալ, մոճոալ (*արմատական վերջին հնչիւնը*): Զ-ով *և* Բ-ով կը գրուին բնաձայնական շարք մը բառեր, ինչպէս՝ վրինջ, վրնջել, վրնջիւն, յորանջ, յորանջել, հաջել, հաջիւն, շշունջ, շշնջալ, մրմունջ, մրմնջել, տրտնջալ, տրտունջ *և* այլն:

դ. - *Բացի արմատական Ն բաղաձայնէն, միւս բոլոր բաղաձայններէն առաջ Բ կը գրուի, ինչպէս՝* արդիւնք, արժան, արծիւ, արհեստ, արձան, արտ, արցունք, արտասուք, արփի, արթայ, բարկանալ, բուրգ, գիրկ, կրք, կրգ, կրդիկ, երգնկա, երթալ, գարմ, գուրկ, թարմ, լերկ, ջերմ, յարգի *և* այլն: Բայց հոս *և*ս բացառութիւններ կան. - թոչիլ, թոչուն, թփոտալ, խոչակ, խոչափող, խոպոտ, կառչիլ, կոթնիլ, հոչակ, ձարոտուր, ճմոթկել, ճոգած (*մորթը թուլցած*), յուրթի, ուրկան, ուռճանալ, պառկիլ, պոստել:

*Կան դիրքային օրէնքներով չբացատրուող Ռ-ի գրութեան բազմաթիւ պարագաներ *և*ս: Ստորև կու տանք հիմնական շարք մը Ռ ունեցող բառերու, որոնցմէ ոմանք, թէև օրինական բնոյթ ունին, բայց կրնան դժուար ճանչցուիլ. -* ահուկի, անտառ, աչառել, ապառած, առագաստ, առած, առակ, առանց, առանցք, առաջ, առասպել, առաստաղ, առատ, առարկալ, առարկել, առաւել, առաւօտ, առաքել, առաքինի, առեղծուած, առէջ, առիթ, առիծ, առիք, առինքնել, առոյգ, աթոռ, ախոռ, առիծ, առու, առուոյտ, առտու, աստառ, արբշիռ, բառ, բևեռ, գառագեղ, գաւառ, գոռոգ, գոռալ, գուռ, գոբի, գոուգ, գրգիռ, դեռ, դոբ (*կէսնի*), եռալ, եռանդ, գառամ, գառանցանք, գառիթափ, գգայուել

(փսխել), գեփիւ, գկեռ, գմուս, քառ, քառամիլ, թոռմիլ, թափառիլ, թիռ, թոչուն, թշուառ, թռուցիկ, ժայռ, ժանգառ, ժառանգ, ժուռ գալ, յառ (հաւագգի մը), լուռ, լոկ, լոխն, լսեռ (ըմբոստ), լսիւ, լսննջալ (խխունջ), լսող, ծառ, ծառայ, ծուռ, կանկառ, կառք, կառատուն, կառափ (գոլիս, գագաթ), կառոյց, կառչիլ, կարկառ (բարձունք), կարկառել (երկարել), կեռ (ճանկածն ծայր ունեցող երկաթ), կիտուռ (մարախ), կեռաս, կնճիռ, կշիռ, կոռ (ծրի աշխատանք), կուռ (սեղմ, ամուր), կուռք, կռապաշտ, կռահել (գուշակել), կռան (մուրճ), կռանել, կրիւ, կրունկ, կրուփ, հեռու, Հոռի (հայկական ամսանուն), հոռովել, հուռա՛, հոռետոր, ձառ (ծուռ), խոժոռ, ձգեռտ (ստամոքսի կազ), ձգռտալ, ճառ, ճառախօս, ճառընտիր, ճապուռ (ճանկ), ճառագայթ, ճիռ (ողկոյցի մաս), ճոքաղ, ճոռ (կիսախողովակ), ճոռոմ, ճպուռ, մամուռ, մաճառ (չորցուած ձուկ), մատուռ, մատրոուակ (գիճի հրամցնող, սպասեակ), մացառ, մաքառիլ, մեռել, մեռոն (միտոն), միլիառ, մոռ (մանիշակագոյն), մոռալ, մոռութ, յամառ, յառաջ, յառել (սևեռել), նառն (կոճակի օղակ), նեռ (սատանայ), նուռ, շառ (վառ կարմիր), շառագունիլ, շառալ (ցոլք), շառատ (թուխ կարմիր՝ ձի), շառաիղ (սերունդ, ճառագայթ), շառափ (շող), շառտել (մորթը ճեղքել), շեռ (մէզ), շուռ գալ, շոռալ, շոխնդ, ոռք (ցած, յատակ), յոռեգոյն, յոռետես, ոռիլ, ոռննի, ոռկան, շուատ (թշուառ), չեռ (յայն բանալ՝ աշքերը), պալծառ, պառակտուիլ, պառաւ, պառկիլ, պատառ, պատկառիլ, պատճառ, պոռալ, պոռթկալ, պոռոյց (հարսի դրամօժիտ), պոռունկ, ջեռիլ (սաստիկ տաքնայ), սակառ, սառ, սեռ, սևեռել, սիսեռ, սկիռ, սպառիլ, սփիտք, սփոկ, վաճառք, վաճառական, վաճառել, վառ, վառել, վառվոռն, վառօղ, վճիռ, վճեռել, վճռական, վտառ, տակառ, տառ, տառելիս (ձուկ մը), տառեղ (արագիլի տեսակ), տառփալ (ցանկալ կնոջ), տեռ (բարակ լաթ), տոռամ (թատերախաղ), ցանցառ, ցիռ (վայրի էջ), փառակ (ընկոյզին միջուկին կէտը), փառք, փառաուր, սնափառ, փեռեկտել (երկպառակել), փնտռել (արևուփնտրել), քառասուն, քառեակ, օճառ եւ այլն:

2.- Ռ>Բ մասնակի հնչիւնափոխութիւն:

Ն հնչիւնի կորուստի կամ Ռ-էն հեռանալուն պատճառաւ կարգ մը բառերու մէջ տեղի կ'ունենայ Ռ>Բ հնչիւնափոխութիւն. այսպէս՝ ընթևոնուլ, ընթևոնելի, բայց՝ ընթևրցել, ընթևրցում, ընթևրցանութիւն, ընթևրցուած. համբառնալ համբարձում. դառնալ, վերադառնալ, բայց՝ դարձդարձիկ, դարձնել, վերադարձ. յառնել՝ յարութիւն, յարեաւ. դուռ, դըռնապան, բայց՝ դրան, դրացի, դրկից. լեռ, լեռնային, լեռնապար, բայց՝ լերան. ամառ, ամառնային, ամառնամուտ, բայց՝ ամրան (ամառուայ), ամարանոց. ձմեռ, ձմեռնային, ձմեռնամուտ, ձմեռնարուն, բայց՝ ձմրան (ձմեռուայ), ձմեռոց. մատուռ, բայց՝ մատրան (մատուոի): Այդպէս է նաև ձևերակալիլ բառին մէջ, ուր ձևեր բաղադրիչը ձևոն բառին գործիական հոլովն է հին հայերէնի մէջ: Ռ>Բ փոփոխութիւն ունինք նաև բանի մը կրկնաուր բառերու մէջ, ուր Ռ-ն առաջին բաղադրիչին մէջ Բ կը դառնայ. - սարսուռ (սարսըռալ). գրգիռ (գրգռել, գրգռութիւն). մըմուռ (մըմնալ). թրթիռ (թրթոալ). բարբառ (բարբառիլ, բարբառախօս): Միայն վերջին «բառ» բաղադրիչը առանձին կը գործածուի:

Հակառակ երևույթը, այսինքն՝ Բ>Ռ փոփոխութիւն ունինք բանի մը բառերու մէջ. այսպէս՝ ԱՅԲ գոյականին ածականը կ'ըլլայ առնական, ունինք նաև երեք, երեսուն, երեակ, բայց բարդութիւններու մէջ՝ եռագոյն, եռարյուր, եռանկիւն, եռոտանի եւ այլն: Չորս թուականը բարդութիւններու մէջ կ'երևայ բառ արմատով՝ բառասուն, բառանկիւն, բառանակ եւ այլն: Կայ նաև եղևոն (ոճիք) եւ եղևր (սուզ) գոյգր. առաջինէն ունինք՝ եղևոնական, եղևոնագործ, եղևոնաղատ, իսկ երկրորդէն՝ եղևրական, եղևրամայր, եղևրերգ. նաև ջեռիլ, որմէ ունինք՝ ջեռուցիչ, ջեռուցում եւ ջեր՝ որմէ ունինք ջերանոց (ջերմոց):

3.- Ռ եւ Բ գիրերը ածանցներու մէջ:

Առ նախածանցով ունինք բազմաթիւ ածանցաուր բառեր. - առանձին, առանձնութիւն (անձ), առանցք, առաջ

(աջ), առարկայ, առարկել, առանկ, առերևս, աորնթեր, առնչութիւն, առնչութիլ (ինչ), առժամնայ, առի, առկախ, առկայ, առկայծ, առհաշի, առհաւատչեակ, առյաւէտ, առնուագն, առօրեայ, առտնին *և այլն*:

*Կարգ մը պարագաներու ԱՌ-ը նախադաս կապ կը մնայ՝ առ այսօր, առ այժմ, առ ի քննութիւն, առ ի զգուշացում, առ ի երախտագիտութիւն և այլն*:

Բազմապատկական *ածանցներուն մէջ միշտ Ռ կայ և ոչ Ր. ԿՌՏ.- կոխել՝ կոխկոտել. ՌՏ.- ցատկել՝ ցատկոտել, ճանկել՝ ճանկոտել, ճնդքել՝ ճնդքոտել. սեղմել՝ սեղմոտել: ՈՒՐՌՏ.- լիզել՝ լզուրոտել, քսուիլ՝ քսուրոտուիլ, կոխել՝ կոխուրոտել:*

*Վերջածանցներու մէջ միայն Ր կը գրուի (և ոչ Ռ), ինչպէս՝ քաջ(արար), ցաւ(ագար), մեծ(ավարի), դաս(արան), յուշ(արար), խորան(արդ), յուն(արէն, ռուս(երէն), թագ(աւոր), սև(որակ), լուծ(արք) յաճախ(որդ), զին(ուոր), յագ(ուրդ), յաստ(օրէն) և այլն (տես՝ ածանցներու բաժինը):*

#### 4.- Ր-ն մասնիկներու մէջ:

*Գոյականի և բայի մասնիկներուն մէջ միշտ Ր կը գրուի: Այդ պաշտօնով Ռ-ն երբեք չի գործածուիր: Ստորև կու տանք Ր-ի գրութեան այդ պարագաները.*

*ա.- ԵՐ և ՆԵՐ յոգնակերտ մասնիկները.- տուն՝ տուներ, պատ՝ պատեր, մատ՝ մատեր, քաղաք՝ քաղաքներ, պարտէզ՝ պարտէզներ և այլն:*

*բ.- Վաղակատար դերբային մէջ.- վազել՝ վազեր, խօսիլ՝ խօսեր, ճանչնայ՝ ճանչցեր: Ասով կը կազմուին վաղակատար ներկայ և անցեալ անկատար ժամանակները.- վազեր եմ, վազեր ես, վազեր է. վազեր էի, վազեր էիր, վազեր էր:*

*Նոյնպէս սահմանական եղանակի ներկայ և անցեալ անկատար ժամանակներու ժխտական դերբայներուն մէջ.- կը գրեմ՝ չեմ գրեր, կը գրես՝ չես գրեր, կը գրէ՝ չի գրեր. կը գրէի՝ չէի գրեր, կը գրէիր՝ չէիր գրեր, կը գրէր՝ չէր գրեր. գ.- Բայի կարգ մը դիմաոր ձևերու եզակի Ր. և Գ.*

*դէմքերու կազմութեան մէջ .- կը վագէիր, կը վագէր, կը խօսէիր, կը խօսէր, վագեցիր, խօսեցար, մի՛ վագեր, մի՛ խօսիր:*

## Վ, Ո, Ի (ԱԻ, ԵԻ, ԻԻ, ՈԻ)

*«Վ» բաղաձայն հնչիւնը արդի հայերէնի մէջ կ'արտայայտուի ոչ միայն Վ գիրով, այլև Ո և Ո՛ ձայնաւորներու և Ի գիրին կարգ մը դիրքերով:*

### 1.- Ո-ի պարագան:

*Ո գիրը ունի պարզ ձայնաւորի արժէք՝ «օ», ինչպէս՝ ով, ովկիանոս, նոր, բոլոր, այո և այլն, իսկ բառին սկիզբը, բացի Վ բաղաձայնէն առաջ, կ'արտայայտէ բաղաձայն + ձայնաւոր կապակցութիւն մը՝ «վօ», ինչպէս՝ ոգնի, ոլորել, ոխ, ողբալ, ոչխար, որդի և այլն (Ո գիրին պարզ ձայնաւոր և բաղաձայն + ձայնաւոր (վօ) կապակցութիւն արժէքներուն մասին նաև տես՝ ձայնաւորներու բաժինը, էջ 21):*

### 2.- Վ-ի պարագան:

*ա.- Վ կը գրենք բառին սկիզբը, բացի վերի պարագայէն, ինչպէս՝ վագր, վագել, վախճան, վառ, վարագ, վեր, վերջ, վեց, վէզ, վէճ, վիճակ, վիրապ, վճիտ, վճիռ, վրան, վտակ, վկայ, վո՛ւշ, վո՛ւյ և այլն:*

*բ.- Ո ձայնաւորէն ետք՝ ովկիան, Ովսիա, Ովսաննա, զովասանք, զորով, զովանալ, թոթով, ծովեզերք, կողով, կով, հով, հովի և այլն:*

*Հին հայերէնի մէջ Վ ունէին Հոովմ, Սերովրէ և Բերովրէ բառերը: Ներկայիս առաջինը կը գրուի Հոովմ, իսկ վերջին երկուքը՝ Սերոր և Բերոր ձևով:*

*գ.- Բարդութիւններու մէջ, ուր երկրորդ բաղադրիչը Վ-ով կը սկսի, ինչպէս՝ անվախ, անվատ, բանավէճ, խանդավառ, վագվակ, վառվոուն և այլն:*



### 3.- Ի-ի պարագան:

Ի գիրը կը հանդիպի ԱԻ, ԵԻ, ԻԻ և ՈԻ կապակցութիւններուն մէջ: ԱԻ և ԵԻ կապակցութիւններուն մէջ անջատ հնչիւն է՝ «վ» բաղաձայն. - բաւ, կարաւան, կտաւ, հարաւ, մօտաւոր, ձև, սեւ, կեղեւ, բևեռ, Սեւան, Երևան և այլն:

ԻԻ կապակցութիւնը հանդէս կու գայ երեք արժէքով՝ ձայնատր, երկհնչիւն և ձայնատր+բաղաձայն կապակցութիւն (ասոնց մասին հանգամանօրէն տես ԻԻ կապակցութեան յատկացուած բաժնին մէջ, էջ 26-27):

ԱԻ և ԻԻ իբրև գրարարի գործիական հոլովի քարացած ձևեր՝ կան կարգ մը բառերու մէջ, ինչպէս՝ պատճառաւ, պայմանաւ, իրաւ, շնորհիւ, մեղմիւ, բանիւ և այլն:

Բաղաձայնէ ետք Ի բաղաձայնը (վ) քիչ կը հանդիպի: Ծիւ, ճիւ, կամ ծիւ-ծիւ, ճիւ-ճիւ և ասոնց նման բնաձայնութիւնները բառերու վերածուելու պարագային ԻԻ>Ի փոփոխութիւն տեղի կ'ունենայ, ինչպէս՝ ճւճալ, ճւճոց, ծուճալ, ծուճոց, սլլալ, սլլոց, սլլան (ոմանք կը գրեն սլլորլալ, սլլորլոց, սլլորլան) և այլն: Ոչ կրկնատր ձևերը կը գրուին երկու Ի-ով, ինչպէս՝ ճուալ, նուալ, ծուալ: Ուրիշներ այս բառերը կը գրեն Վ-ով, ինչպէս՝ ճվճվալ, ճվվալ, ճվճվոց, ճվվոց, ճվճվան, ճվվան և այլն: Նախընտրելի են առաջին ձևերը: Ի կը գրուի նաև (ՈԻ-ի փոխան) արևելահայերէնի սահմանական եղանակի ներկայ ժամանակի ձևերուն մէջ՝ տանջում է, գնահատում է, արտասում է և այլն:

Ու կապակցութիւնը ունի բաղաձայնի և ձայնատրի արժէքներ: Ձայնատր է բառին սկիզբը՝ ուզել, ուլ, ուրուր, բառին մէջ, բաղաձայնէ մը առաջ՝ բուրում, դուռ, յագուրդ և բառին վերջը՝ բու, ծախու, կատու, մեղու և այլն: Բաղաձայն է բառին մէջ ձայնատրէ մը առաջ, ինչպէս՝ Աստուած, ստուեր, նուէր, կռուիլ, պահուրտիլ, աղուոր, ազնուօրէն, արժանապատուութիւն և այլն (ՈԻ-ի երկու արժէքներուն մասին հանգամանօրէն տես էջ 27-29):

## ԱԾԱՆՑՆԵՐՈՒ ՈՒՂՂԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Հոս այբբենական շարքով կը ներկայացուին ուղղագրական դժուարութիւններ ունեցող ածանցները միայն, բանի մը օրինակներով, առանց անոնց ձևաբանական և իմաստաբանական յատկանիշները քննելու:

### ա. ՆԱԽԱԾԱՆՑՆԵՐ

ԱՆԴՐ(Ա).- անդրադարձ, անդրաշխարհ, անդրշիրիմեան...

ԱՐՏ(Ա) (դուրս).- արտայայտել, արտաշնչել, արտասանել, արտագաղթ, արտասահման, արտածել, արտաժամ...

ԲԱՂ(Ա) (կից, միասին).- բաղադրութիւն, բաղադրիչ, բաղաձայն, բաղիւսել, բաղդատել...

ԲԱՑ(Ա) (մէկ կողմ, դուրս).- բացակայիլ, բացագանչել, բացառիկ, բացարձակ, բացայայտ, բացառութիւն ...

ԳԵՐ(Ա) (վեր).- գերիշխան, գերմարդ, գերադաս, գերակայ, գերաշնորհ, գերապատիւ, գերբնական, գերյոզնած...

ԴԵՐ(Ա) (փոխարէն).- դերանուն, դերբայ, դեր-գնդապետ, դեր-ատենապետ, դեր-նախագահ...

ԴԺ.- դժգոհ, դժկամ, դժբախտ:

ԹԵՐ(Ա) (թերի, կիսատ).- թերակղզի, թերաճ, թերածին, թերուս, թերագնահատել, թերավարժ, թերաւարտ...

ՀԱԿ(Ա) (հակառակ, դէմ, ընդդէմ).- հակադարձել, հակակշիռ, հակադիր, հակապատկեր, հակահարուած...

ՀԱՄ(Ա) (բոլոր, ընդհանուր, նոյն).- համագումար, համագրեւտ, համալսարան, համանուն, համախմբում...

ՀՈՄ(Ա).- հոմանիշ, հոմանուն:

ՅԱՐ(Ա) (մօտ, միշտ, նման, միասին).- յարադիր, յանանուն, յարացոյց, յարատեւ, յարաբերիլ, յարաշարժ...

ՆԵՐ(ներսը, դէպի ներս).- ներգաղթ, ներաշխարհ, ներկայ, ներկայիս, ներածել, ներշնչել, ներծծել, ներգործել...

ՇԱՐ(Ա) (շարուածք).- շարադրել, շարադրութիւն, շարա-

դասութիւն, շարահիւսութիւն...

Չ.- չաստուած, չրեր, չկամ, չունելոր, չտես:

ՊԱՐ(Ա) (*չորջ, չորս կողմր, չրջան*). - պարբերութիւն, պարագլուխ, պարագիծ, պարագծել...

ՍՏՈՐ(Ա) (*տակր, վար*). - ստորակէտ, ստորադաս, ստորագրել, ստորագնահատել...

ՎԵՐ(Ա) (*կրկին, նորէն, վրայ*). - վերադարձ, վերաքննել, վերահսկիչ, վերագնահատել, վերընտրել...

ՏԱՐ(Ա) (*հնոու, օտար, տարբեր*). - տարաշխարհիկ, տարակարծիք, տարբադադրել, տարակոյս, տարահիմք...

ՏՐԱՄ(Ա) (*մէկ ծայրէն միւսը*). - տրամաբանել, տրամաբանական, տրամախօսութիւն, տրամադրել...

ՏԺ.- տժգոյն:

ՓՈՍ(Ա) (*փոխան*). - փոխարքայ, փոխանուն, փոխնախագահ, փոխվրէժ, փոխադարձ, փոխանուն...

## բ.- ՎԵՐՁԱԾԱՆՅՆԵՐ

(Ա)ԲԱՆ.- բուսարան, պատմարան, սրտարան, հնարան...

(Ա)ԲԱՐ.- ծուլարար, քաջարար, աշխարհարար, գրարար...

(Ա)ԳԱՐ.- լեզուագար, ցաւագար, ջղագար...

(Ա)ԳԻՆ.- թանկագին, սրտագին, ահագին, գայրագին, լալագին, մոլեգին: Ներքին *և* արտաքին *բառերու վերջատրութիւնները չջրոթկ ԱԳԻՆ ածանցին հետ*:

(Ա)ԳՈՅՆ.- գերագոյն, յաւագոյն, յարմարագոյն, վատագոյն, յոռեգոյն, ազնուագոյն *և* այլն: Արմատ է կարգ մը *բառերու մէջ՝* ծիրանագոյն, մոլարագոյն *և* այլն:

ԱՅԻՆ.- ծովային, լեռնային, դաշտային, գարնանային, ձմեռնային, ազգային, ժողովրդային, թաղային...

ԱՅՆ.- միանգամայն, միայն, համայն:

ԱՆՅ.- սրտանց:

ԱՆՈՅ/ՆՈՅ.- հիւանդանոց, խննթանոց, մեղուանոց, հաւնոց, մէկնոց, տասնոց. ալկնոց, վզնոց, գոգնոց...

ԱՆՔ.- գովասանք, գորգորանք, գրկանք, ծաղրանք, յար-

գանք, տանջանք, փշրանք, պաղատանք...

(Ա)ՊԷՍ.- մեծապէս, խորապէս, ամբողջապէս...

(Ա)ՎԱՐԻ.- քաղաքավարի, մեծավարի, արջավարի...

ԱՐԱՆ.- գործարան, ճաշարան, սառնարան, ընթերցարան, բառարան, առաջնորդարան, հիւպատոսարան...

ԱՐԱՐ.- կազմարար, ներկարար, շինարար, խոհարար, խոռվարար, բարերար, յուշարար, գիտարար...

ԱՐԴ.- խորանարդ, կորնթարդ, գմբեթարդ...

ԱՐԷՆ/ԵՐԷՆ.- շինարէն, յունարէն, հայերէն, արաբերէն...

ԱԻԷՏ.- հոտաւէտ, շահաւէտ, արդիւնաւէտ, օգտաւէտ...

ԱԻՈՐ.- ակնոցատր, եղջերատր, յուսատր, ձիատր, ժամանակատր, հոգևոր, դատատր, սպասատր...

ԱԻՈՒՆ.- դեղնաւուն, կարմրաւուն, կապտաւուն...

ԱՐՔ.- յուծարք (*յուծել* բայէն), գործարք:

ԱՅԻ.- բառացի, բերանացի, խելացի, տեղացի, գիւղացի...

(Ա)ՅՈՒ.- փեսացու, հարսնցու, սերմնցու, տիրացու...

ԵԱԼ.- բանտարկեալ (*բանտարկել* բայէն), յաւելեալ, կախեալ, երդուեալ, յիշեալ, ամբաստանեալ...

ԵԱԿ.- քառեակ, վեցեակ, տասնեակ...

ԵԱՅ.- փայտեալ, փղոսկրեալ, արծաթեալ, ադամանդեալ, պաշտօնեալ, քրիստոնեալ, Հրաշեալ...

ԵԱՅՆ.- լռելեայն:

ԵԱՆ.- ամերիկեան, աջակողմեան, արտասահմանեան, միջնադարեան *և* այլն. *հայոց մականունները՝* Յակորեան, Կանանեան, Թումայեան, Համոյեան...

ԵԱՆՅ (*հնատիպ մականուններ*). - Մալխասեանց, Ղեւոնդեանց, Արամեանց, Մինասեանց...

ԵՂ.- թիկնեղ, համեղ, հիւթեղ, հնչեղ...

ԵՂԷՆ.- ձիւնեղէն, յուսեղէն, ժայռեղէն, կաթնեղէն...

ԵՆԱԿԱՆ.- հօրենական, պապենական, մօրենական...

ԵՆԻ.- դեղձնի, թթնի, թզնի...: Մայր *և* հայր *բառերէն՝* «մայրենի լեզու», «հայրենի երկիր»:

ԵԼԻ.- ատելի (*ատել* բայէն), սիրելի, բուժելի, գարշելի, բնակելի, կասկածելի, վստահելի, համակրելի...

ԵՅԻ, ԱՅԻ, ՅԻ (*կր կազմեն տեղացիութիւն ցոյց տուող*

գոյականներ)։ - Լոռի՝ լոռեցի, Խոյ՝ խոյեցի, Հալեպ՝ հալեպցի, Քեսապ՝ քեսապցի, Ֆրանսացի, լեռնցի...  
 ԵՑԻԿ. - ընկեցիկ, բարեկեցիկ, հպանցիկ։  
 ԵՍՏ. - գովեստ (գովել *բայէն*), պահեստ, ուտեստ, արհեստ։  
 ԷՆՔ. - խոնջէնք։  
 ԷՑ. - գահրնկէց, խորտրնկէց, քարընկէց։  
 ԷՔ. - տնօրհներ, ջրօրհներ, ութօրէք, դռնբացէք, հիմնարկէք, արժէք, կողպէք...  
 ԻԶ. - քանդիչ (քանդել *բայէն*), խանգարիչ, սպառիչ, սփոփիչ, յուզիչ, արարիչ, բնակիչ, թարգմանիչ...  
 ԻՔ. - աւետիք, գործիք, երախալիք, երախտիք, ընթրիք, խաղալիք, կարծիք, կեղծիք, հարսանիք, տանիք, ...  
 ԻՆՔ. - միջինք, քրտինք։  
 ԿԵԿ. - լայնկեկ, բարձրկեկ, թանձրկեկ։  
 ԿԷՆ. - ծակոտկէն, հիսկէն։  
 ԿՈՏ. - երազկոտ, վախկոտ, ծիծաղկոտ...  
 ՄՈՒՆՔ. - ուսմունք, յուզմունք, վարմունք, ցուցմունք, բուրմունք, ասմունք, սխալմունք...  
 ՈՂ. - գրող, լրագրող, մատուցող, աշխատող, ծաղկող...  
 ՈՅԹ. - ճաշկերոյթ, երեկոյթ, ասոյթ, ելոյթ, երեսոյթ, հասոյթ...  
 ՈՅԿ. - գրքոյկ, դահույկ, մակոյկ։  
 ՈՅՑ. - հանգոյց, գեկոյց, մատոյց։  
 ՈՅՔ. - կահոյք, խնճոյք, հաճոյք, գահոյք։  
 ՈՆՔ/ՈՆՑ (կր կազմեն հաւաքական անուններ)։ - պապոնք՝ պապոնց, մամոնք՝ մամոնց...։ Այլ է՝ շատոնց։  
 ՈՎԻ. - վճարովի, շարովի, կախովի։  
 ՈՎԻՆ. - ամբողջովին, կիսովին, բոլորովին, հիմնովին...  
 ՈՏ. - աղմկոտ, արեստ, նախանձոտ, աղտոտ, երկչոտ...  
 ՈՏԻ(Ք). - սնտաի, ցնցոտի, օտարոտի, հնտաիք, փորոտիք...  
 ՈՐԱԿ. - սառնորակ, սետրակ, դեղնորակ, կարմրորակ...  
 ՈՐԴ. - ճամբորդ, յաճախորդ, առաջնորդ, քառորդ...  
 ՈՅ. - *բնաձայնական անուններ*՝ խշխշոց, բզզոց, գոռոց, տոտոռոց, շրխկոց, ծլլոց, ճւճոց. նաեւ՝ տեղի ու գործիքի անուններ, *ինչպէս*՝ դպրոց, թաքստոց, հնոց, դարբնոց, ամրոց, խարտոց, յօտոց, փրոց...

ՈՒԱԾ (կրատրական բայերու յարակատար դերբայն է)։ - սիրուիլ՝ սիրուած, եփուիլ՝ եփուած, բանտարկուիլ՝ բանտարկուած, ոմանք գոյականներ են, *ինչպէս*՝ կաթուած, յօղուած, զանգուած, ընթերցուած...  
 ՈՒԱԾՔ. - ասացուածք, դարձուածք, պատմուածք, գրուածք, կառուցուածք, ունեցուածք, նայուածք...  
 ՈՒԹԻՒՆ. - բարութիւն, չարութիւն, դերձակութիւն, բժշկութիւն, պարտութիւն, ազնուականութիւն...  
 ՈՒՀԻ. - բժշկուիի, ուսուցչուիի, բանուորուիի, բանաստեղծուիի. Վանուիի, Թագուիի, Սրբուիի, Հայկուիի...  
 ՈՒՆՔ. - ակունք, արբունք, բարձունք, իրաւունք, լորձունք, մասունք, շրթունք, սկզբունք...  
 ՈՒՈՐ. - գինուոր, բանուոր, ջրուոր, կալուոր, աղուոր...  
 ՈՒԶ. - վայելուչ (վայելել *բայէն*), տեսուչ, ընկալուչ...  
 ՈՒՐԴ. - արձակուրդ (արձակել *բայէն*), ժողովուրդ, խառնուրդ, խորհուրդ, յագուրդ, աճուրդ...  
 ՈՒՅ (գրաբար բացառական հոլովի քարացած ձեւ)։ - փորուց (փորք եղած օրերէն), հնուց, մանկուց։  
 ՈՒՅ(Ք). - այրուցք, սերուցք, մոլուցք, այտուց։  
 ՈՒՔ. - վիվուք (վիվալ *բայէն*), փսփսուք, բաշքշուք, մտմտուք, աւելցուք, մանրուք, գինարբուք, սրտխառնուք...  
 ՉԵԱՅ. - առհաւատչեայ։  
 ՉԷՔ. - կարողչէք, ներկողչէք, մաքրողչէք...  
 ՕՆ(Ք). - գողօն, գործօն, թափօն, թերթօն, ծամօն, կրծօն, կտրօն, զարթօնք։ ՈՆ ունիւն՝ թատրոն եւ կեղրոն բառերը։  
 ՕՐԷՆ. - համեստօրէն, խստօրէն, տխրօրէն, մայրօրէն...  
 ՕՔ (գրաբարի յոգնակի գործիական հոլովի քարացած ձեւերուն մէջ) առենօք, ընտաննօք, առօք-փառօք, ցաւօք, *բայց*՝ բարուք։  
 Ք. - անէծք, աղօթք, երկինք, խելք, ուշք, հրաշք, հաւատք, փառք, քիմք, հիմք, հնարք, գօթք, գիրք, դէմք, կողք, արժանիք, բարիք, ընտանիք. ասք, ելք, էջք, գովք, խօսք, հմայք, նզովք, մուտք, անէծք, պահք, Վիրք, Ասորիք, Աղուանք, Գուգարք, Ծոփք, Ռշտունիք...

# ՆՄԱՆԱԶԱՅՆ ԲԱՌԵՐ

Հոս մէկտեղուած են ոչ միայն նմանաձայն բառերը, այլև նմանաձայնութիւններ ստեղծած բառաձևեր ու բաղադրիչներ: Փակագիծի մէջ շեղագիրով տրուած է բառին իմաստը, իսկ ուղիղ գիրով տուեալ արմատին բուն ձևը եւ անկէ կազմուած այլ բաղադրութիւններ:

ԱԼՏՏ (հիւանդութիւն. > ախտա-վարակ, ախտաճանաչում)  
 ԱՆԴ (հոն. արտ. > անդապահ)  
 ԱՆԶ (անհատ. > անձնագիր. անձնական, յանձնառու)  
 ԱՆԶԱԻ (քարայր. > քարանձառ)  
 ԱՆԶՈՒԿ (նեղ. > անձկութիւն)  
 ԱՆՈՔ (առանձին)  
 ԱԶ(ք) (> աչալուրջ, աչառել)  
 ԱՌԱԾ (իմաստուն խօսք)  
 ԱՌԱՆՅ (բացի, գատ)  
 ԱՌԱՏ (շատ. > առատութիւն)  
 ԱՌՁԻ (նախկին)  
 ԱՌԷՔ (առնել բայի հրմ. ը)  
 ԱՌՆԱԿԱՆ (քաջ մարդու վայել)  
 ԱՌՈՒ (գետակ. > առուակ)  
 ԱՍՏ (հոս)  
 ԱՐՏԵՐ (արտ բառին յոգնակին)  
 ԲԱԲԱՆ(ել) (տրոփել)  
 ԲԱՆԻԼ (զարնուիլ. ակնբախ)  
 ԲԱԿ (շրջափակ)  
 ԲԱԳԱՐԱՆ (պատմ. քաղաք)  
 ԲԱՍՏ (բախտ. > բարեբաստիկ, չարաբաստիկ)  
 ԲԱՐԻ (հականիշը՝ չար)  
 ԲԱՐ (պտուղ)  
 ԲԱՐԲԱՌ (յնզու)

ԱՂՏ (կեղտ. > աղտոտ)  
 ԱՆԹ(ացույլ)անութ՝ թնատակ)  
 ԱՆՅ (> անցնիլ, անցք. անցագիր. անցուղարձ, անցորդ) (սրտ)ԱՆՅ  
 ԱՆՅԱԻ (առանց ցտի. անցնիլ բային անց. կատարեալը)  
 ԱՆՅՈՒԿ (անցած)  
 ԱՆՕԳ (անօգնական)  
 ԱԶ (աջ կողմ. > յաջող, յառաջ)  
 ԱՐԱԾ(իլ) (ճարակիլ)  
 ԱՐԱՆՅ (այլ մարդոց)  
 ԱՐԱՏ (բիծ. > արատառոթ)  
 ԱՐՁԻ (արջ բառին սեռականը)  
 ԱՐԵԳ (արև. տղու անուն)  
 ԱՐԱԿԱՆ (տղամարդու յատուկ)  
 ԱՐՈՒ (մանչ)  
 ԱԶԴ > զովագղ, ազղակ, ազղու)  
 ԱՌ ՏԷՐ (Աստուծոյ ուղղուած)  
 ՓԱՓԱՆ (մուշտակէ գլխարկ)  
 ՓԱՆ(Չ)ԻԼ (փախուստ տալ)  
 ՓԱԿ (զոց. > փականք, փակում)  
 ՓԱԿԱՐԱՆ (ղոնփակ տեղ)  
 ՓԱՍՏ (> փաստել, փաստացի, փաստարկ, փաստաթուղթ)  
 (կը) ՓԱՐԻ (կը լծուի)  
 ԲԱՌ (> բառարան, բառախաղ)  
 ՓԱՐՓԱՌ (անուշ աչքով)

ԲԱՐԴ (կնճոտ. > բարդութիւն)  
 ԲԱՐՔ (սովորոյթ)  
 ԲԵՌ (> բեռնալ, բեռնակիր)  
 ԲԵՐԴ (ամբողջ)  
 ԲՈՒՃ (կարճ զուլպայ)  
 ԲՈԿ (բոպիկ)  
 ԲՈՅԹ (հաստ մատը)

ԲՈՌ (խոշոր ճանճ)

ԲՈՒՌ (ափ. > բռնել, բռունցք)  
 ԲՈՒՔ (ծիւնախառն հոով)  
 ԲՐԴԵԼ (կտորներու վերածել)  
 ԲՕԹ (զոյժ)  
 ԳԱՄ (բնեռ)  
 ԳԱՄԵԼ (բնեռ զարնել)  
 ԳԱՅԼ (զազան մը. > գայլաշուն)  
 ԳԱՆ (ակոծել) (ծնծել)  
 ԳԱՌ (ոյխարի ձագ)  
 (ցատ)ԳԱՐ, (խելա)ԳԱՐ  
 ԳԱՐՇ(ելի) (զգունիլ)

ԳԵՏ (շորի առատ հոսանք)  
 ԳԵՐ(աղաս), ԳԵՐ(մարդ)  
 ԳԵՐԵԼ (գերի բռնել)  
 ԳԵՐԻ (ստրուկ)  
 ԳԷՇ (վատ. > գիշատիչ)  
 ԳԻՆ (արժէք. > թանկագին)  
 ԳԻՐԳ (փափուկ. > զրգանք)  
 ԳՆԵԼ (ղրամով առնել)

ԳՐԱԿԱՆ  
 ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ  
 ԳՈՀ (բառարարուած)

ԳՈՂ (առագակ. > գողութիւն)  
 ԳՈՉ(ել) (կանչել)  
 ԳՈՌ (առնողաձայն)

ՓԱՐԹ (փորի ճարպ)  
 ՓԱՌՔ (պատիւ. > փառատր)  
 ԲԵՐ (բերել բայի հրմ. ը)  
 ՓԵՐԹ (կտոր)  
 ՓՈՒՃ (պարաս. > փճանալ)  
 ՓՈԿ (կաշիէ կաս)  
 ՓՈՅԹ (ջանք. > փութալ)  
 ՓՈՒՏ (փուծ. > փտիլ, փտախառ)  
 ՓՈՐ (որովայն. > փորոտիք, փորել, փորփրել)

ՓՈՒՌ (հաց կփելիք տեղ)  
 ՓՈՒՔ (քամի. > փքոց, փքուն)  
 ՓՐԹԻԼ (քակուիլ, անջատուիլ)  
 ՓՈԹ (ծայր)  
 (արիւն)ՔԱՄ  
 ՔԱՄԵԼ (չորցնել)  
 ՔԱՅԼ (ոտքի մէկ շարժում)  
 ՔԱՆ (> քանի, որքան. քանակ)  
 ՔԱՌ(անկիւն), ՔԱՌ(ակուսի)  
 ՔԱՐ (ժայռ. > խաչքար. քարայր)  
 (գետնա)ՔԱՐՇ (քարշել քաշել բայէն, ցածոցի)

ԳԷՏ (> հաշուազէտ. գիտուն)  
 ԳԷՐ (հականիշը՝ նիհար)  
 ՔԵՐԵԼ (սուր հրով մը շփել)  
 ՔԵՌԻ (մօրեղբայր)  
 ԲԷՇ (պարսից կրօն)  
 (արտա)ՔԻՆ, (ներ)ՔԻՆ  
 ԳԻՐՔ (մատեան)  
 ԳՆԷԼ (մարդու յատուկ անուն)  
 ՔՆԵԼ (գննել. > քննիչ)

ՔԵՐԱԿԱՆ  
 ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ  
 ԳՈՅ (զոյութիւն ունցող)  
 ՔՈՅ/ՔՈ (քու)

ՔՕՂ (շղարշ. > քողարկել)  
 ՔՈՉ(ուր) (թափառաշրջիկ)  
 ՔՈՐ (քերորտաթ)

ԳՈՎ(ք) (>գովասանք, գովեստ) ԲՈՎ (*մօտ*)  
 ԳՈՒՌ (քարէ փորրիկ աագան) ԲՈՅՐ (*արականը՝ եղբայր*)  
 ԳՐԳԻՌ (*ղրղում. > ջղագրգիտ*) ԲՈՒՌԱԿ (*իշու ձագ*)  
 ԳՐԳՈՒԵԼ (*ղրղել. > գրգոութիւն*) (հետա)ԲՐԲԻՐ  
 ԳՈՇ (*ցանցատ մօրոք ունեցող*) ԲՐԲՐԵԼ (*փորփրել, պրպտել*)  
 ԳՕՍ (*ցամաք, չորցած*) ԲՈՇ/ԲՕՇ (*արու այծ*)  
 ԴԱԳԱՐ (*հանգիստ*) ԲՈՍ (*մորթային հիւանդութիւն*)  
 ԴԱՆԱԿ (*կարող գործիք*) ԹԱԹԱՐ (*ժողովորդ մը*)  
 ԴԱՌՆ (*յնդի*) ԴԱՐ (*100 տարի*)  
 ԴԱՍ (*շարք. > դասել, դասագիրք*) ԹԱՍ (*գասաթ*)  
 ԴԱՐՁ (*ետ գայր. > դարձնել*) (ապա)ԹԱՐՅ (*՝ նշանը*)  
 ԴԱԻ (*նննգութիւն. > դաւաճան*) ԹԱԻ (*հաստ՝ ձայն կամ մագ*)  
 ԴԱՓ (*երաժշտական գործիք*) ԹԱՓ (*մղիչ ուժ. > թափահա-  
րել, թափել, բեռնաթափ*)  
 ԴԵՂ (>ղեղարան, դեղագործ) ԹԵՂ (*կայի դէզ*)  
 ԴԵՌ (*տակառին. > դեռատի*) ԴԵՐ (*պաշտօն. > դերասան*)  
 ԴԵՐԻ (դեր՝ սնտական հողով) ԹԵՐ (*կողմ*)  
 ԴԵՆ (*սատանայ*) ԹԵՐԻ (*պակաս. > թերաարտ*)  
 ԴԵՆԵՆԻՍ (*տակառին*) ԹԵՆ (> թեւածել, թեւաբաց)  
 ԴԷՄ (*դիմաց*) ԹԵՐԵՆԻՍ (*զուգէ*)  
 ԴԷՋ (*կոյտ. > դիզել*) ԹԵՄ (*եպիսկոսական շրջան*)  
 ԴԺՈՒԱՐ (*հականիշը՝ դիւրին*) ԹԷՋ (*ուսումնասիրութիւն*)  
 ԴԻ (*կողմ*) ԹԸՈՒԱՌ (*խնդ*)  
 ԴԻԱԿ (*մեռած մարմին*) ԹԻ (*գործիք մը*)  
 ԴԻՐ (դնել՝ հրամայականը) ԹԻԱԿ (*թի բառին փաղարջա-  
կանը*)  
 ԴԻՐԻ (*դիւրին, հաճելի*) ԹԻՐԻ (*թռչիլ բառին արմատը*)  
 ԴՈՂ (*սարսուտ. > դողդղայ*) ԹԻՐԻ (*սխալ, ծուռ*)  
 ԴՈՅԼ (*աման մը*) ԹՈՂ (*թողուլ բային հրմ.ը*)  
 ԴՈՅՐ (*հանգիստ. < կազդոյր*) ԹՈՅԼ (*մնդկ, ծոյ. > թուլութիւն*)  
 ԴՈՒՌ (*տան մուտք*) ԴՈՅՐ (*գոյն. > կաթնաթոյր*)  
 ԴՈՒՐ (*եզակին՝ դուն*) ԴՈՒՐ (*գործիք մը*)  
 ԴՐԱԻ (*դնել՝ անց. կատարելայ*) ԴՈՒՐ (*սոր*)  
 ԴՐԱԻ (*դնել՝ անց. կատարելայ*) ԴՐԱԻ (*յորձունք*)  
 ԴՐԱԻ (*դնել՝ անց. կատարելայ*) ԴՐԱԻ (*թռչիլ՝ անց. կատարելայ*)

ԵՂԵՌՆ (*ոճիր. > եղեռնագործ, եղեռնադատ*) ԵՂԵՐ (*սուղ. > եղերական, եղերամայր, եղերերգ*)  
 ԵՐԲ ԵՐՓ (*գոյն. > երփնագիր*)  
 ԵՂԷՔ (*ըլլալ բային հրմ.ը*) ԵՂԷԳ (>եղեգնուտ, եղեգնեայ)  
 ԵՐԳ (*տուն*) ԵՐԹ (*մեկնում. > երթալ, երթելել*)  
 ԵՆԱԼ (*ետ գայ*) ԵՐԵՐԱԼ (*շարժի*)  
 ԶԱՐԳ (>զարդարել, զարդեղէն) ԶԱՐԹ(*ուն*) (*արթուն. > զարթ-  
նիլ, զարթօնք*)  
 ԹՈՒ (>թոռնիկ) ԹՈՐ (*կաթիլ, > թորիլ, թորեայ*)  
 ԹՌՉԻԼ (*թռիլ*) ԹՐՁԻԼ (*թացանայ*)  
 ԼԱՐ (*թել. > լարային, լարախաղ*) ԼԱՌ (*հաւազգի մը*)  
 ԼՈՒՌ (*անձայն. > լին, լակեաց*) ԼՈՒՐ (*համբալ. > լրատու, լրա-  
լուելայն, լուրիւն*)  
 ԼԵՌ (*սար*) ԼԵՐ (*եղի՛ր. «ուրախ լն՛ր»*)  
 ԽՌՈՎԱՄ (>խոռվիլ, խոռվք) ԽՈՐՈՎԱՄ (>խորովել՝ միսը)  
 ԿԱՌԲ (*սայլ. > կառավարել*) ԿԱՐԳ (*շարք. > կարգապահ*)  
 ԿԱՌԱՏՈՒՆ (*կայարան*) ԿԱՐԱՏՈՒՆ (*կարի գործարան*)  
 ԿԵՌ (*կարթածն մետաղ*) ԿԵՐ (*ուտել՝ բային հրմ.ը*)  
 ԿՈՒ (*ձրի աշխատանք*) ԿԵՐ (*անասնակեր*)  
 ԿՈՒՌ (*ծուռ*) ԿՈՐ (*ծուռ*)  
 ԿՈՒՌԻ (*ամուր. > ամրակուռ*) ԿՈՐԻ (*զետ մը*)  
 ԿՈՒՌՆԿ (*թռչուն մը*) ԿՐՈՒՆԿ (*ուտքի յետնամաս*)  
 ԿՈՒԵԼ (*կոփել*) ԿՐԵԼ (*փոխադրել. > բեռնակիր*)  
 ՀԱԳՈՒՍՏ (*հազուելիք*) ՅԱԳՈՒՐԳ (*բաւարարութիւն. > յագենայ, անյագ*)  
 ՀԱՄԱՐ (*վասն. թի*) ՅԱՄԱՌ (*պնդագլուխ*)  
 ՀԱՄԱՐԵԼ (*սեպել*) ՅԱՄԱՌԻԼ (*ըսածին վրայ մնայ*)  
 ՀԱՄՐ (*անխօս, յալ*) ՅԱՄՐ (*դանդաղ*)  
 ՀԱՅԵՐԷՆԻ (*հայերէն՝ սեռ. հյվ.*) ՀԱՅՐԵՆԻ (*նախնեաց*)  
 ՀԱՆԲ (*> հանքափոր, հանքային*) ՅԱՆԳ (*նմանաձայն վանկեր*)  
 ՀԱՆԳԻԼ (*մարիլ. մեռնիլ*) ՅԱՆԳԻԼ (*եզրակացնել*)  
 ՀԱՋՈՂ (*կաղկանձող. > հաջոց*) ՅԱՋՈՂ (> յաջողիլ, յաջողակ)  
 ՀԱՌԱՋ (*հեծեծանք. > հառաչել*) ՅԱՌԱՋ (*դէպի ստաց*)  
 ՀԱՏԵԼ (*կտրել*) ՅԱՏԵԼ (*յօտել*)  
 ՀԱՐ (>հարուած, հարուածել, կարուածահար) ՅԱՐ (*միշտ. > յարատեւ, յարա-  
շարժ, յարաբերիլ*)  
 ՀԱՐԹ (*տափարակ. > հարթել, հարթութիւն. բեմահարթակ*) ՅԱՐԳ (*մանրուած չոր խտ. > Յարդգողի ճանապարհ*)

ՀԱՐԹԵԼ (մաքրել)  
ՀԱՐԿ (տուրք. > հարկահաւարք)  
ՀԱՒՆԻԼ (հաճելի գտնել)  
ՀԵՂ (անզամ)

ՀԵՂԶ (խեղդուկ. > շնչահեղձ)  
ՀԵՌՈՒ (հակահիշը՝ մօտ)  
ՀԵՏ (միասին)  
ՀԵՐ (մազ)  
ՀՈԳԱԼ (մտատանջուիլ)  
ՀՈԴ (քիչ մը անդին)

ՀՈԼՈՎԵԼ (բառաձև ստեղծել)  
ՀՈՏ (թոյր. > հոտաւէտ, հոտոտել)

ՀՈՅՁ (հիւթ)  
ՀՈՅԼ (խումբ. > աստղահոյլ)  
ՀՈՌԻ (հայկական ամսանուն)  
ՀՈՐ (փոս. > ջրհոր)  
ՀՈՐԹ (կոփու ձագ)  
ՉԱԳ (նորածին)  
ՉԱԽ (> ձախիկ, ձախաւեր)  
ՉԱՌ (ծոտ)

ՉԵՌ(ագործ), ՉԵՌ(ային)  
ՉԻ (նժոյց)

ՉԻՐ(ք) (չնորիք. > ձրի, շնորհա-  
ձիր)

ՉՈՂ (բարակ երկար փայտ)  
ՉՈՅԼ (> ձուլարան. ձուլել՝ յուծել)  
ՃԱՌ (> ճառախօս, ճառընտիր)  
ՄԵԶ (մենք դերանունին հայց. ը)  
ՄԷԳ (մշուշ)

ՄՈՒՐ (աղտ)  
ՄՌՄՌԱԼ (մը՝ ոռ ձայն հանել)

ՅԱՐԴԱՐԵԼ (զարդարել)  
ՅԱՐԿ (յարկաբաժին, երկյարկ)  
ՅԱՒԱԿՆԻԼ (հպարտանալ)  
ՅԵՂ (փոփոխութիւն. > լեղա-  
փոխական, լեղլեղուկ)

ՅԵՂՑ (լեցուն)  
ՀԵՐՈՒ (անցեալ տարի)  
ՅԵՏ(ագայ) (լետոյ, լետ այսու)  
ՀԵՌ (կրի)  
ՅՈԳ(նակի) (շատ. < յոգնիլ)  
ՅՈԴ (Մ. Դ. Ն. Ը յօդերը. կապ.  
> յօդակապ, յօդացալ)

ՅՈԼՈՎԵԼ (շատցնել՝ խօսքը)  
ՀՕՏ (ոչխարի խումբ. > հօտաղ)

ՅՕՏ(ել) (ոստերը կտրել)  
ՅՈՅՁ (> յուզում, յուզուիլ)  
ՅՈՅԼ (թոյլ, ծոյլ. > յուլանալ)  
ՅՈՌԻ (ցած. > յոռետես)  
ՀՕՐ (հայր՝ բառին սեռականը)  
ՅՈՐԴ (առատ՝ անձրև. > յորդիլ)  
ՅԱՔ (տափակցնող գործիք)  
ՅԱԽ (ճիւղ. > ցախաւել)  
ՉԱՐ (ձիւ պոչին մազը)  
ՅԱՐ (Ռուսիոյ կայսր)

ՉԵՐ (դուր՝ սեռականը)  
-ՅԻ (մասնիկ մը՝ տեղացի, գիւ-  
ղացի)

ՅԻՐ (ցրուել բային արմատը. >  
ցանցիր, ցիրուցան)

ՅԻՌ (վայրի էջ)  
ՅՕՂ (շաղ. > ցօղուել)  
ՅՈՒԼ (կենդանի մը)  
ՃԱՐ (հնար, > ճարել, անճար)  
ՄԷԶ (միգրել, միգրապարկ)  
ՄԵՔ (մենք՝ գրաբարը)  
ՄԷԿ (առաջին թիւը)  
(մը)ՄՈՒՌ (ցալ)  
ՄՐՄՌԱԼ (այրուցքով ցախիլ)

ՄՕՐ (մայր բառին սեռականը)

ՅԱՌԵԼ (սնունել)  
ՆԵՌ (հակա-Քրիստոս)  
ՇԱՌ (կարմիր. > շառագունիլ)  
ՈԳԻ (< ոգևորել, ոգևլից)  
ՈՃԻՐ (սպանութիւն. > ճերագործ)  
ՈՉ (չէ. > ոչինչ, ոչնչանալ)  
ՈՌ(ք) (յատակ. > յորի, յոռեգոյն)  
ՈՐԴ (միջատ մը)  
ՈՒԽՏ (> ուխտել, ուխտաւոր)  
ՈՒՂԻ (ճամբայ. > ուղենիշ, ուղե-  
ւոր, ուղեցոյց, ծառուղի)  
ՈՒՌ (ուռնցք)

ՉԱՌԻ (չստացայ)  
ՉՆՉԻՆ (աննշան, դոյզն)  
ՊԵՏ (գլխատուր. > պետական,  
սպարապետ, խմբապետ)  
ՋԵՌ(իլ) (սաստիկ տարնայ. > ջե-  
ռուցիչ, ջեռուցում)  
ՍԱՌ (> սառույց, սառնարան)  
ՍԵՌ (տեսակ)

ՍՈՒՐ (հատու)

ՎԱՌ (կրակոտ, > վառվում)  
ՎԱՌԵԼ (պրել)  
ՎԱՃԱՌԵԼ (ծախել. > վաճառք)  
ՎԵՐ (հակահիշը՝ վար)  
ՎՏԱՌ (ձուկերու խումբ)  
ՏԱՌ (գիր. > տառատեսակ)  
ՏԱՐ (օտար. > տարբեր, տարա-  
գիր, տարաշխարհիկ)  
ՏԱՌԵԼ (ձուկ մը)  
ՏԵՌ (յաթի կտոր)  
ՏՌԱՄԱ (թատերախաղ)

ՕԴ (> օղանալ, օղանցք)

ՄՈՐ (պտուղ մը)  
ՄՈՌ(նալ) (չիշել)  
ՅԱՐԵԼ (ըսել)  
ՆԵՐ (տազերկին)  
ՇԱՐ(ք) (> շարել, շարան)  
ՈՔԻ (ոք դերանունին սեռ. ը)  
ՎՃԻՌ (> վճռել, վճռական)  
(տիր)ՈՋ, (քր)ՈՋ, (ընկեր)ՈՋ  
ՈՐ (յարարերական դերանուն)  
ՈՐԹ (խաղողի տունկ)  
ՈՒՂՏ (> ուղտապան, ընձուղտ)  
ՈՒՂԻՂ (շիտակ. > ուղղել, ուղ-  
ղակի, ուղղել, ուղղագրել)

ՈՒՐ (տեղական մակրայ)  
ՉԱՐԻ (չար՝ բառին սեռականը)  
ՋՆՋԵԼ (մաքրել, ոչնչացնել)  
ՊԷՏ(ք) (անհրաժեշտութիւն. >  
պիտանի, պիտուք, անպէտ)  
ՋԵՐ (ջերմ. > ջերմաց)

ՍԱՐ (լեռ)  
ՍԵՐ (> սերունդ)  
ՍԷՐ (> սիրել, սիրուիլ)  
ՍՈՅՐ (սյացք. > սուրպ)  
(սար)ՍՈՒՌ (դող. > սարսուպ)  
ՎԱՐ (հակահիշը՝ վեր)  
ՎԱՐԵԼ (գործի մղել. > վարիչ)  
ՎՃԱՐԵԼ (տայ. > անվճար)  
ՎԷՐ(ք) (> վիրատուր, կարեվէր)  
ՎՏԱՐԵԼ (վրնտել. > վտարում)  
ՏԱՐ (տանիլ բային հրմ. ը)  
ՏԱՐՐ (նիթ. > տարբական,  
տարբալուծել)

ՏԱՌԵՂ (թռչուն մը)  
ՏԷՐ (> տիրել, տիրութիւն)  
ՏՐԱՄԱ(ագիծ), ՏՐԱՄԱ(դրել),  
ՏՐԱՄԱ(ախօսութիւն)  
ՕԹ (> օթեան, օթեակ)

# ԹՈՒԱԿԱՆՆԵՐՈՒ ՈՒՂՂԱԳՐՈՒԹԻՒՆԸ

## 1.- Բացարձակ թուականներու ուղղագրութիւնը:

Պարզ բացարձակ թուականներն են. – մէկ, երկու, երեք, չորս, հինգ, վեց, եօթ(ը), ութ(ը), ինը, տաս(ը), քսան, հարիւր, հազար, բիւր, միլիոն, միլիառ: *Գրարարի մէջ* բիւր բառը ունէր «տասը հազար» իմաստ, ներկայիս որոշ թիւ չ'արտայայտեր, կը գործածուի «հազարատը» իմաստով:

*Գրարարի մէջ* 7, 9, 10 թուականները եղած են եօթն, ինն, տասն: Ն-ի անկումէն ետք գաղտնավանկ Ը-ը չէ ինկած: Այդ բառերը կ'արտասանուին եօթը, ինը, տասը. ասոնց համարանութեամբ 8 թիւն ալ կ'արտասանուի ութը:

Ոմանք կը գրեն եօթը, ութը, ինը, տասը, ոմանք 8 թուականը կը գրեն ութ, պատճառաբանելով, որ հին ձեւին մէջ անգիր Ը չկայ: Ուրիշներ կը պնդեն գրութեան եօթ, ութ եւ տաս ձևերը, թէ եւ Ը-ի արտասանութիւնը կը պահուի: Ամէն պարագայի ինը կը գրեն:

Տասնաւոր թուականները կը կազմուին ընդհանրապէս (ա)սուն ածանցով, բայց միաւոր հիմքերը նրբամն կը փոխուին: Այսպէս՝ մէկ միաւորը կ'ըլլայ տասը, երկուրը՝ քսան, երեքը՝ երեսուն, չորսը՝ քառասուն, հինգը՝ յիսուն, վեցը՝ վաթսուն, եօթը՝ եօթանասուն, ութը՝ ութսուն, ինը՝ ինիսուն:

Տասնաւոր-միաւոր թուականները կցելով կը գրենք, ինչպէս՝ քսանմէկ... երեսուներկու... քառասունհինգ... յիսունվեց... եօթանասուներեք... ութսունուրթ... ինիսունինը եւ այլն: Ասոնք կցական բարդութիւններ են: 11-19 թուականներուն առաջին բաղադրիչը «տասնը» կը լսուի. այդպէս գրողներ ալ կան. սակայն նախընտրելի է գրել առանց Ը-ի՝ տասնմէկ, տասներկու, տասներեք, տասնչորս, տասնհինգ, տասնվեց, տասնեօթ, տասնուրթ, տասնինը:

Հարիւրատըր դասի թուականները կը գրենք առանձին, այսպէս՝ հարիւր մէկ, երեք հարիւր տասնվեց, ինը հազար երկու հարիւր եօթանասունհինգ, եօթ միլիոն չորս հարիւր

հազար քսանմէկ, վեց հարիւր վաթսունվեց եւ այլն:

*Նախապէս՝* իբրև թուանշան կը գործածէինք մեր Այբուրենի տառերը. առաջին ինը գիրերը միաւորներն են, յաջորդ ինը գիրերը՝ տասնաւորները, երրորդ շարքի ինը գիրերը՝ հարիւրաւորները, իսկ չորրորդ շարքի գիրերը՝ հազարաւորները. այսպէս

Ա	1	Ժ	10	Ճ	100	Ռ	1000
Բ	2	Ի	20	Մ	200	Ս	2000
Գ	3	Լ	30	Յ	300	Վ	3000
Դ	4	Խ	40	Ն	400	Տ	4000
Ե	5	Ծ	50	Շ	500	Ր	5000
Զ	6	Կ	60	Ո	600	Ց	6000
Է	7	Հ	70	Չ	700	Ի	7000
Ը	8	Չ	80	Պ	800	Փ	8000
Թ	9	Ղ	90	Ջ	900	Ք	9000

## 2.- Դասական թուականներու ուղղագրութիւնը:

Դասական թուականները կը կազմեն բացարձակ թուականներուն վրայ ԲՈՐԴ եւ ԵՐՈՐԴ ածանցները աւելցնելով.

– ԲՈՐԴ կ'առնեն երկու, երեք եւ չորս թուականները, այսպէս՝ երկրորդ, երրորդ, չորրորդ:

– ԵՐՈՐԴ կ'առնեն միւս բոլոր թուականները. – հինգերորդ, վեցերորդ, եօթերորդ, ութերորդ, իններորդ, տասներորդ, տասնմէկերորդ, տասներկուերորդ, տասներեքերորդ, տասնչորսերորդ, տասնհինգերորդ եւ այլն:

Մէկ թուականին դասականը կ'ըլլայ առաջին:

Դասականները կը կրճատենք հետևեալ ձևերով.

ա. – Արարական թուանշանով եւ ԲԴ մասնիկով, որ թուականին կրնայ միանալ գծիկով կամ ուղղակի, այսպէս՝ 2-րդ կամ՝ 2րդ (երկրորդ), 3-րդ կամ 3րդ (երրորդ), 10-րդ կամ 10րդ, 158-րդ կամ 158րդ եւ այլն: Այս ձևով կը շարեն դասագիրքի մը դասերը կամ գիրքի մը գլուխները:

Առաջին դասականը կը կրճատուի 1-ին ձևով:

բ. – Արարական թուանշանով եւ փակագիծով, ինչպէս՝ 1) (առաջին), 7) (եօթերորդ), 16), 18), 55) եւ այլն: Այսպէս

բան մը կը թունն առանց տողափոխութիւն ընելու:

գ. - Հայերէնի այբբենական թուանշաններով. կը գործածուի գլխազիրով և կէտով, ինչպէս՝ Ա. (առաջին), Է. (եօթերորդ), ՃԵ. (տասնհինգերորդ): Այս ձևով կը թունն գիրքի մը հատորները, մասերը կամ գլուխները:

դ. - Փոքրատառերով ու կէտով, ինչպէս՝ ա. (առաջին), գ. (երրորդ), իա. (քսանմէկերորդ) և այլն: Այս ձևով կը թունն բան մը: Տողափոխութեամբ թունելու պարագային անջատման գծիկ այ կը դնեն դասականին առջև:

ե. - Փոքրատառերով ու փակագիծով, ինչպէս՝ ա) (Առաջին), բ) (երկրորդ), ծ) (յիսուներորդ) և այլն: Այս ձևով բան մը կը թունն առանց տողափոխութիւն ընելու:

զ. - Հռոմէական թուականներով. ինչպէս՝ I (առաջին), II (երկրորդ), III (երրորդ), IV (չորրորդ), V (հինգերորդ), VI (վեցերորդ), VII (եօթերորդ), VIII (ութերորդ), IX (իններորդ), X (տասներորդ), XI (տասնմէկերորդ), XX (քսաներորդ), XXX (երեսուներորդ), XL (քառասուներորդ), L (յիսուներորդ), LX (վաթսուներորդ), LXX (եօթանասուներորդ), C (հարիւրերորդ), CD (չորս հարիւրերորդ), D (հինգ հարիւրերորդ), DC (վեց հարիւրերորդ), M (հազարերորդ):

4. - Այլ թուականներ:

ԱԿԱՆ ածանցով կը կազմուին բաշխական թուականները, ինչպէս՝ մէկական, երկուքական, երեքական, տասական և այլն: Նոյնը կրնայ կազմուիլ նաև բացարձակ թուականը կրկնելով, ինչպէս՝ մէկ-մէկ, հինգ-հինգ և այլն:

ՆՈՑ ածանցով կազմուած թուականները հաւաքական միատրներ ցոյց կու տան, ինչպէս՝ մէկնոց, երկուքնոց, հինգնոց, տասնոց, հինգ հարիւրնոց, հազարնոց և այլն:

Ամբողջութիւն ցոյց տուող թուական գոյականները կը կազմուին ԵԱԿ ածանցով, ինչպէս՝ երկեակ, երեակ, քառեակ, ութեակ, հնգեակ, տասնեակ, հարիւրեակ:

Այս թուականները կը կրճատուին արարական թուանշանին մօտ ածանցը դնելով՝ 8-ական, 15-նոց և այլն:

Կէտադրական նշանները երեք խումբերու կը բաժնուին՝ տրոհումի, առոգանութեան և բացայայտութեան նշաններ:

Ա. - ՏՐՈՀՈՒՄԻ ՆՇԱՆՆԵՐ

1. - ՎԵՐՁԱԿԷՏ (.)

Վերջակէտը կը դրուի աւարտած նախադասութենէն ետք: Այսպէս՝ «Պօղոս էր անունը: Բսանը նոր անցուցած էր: Քիչ մը տաքութիւն ունէր: Առտուն չէր կրցած գլուխը բարձէն վերցնել: Տարութիւնը շատցած էր: Եղբայրն ու հօրեղբայրը շուարեր մնացեր էին: Ի՞նչ ընէին»:

2. - ՄԻՋԱԿԷՏ (.)

Միջակէտը կը դրուի.

ա. - Միտքով իրարու հետ սերտօրէն կապուած, սակայն որոշ անկախութիւն ունեցող նախադասութիւններու միջև: Երկրորդ նախադասութիւնը ձևով մը առաջինի բացատրութիւնն է: Կրնայ ստորակէտով այ փոխարինուիլ:

- Ամէն նիւթի վրայ խօսեցանք. անիմաստ խօսքեր միայն ըսի կարծեմ. խելքս վրաս ըլլալու չէր. մեկնելու ժամուն կը սպասէի ակնդէտ. դուրս կալ:

բ. - Չակերտի մէջ առնուած ուրիշի խօսքէն առաջ.

Հայրս հարցուց. «Ինչպէ՞ս կ'ընթանան դասերդ»:

Չակերտի փոխարէն խօսակցական գծիկ կը դրուի նոր տողի ներսէն, ինչպէս՝

Հայրս հարցուց.

- Ինչպէ՞ս կ'ընթանան դասերդ:

Միջակէտը նաև կրճատումի նշան է (տե՛ս էջ 92):

3. - ՍՏՈՐԱԿԷՏ (.)

Ստորակէտը կը դրուի.

ա. - Նախադասութեան համադաս անդամներուն միջև: Ինչպէս՝ «Սոխակը, աղանին, անգղն ու արծիւր թռչուններ



են»: «Կը սիրեն ծնողքս, քույրերս, եղբայրներս և ընկերներս»: «Բարձրալարկ, բարաշէն ու մարուր շէնք մը կայ այդ փողոցին մէջ»: «Գարնանային ծաղիկներն են մանուշակը, նունուֆարը, նարգիսը, սմբուլը և այլն»:

Համադաս անդամներէն վերջին երկուքը կը կապուին ու կամ և շաղկապով կամ շարունակելի կրնան համարուիլ և այլն բառով: Ասոնցմէ առաջ ստորակէտ չի դրուիր:

բ. – Համադաս նախադասութիւններու միջև, ինչպէս՝ «Բաղերը կը թռչին, կը բախն ու կը լողան»: «Ելայ տեղէս, պատուհանը գոցեցի և լոյսը մարեցի»:

Համադաս նախադասութիւններէն վերջին երկուքը կը կապուին ու, և, կամ համադասական շաղկապներով: Ասոնցմէ առաջ ստորակէտ չենք դնել, բացի երբ վերջին նախադասութիւնը ենթակայով տարբեր է, ինչպէս՝ «Ծաղիկները թառամեցան, և ծառերը տերևաթափ եղան»: «Հովը փչեց, ու պատուհանին փեղկերը բացուեցան»:

Համադաս նախադասութիւնները իրարմէ կ'անջատուին նաև այլ համադասական շաղկապներով, որոնցմէ առաջ միշտ ստորակէտ կը դրուի: Այդ շաղկապներն են. ալ, ևս, նաև, այլև, անգամ, մանաւանդ, նա՛ մանաւանդ, կամ ալ, և կամ, և կամ թէ, իսկ, բայց, բայց և այնպէս, սակայն, մինչև որ, մինչև իսկ, մինչդեռ, նոյնիսկ, այլ, այնպէս ալ, այսինքն, ուրեմն, այնուամենայնիւ, այսուհանդերձ, և ոչ թէ, ապա թէ ոչ և այլն: Օրինակներ. – «Երիտասարդները պարեցին, իսկ մեծերը հիացան»: «Գնա, սակայն դուրը ետևէդ փակել մի՛ մոռնար»: «Աշակերտները մեկնեցան, մենք ևս ճամբայ ելանք»:

Կարգ մը համադասական շաղկապներ զուգադիր կ'ըլլան, կազմուած ըլլալով երկու բառերէ. մէկը կը գործածուի առաջին նախադասութեան, իսկ երկրորդը՝ երկրորդ նախադասութեան հետ: Ստորակէտը կը դրուի երկրորդէն առաջ: Այսպէս՝

Ոչ թէ...., այլ

Ոչ թէ գիշեր եկաւ, այլ արեւի խաւարում պատահեցաւ:

Ոչ միայն...., այլև

Ոչ միայն քաջ զինուոր էր, այլև՝ ճարտար ռազմագէտ: Շարք մը զուգադիր շաղկապներ կրկնադիր կը կոչուին՝ կազմուած ըլլալով նոյն շաղկապի կրկնութեամբ: Ուշադիր անոնց կէտադրութեան.

եւ...., եւ	ո՛չ...., ո՛չ	կամ...., կամ
թէ...., թէ՛	ո՛չ...., ոչ ալ	կամ... և կամ
թէ... և թէ	ո՛չ... և ոչ	կամ...., կամ ալ

Օրինակներ. – «Թէ՛ կու լամ, թէ՛ կ'երթամ»: «Ո՛չ կը պարես, ո՛չ կ'երգես»: «Կամ կը վերադառնաս շուտով, կամ ալ կը հեռաձայնես»:

գ. – Գլխաւոր և ստորադաս նախադասութիւններուն միջև: Ստորակէտը կը դրուի ստորադաս նախադասութիւնը սկսող շաղկապէն առաջ: Ստորադասական շաղկապներն են՝ որ, թէ, եթէ, որպէսզի, որովհետև, մինչև, մինչև որ, մինչ, թէև, հակառակ անոր որ, մինչև անգամ եթէ, եթէ նոյնիսկ, ուստի, ուրեմն, հետևաբար, միայն թէ, պայմանաւ որ, բան թէ, թէկուզ, թէպէտ, թէպէտև, բանի որ, բանի դեռ, բանի, նախքան որ, մանաւանդ որ, չէ՞ որ, վասնզի, քանզի և այլն: Օրինակներ. «Հօրեղբայրս ըսաւ, թէ մեզի պիտի հանդիպի»: «Ուսուցիչը բացատրութիւնը կրկնեց, որովհետև նիւթը բարդ էր»: «Չմեռը ուշացաւ, այնպէս որ վառելանիւթի տազնապ չ'ենթադրուիր»: «Քեզի կայարանը կը սպասեմ, հետևաբար մի՛ մտահոգուիր»: «Անձրեւանոց չ'վերցուց, հակառակ անոր որ եղանակը անձրեւային կ'երևար»:

Եթէ ստորադաս նախադասութիւնը, այսինքն՝ շաղկապով սկսող նախադասութիւնը նախադաս ըլլայ, ստորադասը գերադասէն դարձեալ ստորակէտով կը բաժնուի: – «Մինչ ևս կ'երգէի, ընկերս երգարանը կը պրպտէր»: «Եթէ կը փափաքիս, կրնաս մասնակցիլ մեր խնճոյքին»: «Բանի կ'աշխատիս, չես ծերանար»: «Բանի դեռ ձմեռ է, վերաբերում ուսէդ մի՛ հաներ»:

Ոմանք նախադաս ստորադաս նախադասութիւնը ստո-

րակէտի փոխարէն բութով կ'անջատեն:

դ. - Յարաբերական դերանուններէն առաջ. - որ, ով (որ), ինչ (որ), ուր (որ), որչափ (որ), ինչքան, քանի, ինչպիսի, ինչպէս (որ): Որ յարաբերականը կը հոլովոյի եւ ունի եզակի եւ յոգնակի ձևեր. - որ, զոր, որուն, որմէ, որով. որոնք, զորոնք, որոնց, որոնցմէ, որոնցմով: *Օրինակներ.* «Կը սիրուի այն մարդը, որ պատուով կը ծառայէ հայրենիքին»: «Կը սիրուին այն մարդիկը, որոնք կը ծառայեն հայրենիքին»: «Կը կարդամ այն գիրքը, զոր քեզմէ խնդրած էի»: «Երթանք այն պարտէզը, ուր մեծ հայրիկը կ'երթար»: «Կ'ընենք այնպէս, ինչպէս որ պայմանաւորուած ենք»:

Ստորադաս նախադասութիւնը կրնայ միջադաս ըլլալ, այդ պարագային երկու կողմէն ստորակէտ կ'առնէ. Այսպէս՝ «Բակը, ուր շատ խճողում կար, մատանիս կորսնցուցի»: «Նամակը, զոր ստացայ, 12 Դեկտ. 1998 թուակիր էր»: «Այդ մարդը, որ հետդ խօսեցաւ, հօրեղբայրս է»: «Այն տղաքը, որոնց մասին դրուատանքով կը խօսին, մեր աշակերտներն են»:

Ստորադաս նախադասութիւնը կրնայ նախադաս ըլլալ, այդ պարագային գլխաւորէն բութով կը բաժնուի: - «Ով որ կը փափաքի՝ կրնայ ներկայ ըլլալ»: «Ինչ որ կ'ուզես՝ պիտի ստանաս»: «Ով կ'աշխատի՝ ան կ'ուտէ»:

ե. - Բացայայտեալէն ետք՝ բութ, իսկ բացայայտիչէն ետք ստորակէտ կը դրուի: - «Բաֆֆի՛ հայ մեծագոյն վիպասանը, մահացաւ 53 տարեկանին»: «Արշակ Զոլխանեան՝ մեր առաջին օփերային հեղինակը, Պոլիս մահացաւ»: «Պետրոս Դուրեան՝ Սկիւտարի Սոխակը, քնարերգակ բանաստեղծ մըն է»:

զ. - Կոչականներէն եւ ձայնարկութիւններէն ետք: - «Վայրի՛ ծաղիկ, անունդ ի՞նչ է»: «Երկինքի՛ աստղեր, հոգուդ մէջ ինչէր»: «Լ՛ի, մնաք բարով, Աստուած եւ արեւ»: «Հօյ հօյ, առուն կը հասնի ցանկապատին քովերէն»:

Երբ ձայնարկութիւնը գործածուի կոչականի մը հետ, ձայնարկութենէն ետք ստորակէտ չի դրուիր: - «Լյ ջա՛ն

հայրենիք, ինչքա՛ն սիրուն ես»:

է. - Մեկնական արտայայտութեան մը, այսինքն՝ գաղափար մը մասնաւորող արտայայտութեան մը երկու կողմէն: Այսպէս՝ «Անդին, պատին տակ, խարխիկ շէնք մը կ'երևար»: «Երկար ատեն, թերեւս ժամ մը, այդպէս շրջեցաւ հոն»: «Ստացած գումարս, արդէն շատ ոչինչ բան մը, սպառած էր»:

ը. - Ուղղակի խօսքին մէջ գտնուող հեղինակային խօսքը կը բաժնուի ստորակէտով եւ անջատման գծիկով:

- Նոր հասայ, - ըսաւ ճամբորդը, - Երեւանէն կու գամ:  
- Բարի եկար, ի՞նչ լաւ յորեր հայրենիքէն, - հարցուց բարկամը:

թ. - Պատասխանական «այո՛», «ո՛չ», «չէ՛» բառերէն ետք: - «Այո՛, պիտի շարունակենք մեր պայքարը»: «Ոչ, պիտի չիյնանք թշնամիին հարուածէն»:

#### 4. - ԲՈՒԹ (՛)

Բութը կը դրուի հետեւեալ պարագաներուն.

ա. - Նախադասութեան զեղչուած ստորոգիչին տեղ: - «Մենք գիտ գացինք, անոնք՝ ծով»: «Իմ վարդս կարմիր էր, քու վարդդ՝ դեղին»: «Մայրը՝ հարաւի, իսկ գառակը հիւսիսի ճամբան բռնեց»:

բ. - Ուրեմն, այսինքն, հետևաբար, օրինակ, այսպէս բացատրական բառերէն վերջ, իսկ անոնցմէ առաջ ստորակէտ կը դրուի: - «Այսինքն՝ կ'ուզես, որ մոռնամ քեզ»: «Օրինակ՝ սա մեր տղան այ ըսածիդ պէս է»:

գ. - Նախադաս ստորադասական նախադասութիւններէն ետք: Այսպէս՝ «Քանի որ շատ յոգնած էի՝ նախընտրեցի քնանալ»: «Ով որ քաջ է՝ ի՞նչ կը սպասէ»: «Ինչ որ տամ՝ պարտաւոր էք պահել»: «Ինչ որ ցանես՝ զայն կը հնձես»:

դ. - Բացայայտեալը բացայայտիչէն բութով, իսկ բացայայտիչը նախադասութեան միւս անդամներէն ստորակէտով կը բաժնուին: - «Յովի. Թումանեան՝ Ամենայն Հայոց Բանաստեղծը, ծնած է Լոռիի Դսեղ գիղին մէջ,

1869ին»: «Արծիւր՝ գիշատիչ թռչուն մը, չափազանց սրատես է»:

և. - Թուարկութիւն ցոյց տուող նախ, ապա, յետոյ, առաջին, երկրորդ, երրորդ և նման բառերէն ետք: - «Նախ՝ գործիդ գնա, ապա՝ հանդիպիր քեռիին, յետոյ՝ տուն եկուր»: «Միտքդ պահէ. առաջին՝ հաւատք, երկրորդ՝ յոյս, երրորդ ու վերջինը՝ սէր»:

## Բ. - ԱՌՈԳԱՆՈՒԹԵԱՆ ՆՇԱՆՆԵՐ

Առողջամտութեան նշանները երեք հատ են՝ շեշտ (ˊ), պարոյկ կամ հարցման նշան (ː) և երկար (ˉ): Անոնք կը դրուին բառի վերջին ձայնատրին վրայ.

գրէ՛, սպասեցէ՛ք, հեռացի՛ր, դադրեցուցէ՛ք.

• քանի՞, ո՞վ, ո՞ր, ինչպիսի՞.

ափսո՛ս, եղո՛ւկ, բարէ՛, մն՛ դք, երանի՛:

Գրուող թէ՛ չգրուող Ը ձայնատրը առողջամտութեան նշաններ չի կրեր: Անոր գոյութեան պարագային առողջամտութեան նշանները կը դրուին նախորդող վանկի ձայնատրին վրայ.

գի՛րբը, գի՛րբդ, գի՛րբս.

Աղեքսա՛նդր, Աղեքսա՛նդր, Աղեքսա՛նդր:

Ը գիրը շեշտ ու երկար կ'առնէ միայն բնաձայններուն մէջ, ինչպէս՝ մը՛րթ, բը՛շշ, բը՛րթ, խը՛ շշ, մը՛ ոռ....

### 1. - ՀԱՐՑՄԱՆ ՆՇԱՆ ԿԱՄ ՊԱՐՈՅԿ (ː)

Հարցման նշանը կամ պարոյկը կը դրուի.

ա. - Հարցական դերանուններուն վրայ՝ ո՞վ (զո՞վ, որո՞ն, որմէ՞, որո՞վ), որո՞նք (զորո՞նք, որո՞նց, որոնցմէ՞, որոնցմո՞վ), ո՞ր, ուրկէ՞, ո՞ր, ի՞նչ (ինչի՞, ինչէ՞, ինչո՞վ. ինչն՛ր, ինչերո՞ւ, ինչերէ՞, ինչերո՞վ), ինչո՞ւ, ինչպէ՞ս, ինչպիսի՞, քանի՞ (քանիի՞, քանիէ՞, քանիո՞վ), որքա՞ն, որչա՞փ:

Նկատի ունենալ, որ հարցական նշանը կը դնենք միայն

ուղղակի հարցումին վրայ: Անուղղակի հարցումին մէջ անոր փոխարէն շեշտ կը դրուի: Օրինակ՝  
Տիգրանը հարցուց. - «ո՞ր մնացիր»: (Ուղղակի հարցում)  
Տիգրանը հարցուց, թէ ո՞ր մնացի: (Անուղղակի հարցում)

բ. - Հարցման նշանը կրնայ դրուիլ որևէ բառի վրայ, որ հարցում կը կրէ: - «Յակոբ՛ը բեզ անարգեց»: «Յակոբը բե՛զ անարգեց»: «Յակոբը բեզ անարգե՛ց»:

## բ. - ՇԵՇՏ

Շեշտը կը գրուի.

ա. - Բայի հրամայական ձևերուն վրայ, ինչպէս՝ գրէ՛, գրեցէ՛ք, հեռացի՛ր, հեռացէ՛ք, հեռացո՛ւր, հեռացուցէ՛ք:

բ. - Արգելական ՄԻ՛ ցուցիչին վրայ՝ մի՛ գրեր, մի՛ գրէք, մի՛ հեռանար, մի՛ հեռացնէք:

գ. - Խօսքին մէջ գտնուող կոչականին վրայ, այսինքն՝ այն բառին, որուն կ'ուղղուի խօսքը: Այսպէս՝ «Կ'անձրևէ, տղա՛ս, աշունը թաց է»: «Ինչո՞ւ ապշած ես, լճա՛կ, ու չեն խայտար բու ալեակը»: «Յախս խորերէն, տն՛ս, ճակատագի՛ր, անսահման ծիծաղ մունիս բեզի գէմ»:

Կոչականը լրացում ունենալու պարագային՝ շեշտը կը դրուի վերջին լրացումին վրայ: - «Երկնքի՛ աստղեր, հոգույս մէջ ինկէք...»: «Վայրի՛ ծաղիկ, անունդ ի՞նչ է»:

Ո՛վ, օ՛, հէյ ջա՛ն բացազանչութիւններով սկսող կոչականներու պարագային շեշտը կը դրուի ասոնց վրայ, բայց աւելի յաճախ երկարը. ինչպէս՝ «Հէյ ջա՛ն հայրենիք, ինչքան սիրուն ես»: «Ո՛վ լուսադրիւր գիշեր, յոյսի շատրուան, ողողէ՛ զիս շիթերուդ բոց անձրևով»:

Կոչականը նախադասութենէն ստորակէտով կը բաժնուի:

դ. - Պատասխանական «այո՛», «ո՛չ» կամ «չէ՛» բառերը շեշտ կ'առնեն և ստորակէտով կը բաժնուին կից նախադասութենէն: - «Չէ՛, թող ես գնամ... ա՛խ, ի՛նչ խենթ եմ ես»: «Այո՛, ես ծնում եմ մի կորիւն, բայց առիծ եմ ծնում և ոչ բեզ նման աղուէս»:

ն. - Անդէմ նախադասութիւններուն գլխաւոր անդամին վրայ: Այսպէս՝ «Չծխել»: «Գետինը աղը չթափել»: «Թրքերէն խօսողին հայերէն պատասխանել»:

գ. - Անուղղակի հարցումին վրայ: - «Հարցուց, թէ որքան պանան կ'ուզեմ»: «Ո՛վ իմանայ՝ ո՛ր ընկանք, քանի՛ օրուայ հիւր ընկանք»:

է. - Կրկնադիր շաղկապներուն վրայ: - «Ո՛վ է տեսել էսպէս հարսնիք. - ո՛չ հարս ունի, ո՛չ փեսայ»: «Համբոյրիդ մէջ էլ Ն՛ւ կեանք ես, Ն՛ւ մահ, Ն՛ւ մութ անդունդ ես, Ն՛ւ կանթեղ ես ջինջ» (Կրկնադիր շաղկապները տես էջ 79):

ը. - Ա՛յ (այլևս), ո՛չ մէկ, գո՛նէ, մանաւանդ բառերուն վրայ: - «Աշխարհի ո՛չ մէկ ժողովորդի հետ կը փոխեն իմ ժողովորդս, ազգս՝ ո՛չ մէկ ազգի հետ»:

թ. - Խօսողին կողմէ յատկապէս շեշտուող բառին վրայ: - «Դո՛ւն ուզեցիր, որ այսպէս ըլլայ»:

### 3. - ԵՐԿԱՐ ԿԱՄ ԲԱՑԱԳԱՆՉՈՒԹԵԱՆ ՆՇԱՆ ( )

Երկարը կամ բացազանչութեան նշանը կը դրուի այն բառին վրայ, որ բացազանչումով կ'արտայայտուի, ինչպէս՝

ա. - Հոնտորական հարցումները, երբ հարցական դերանունները երկար կ'առնեն: - «Ո՛ր մնացին տարիներս»: «Ի՛նչ պէտք, ի՛նչ պէտք սակայն ըսել այս բոլորը»:

բ. - Անդէմ նախադասութեան գլխաւոր անդամը, որ փափաք կ'արտայայտէ: - «Երթա՛յ, երթա՛յ, երթա՛յ առանց ճրագի, երթա՛յ առանց սուգի, լացի, փափաքի...»:

գ. - Ամէն բառ, որ բացազանչական երանգով մը կ'արտասանուի խօսողին կամ գրողին կողմէ: - «Հովն՝ ր կ'անցնին ու ցորեաններս յուշիկ-յուշիկ կ'արթնան»: «Լինէ՛ր հեռու մի անկիւն, լինէ՛ր մանկան արդար բուն»:

### 4. - ՉԱՅՆԱՐԿՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԿԷՏԱԴՐՈՒԹԻՒՆԸ

Բոլոր ձայնարկութիւններն այ կամ շեշտ ունին, կամ երկար:

ա. - Զգացական ձայնարկութիւններէն երկար ունին ա՛յ, վա՛յ, ա՛յս, վա՛յս, ո՛ւյ, ո՛հ, աւա՛ղ, եղո՛ւկ, բաբէ՛,

մե՛ղք, երանի՛, ափսո՛ս, իցի՛ր թէ՛ եւ այլն: Շեշտ կ'առնեն կեցցէ՛, կեցցն՛ս, ամա՛, թի՛ւհ, փո՛ւ:

բ. - Կանչ արտայայտող բացազանչութիւններէն երկար ունին հէ՛յ, ո՛վ, օ՛, ho՛ եւ այլն: Շեշտ ունին օ՛ն, ծօ՛, քա՛ եւ այլն:

գ. - Բնաձայնական ձայնարկութիւններէն երկար ունին ճի՛ւ-ճի՛ւ, ծի՛ւ-ծի՛ւ, միաո՛ւ, հաո՛ւ, տը՛զզ, խը՛շշ, ճը՛ռռ եւ այլն: Շեշտ ունին թը՛յսկ, թը՛փ, շըր՛յսկ, քը՛րթ եւ այլն:

Բոլոր ձայնարկութիւններն այ նախադասութեան միւս անդամներէն սովորաբար ստորակէտով կ'անջատուին: Այսպէս՝ «Ո՛հ, տուէ՛ր հոգոյս կրակի մի կաթիլ»: «Ա՛յս, չէ՛, ամա՛ն, ասում են դա մի դիակ է յո՛ւտ, սառած»:

«Օ՛, մայրս սուրբ էր, սուրբ հօրս վայել»:

### Գ. - ԲԱՑԱՅԱՅՏՈՒԹԵԱՆ ՆՇԱՆՆԵՐ

#### 1. - ՉԱԿԵՐՏ « »

Չակերտներու մէջ կ'առնուին.

ա. - Ուրիշի մտածումը, գրած կամ արտասանած ուղղակի խօսքը: Չակերտէն առաջ սովորաբար միջակէտ կը դրուի: - Կը գրէ մայրս. «Ո՛վ իմ որդեակս պանդուխտ, դեռ մինչև ե՛րբ պիտի օտար երկնի տակ օրերդ անցնին»:

բ. - Գրաւոր այլ աղբիւրէ մը կատարուած մէջբերումները: Չակերտէն առաջ դարձնայ միջակէտ կը դրուի: - Ժողովրդական խօսքը յայտնի է. «Ուր հաց՝ հոն կաց»:

գ. - Ուրիշի խօսքէն այն պատահիկները, որ հեղինակ մը կը գործածէ իր խօսքին մէջ: - Իր ատենարանութիւններուն մէկ մասը կը սկսի «Խնամակալուի տիկնայք»ով, մէկ մասը՝ «Տեսարք եւ տիկնայք»ով, մէկ մասն այ՛ «Տեսարք»ով:

դ. - Գիրքերու, թերթերու եւ այլ արունստի գործերու անունները: - Տիգրան Չոխաճեանի «Արշակ Բ.» օփերան, Բաֆֆի «Խննթը» վէպը, Այվազովսկիի «Դէպի Արարատ» իդանկարը, Գր. Արծրունիի «Մշակ» թերթը ԺԺ. դարու

իրագործումներ են:

ե. - Հաստատություններու անունները: - Տպարան «Արևելք», «Սեւան» հրատարակչատուն, «Անի» ճաշարան, «Արարատ» հանրախանութ:

զ. - Հեզանքով կամ հակառակ իմաստով ըսուած բաներն ու կապակցությունները: - Եւ այդ «իմաստունն» սկսաւ այնպիսի անհեթեթություններ ըսել, որ բոլորին ծիծաղը կը շարժէր:

2.- ՓԱԿԱԳԻԾ

Փակագիծերու մէջ կ'առնուին.

ա. - Միջանկեալ նախադասությունները: - «Հօրաքոյրներուս կամ հօրրիկներուս (ինչպէս սորվեցուցած էր ինծի ըսել տորթ. Ռուսինեան) անչափ կապուած էի»:

բ. - Միջանկեալ բացատրություններն ու ծանօթութիւնները: - «Որդան կարմիրը (հոս համանուն որդէ մը պատրաստուած ներկը) կ'արտածուէր Հայաստանէն»: «Անին (Բագրատունեաց հարստութեան մայրաքաղաքը) կառուցուած է Ախտրեան գետի աջ ափին վրայ»:

գ. - Հեղինակներու ծածկանուններուն յաջորդող բուն անունն ու մականունը, կամ ծննդեան թիւն ու վայրը, մահուան թիւն ու վայրը. վերջին երկուքը անջատման գծիկ կ'առնեն: - «Րաֆֆիի (Յ. Մելիք Յակոբեան) «Սամուէլ»ը պատմավէպ է»: «Յովհ. Թումանեան (1869, Դսեղ - 1923, Մոսկուա) ժողովրդական գրող մը եղաւ»:

դ. - Մէջբերումէ մը ետք տրուած մատենագրական ծանօթութիւնը: - «Լեզուն միաժամանակ գեղեցկութիւն է եւ տրամաբանութիւն. այսինքն՝ արուեստ է եւ գիտութիւն» (Բենիամին Թաշեան, «Թիւրն ու Թերին», Պէյրութ, Տպ. Համազգային, 1968, էջ 5):

ե. - Թատերական տիպոկի մէջ հեղինակային նշումը: - ՍԵՒԱԿ. - (Զապէլի՝ հեզնական) Կարծեմ բառական պաշար հաւաքեցիր:

ԶԱՊԷԼ. - (ինքնիրեն) Այսօր շատ անիմաստ օր մըն էր:

3.- ԿԱՆՄԱՆ ԿԷՏ (...)

Կախման կէտը կը դրուի.

ա. - Երբ հեղինակը դիտմամբ անաւարտ կը ձգէ իր խօսքը, ապա կը շարունակէ անակնկալ, երբեմն զանդատական վախճան մը տալով խօսքին: - «Քանի մը երիտասարդներ մէջտեղ ելած ընկերութիւն մը հաստատուած են. ասոնք ո՛չ իրենց ըրածը գիտեն եւ ո՛չ ալ ընկիբը... այսպիսի ընկերութիւնները ազգին չարիք հասցնելէն ուրիշ բանի մը չեն ծառայեր, ուստի մենք որոշեցինք ընկերութիւն մը կազմել... այդ ընկերութիւնը կործանելու համար»:

բ. - Երբ զգացական վիճակներու պատճառով խօսքը կը կտրատուի, կը կրկնուի: - «Ի՞նչ... Ի՞նչ ... ըսել է պիտի պատմե՞ս... առանց ամչնալու պիտի պատմե՞ս եղածները...»:

4.- ԲԱԶՄԱԿԷՏ (...)

Բազմակէտը կրնայ չորս կէտէն աւելի ըլլայ, երբեմն՝ ամբողջ տող մը, կամ քանի մը տողեր: Գրականութեան մէջ բազմակէտ կը դրուի, երբ անվայել կամ աւելորդ կը նկատուի նկարագրել բան մը, զոր ընթերցողը կը հասկնայ:

Հարցաթերթիկներու, բնութագիրներու եւ քննական վարժութիւններու մէջ բազմակէտ դրուած կ'ըլլայ լրացուելիք բառին կամ արտայայտութեան տեղը:

5.- ԱՊԱԹԱՐՅ (')

Ապաթարցը արդի հայերէնի մէջ կը դնենք երբ բայական ԿԸ եւ ԶԻ մասնիկներուն ձայնաւորները կը զեղչենք, ինչպէս՝ կ'երգէ, չ'երգեր, կ'ուգէ, չ'ուգեր (տն՝ս էջ 17, 48):

6.- ՄԻՈՒԹԵԱՆ, ԱՆԶԱՏՄԱՆ ԵՒ ՏՈՂԱԴԱՐՁԻ ԳԾԻԿՆԵՐ

(-) (-) (-)

Հին տպագրութեան մէջ, եւ մասամբ ներկայիս, այս երեք գիծերը չափով ու ձևով տարբեր են. - անջատման գծիկը համեմատաբար աւելի երկար է քան միութեան գծիկը, իսկ տողադարձի գծիկը (ենթամնայ) կարճ ու

ալիքաձևն է: Արդի տպագրութեան մէջ երեք գծիկներն ալ յաճախ նոյն չափը ունին, միայն դիրքով կը տարբերին: Անջատման գծիկը երկու կողմերէն պարապտիսին կը պահանջէ, իսկ միութեան գծիկը ուղղակի կը միացուի կից բառերուն: Տողաղարձի գծիկը կը դրոյ տողին ծայրը:

Անջատման գծիկ կը դրոյ:

ա. - Ուղղակի խօսքէն առաջ, նոր տողի ներսէն, եւ ուղղակի խօսքին մէջ տեղ գտած հեղինակի խօսքին երկու կողմերը, ստորակէտէ ետք: Այսպէս.

- Օ, դուն նշանաւոր բանաստեղծ ես եղեր, եւ մենք չէինք գիտեր մինչեւ հիմա, - ըսաւ Տիկին Զիմպիլեան:

- Չէ՛, տիկին, - պատասխանեց Գէորգ, - ուրիշներ ալ գրած ունին, սակայն երևան չեմ հանած:

բ. - Երկու թուականներու միջև, որոնք կ'արտայայտեն մօտաւորութիւն, առաջինէն մինչև միւսը: - «Հարուստ տնտեսութիւն մը ունէին. տասը - տասինհինգ կով, հարիւր յիսուն - երկու հարիւր ոչխար, տասը - տասնինհինգ ձի»:

գ. - Տողափոխութեամբ բան մը թող դասական թուականներէ ետք: Այսպէս՝

Հայերէնի բաղաձայնները կը բաժնուին երեք խումբերու.

ա. - պայթականներ

բ. - կիսաշփականներ

գ. - շփականներ

դ. - Բառարաններուն մէջ գլխաբառը բացատրութենէն բաժնելու համար: Այսպէս՝

ԹԱԿԱՐԴ - ծուղակ, որոգայթ

ե. - Տրոհումի նշաններ չգործածող արդի բանաստեղծներէն ոմանց կողմէ կը գործածուի տարբեր պաշտօններով: -

Յո՞յս ուզէիր - երա՞գ - պատրա՞նք - ինքս լեցուն եմ այնքան

Առ ըսէի - որքան կ'ուզես - որքան կրնաս - աւելի -

Միութեան գծիկը կը միացնէ երկու բառեր՝ իբրև մէկ

բառական ամրողչութիւն: Այսպէս՝ «Յայտարարութիւնը պատառ-բզիկ եղած էր»: «Նար-Դոս արևելահայ մեծ վիպասան մըն է»:

Ենթամնայ կամ տողաղարձի գծիկ կը դրոյ տողաղարձի ատեն: Հայերէնի տողաղարձը կը կատարուի վանկային օրէնքով, այսինքն՝ վանկ առ վանկ. ատր համաձայն միշտ յաջորդ տողին մէկ բաղաձայն կ'անցնի, ինչպէս՝

ա-ման, բե-բան, սե-ղան, գի-շեր

պար-տէգ, գառ-նուկ, տետ-րակ

անձ-բեւ, բարձ-րիկ, վարձ-կան

Այս պարագան ոմանց մօտ բացարձակ օրէնք է, նաեւ այն պարագաներուն, երբ վանկը կը սկսի եւ, իա, իո երկհնչիւններով՝ սե-նեակ, հե-քիաթ, Իտա-լիա, Իտա-լիոյ, ամ-պիոն, սակայն աւելի ընթացիկ է տողը սկսիլ երկհնչիւններով՝ սեն-եակ, հեք-իաթ, Իտալ-իա, Իտալ-իոյ, ամպ-իոն, հայ-եացք եւ այլն: Ամէն պարագայի, -թիւն, -թեան եւ -թեամբ վերջաւորութիւններուն մէջ Թ գիրը կ'անցնի երկհնչիւնին կողմը՝ քա-ջու-թիւն, քա-ջու-թեան, քա-ջու-թեամբ:

Սուղ Ը-ը տողաղարձի ատեն կը գրուի, եթէ պատահի վերի տողի վերջաւորութեան կամ վարի տողի սկիզբը.

սը-գալ, ըգ-գալ, գիր-քըս, գիր-քըղ

ըս-կը-սիլ, փըն-տը-ոել, գըր-գը-ոել

Ենթամնայ գաղտնավանկ Ը-ը ոմանք չենք գրեր:

«Մէկուկէս վանկանի» կոչուող բառերը չենք վանկատեր՝ վագր, սանր, բարձր, կարծր, գամփո եւ այլն:

Սուղ Ը-ը ՈՒ (Վ) բաղաձայնէն առաջ գալու պարագային՝ Ը-ը կը գրեն, իսկ ՈՒ-ն կը վերածեն Ի-ի: Այսպէս. - նուէր՝ նր-ւէր, Նուարդ՝ Նը-ւարդ, թուում՝ թը-ւում, առտուրնէ՝ առտը-ւրնէ եւ այլն: ՈՒ>Ի վերածումը այլ պարագաներու ոմանք կը կիրարկեն, ոմանք ոչ, ինչպէս՝ տար-ուիլ կամ տար-իլ, Աստ-ուած կամ Աստ-ւած: Նախընտրելի է առաջին ձևը:

Գլխագիրով կը գրենք.

1. - Մարդոց անունները եւ մականունները, ինչպէս՝ Խաչատուր Արովեան, Յակոբ Պարոնեան, Միսաք Մեծաբննց, Սմբատ Բագրատունի, Սահակ Պարթև:

2. - Գրողներու եւ արուեստագէտներու ծածկանունները՝ Գառգու (Գառնիկ Ջուլումեան), Ռուբէն Սեւակ (Ռուբէն Զիլինկիրեան), Սիամանթօ (Ատոմ Եարճանեան):

3. - Հանրայայտ բնորոշումները, ինչպէս՝ Նորավէպի Իշխանը (Գր. Զոհրայ), Ամենայն Հայոց Բանաստեղծը (Յովհ. Թումանեան), Սկիտարի Սոխակը (Պ. Դուրեան):

4. - Կենդանիներու տրուած յատուկ անունները, ինչպէս՝ Ծաղիկ (կոպու), Չայօ (շունի), Սեուկ (ձիու):

5. - Տեղի անունները՝ Արաքս, Եփրատ (գետեր), Արարատ, Արագած (լեռներ), Ասիա, Ափրիկէ (ցամաքամասեր), Յունաստան, Եգիպտոս (երկիրներ), Միջագետք, Պալբաններ (աշխարհագրական շրջաններ), Երեւան, Դամասկոս (քաղաքներ), Օշական, Բեսապ (գիղեր):

6. - Պարզ կը գրենք այն անունները, որոնք մէկ առարկայ ցոյց կու տան, ինչպէս՝ երկիր, լուսին, արեւ, բայց երբ կը խօսուի երկնային մարմիններու մասին՝ կը գրենք գլխագիրով, ինչպէս՝ Երկիր, Հրատ, Փայլածու (մոլորակներ), Լուսին (արբանեակ), Յարդագողի ճանապարհ, Մեծ Արջ, Լուսաստղ, (աստղեր):

7. - Թերթի, գիրքի, գրուածքի անունները եւ հաստատութեանց փոխանունները, զորս չակերտի մէջ կ'առնենք, ինչպէս՝ «Ազգակ» օրաթերթ, «Բագին» ամսագիր, «Գանձասար» շաբաթաթերթ, Բաֆֆիի «Կայծեր» վէպը, Ղազարոս Աղայեանի «Անահիտ» հեքիաթը, Պետրոս Դուրեանի «Տրտունջը» քերթուածը, «Արևելք» տպարան, «Անի» ճաշարան, «Սեւան» հրատարակչատուն:

8. - Բաղադրեալ յատուկ անունները.

ա. - Պետութեան անունները, ինչպէս՝ Ամերիկայի Մի-

ացեալ Նահանգներ, Սուրիական Արարական Հանրապետութիւն, Մեծն Բրիտանական Թագաւորութիւն:

բ. - Յատուկ անուններու կապուած մնայուն մակդիրները, ինչպէս՝ Մեծն Տիգրան, Հայկ Նահապետ, Աշոտ Երկաթ, Գայլ Վահան, Աշոտ Ողորմած, Խրիմեան Հայրիկ, Ներսէս Շնորհալի, Փոքր Ասիա, Նոր Նախիջեւան, Ղազար Փարպեցի, Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ:

գ. - Եկեղեցական, քաղաքական, բարեսիրական կեդրոնները, ինչպէս՝ Բերիոյ Թեմի Ազգային Առաջնորդարան, Պոլսոյ Պատրիարքարան, Գարակէօզեան Հիմնարկ:

դ. - Միութիւններու, կազմակերպութիւններու, կուսակցութիւններու, պաշտօնական մարմիններու եւ խորհուրդներու անունները, ինչպէս՝ Միացեալ Ազգերու Կազմակերպութիւն, Սուրիահայ Օգնութեան Խաչ, Հայ Բարեգործական Ընդհանուր Միութիւն, Երեսփոխանական Ժողով, Ուսումնական Խորհուրդ:

ե. - Կրօնական եւ ոչ կրօնական անձերու տիտղոսները, աստիճանները, վերադիրները, պաշտօնն ու վայրը գրաւոր խօսքի կամ դիմումի մէջ գլխագիր կը գրենք՝ կրճատելով, ինչպէս՝ Ն (որին) Ս (ուրը) Օ (ծութիւն) Տ (էր) Տ (էր) Գարեգին Ա (ռաջին) Կաթողիկոս Ամենայն Հայոց, Գեր (աշնորհ) Տ (էր) Սուրէն Սրբ (ազան) Արք (եպիսկոպոս) Գաթարոյեան՝ Բարեջան Առաջնորդ Բերիոյ Թեմին, Հոգ (եշնորհ) Տ (էր) Նորայր Ծ (այրագոյն) Վրդ. (վարդապետ) Աշրգեան, Արժ (անապատի) Տ (էր) Ատոմ Ա (ուր) Բհն. (քահանայ) Բեհիայեան, Գր. Արդ. (արեղայ) ԶիՅ թճեան, Սերոր Սրգ. (սարկաւազ) Գույեան, Հ (այր) Ղեւոնդ Ալիշան, Պատ (ուելի) Ս. Մկրրտիչեան, Վեր (ապատուելի) Ս. Բիլաղպեան, Տքթ. (տոքթոր) Խ. Ասլանեան, Դոկտ. (դոկտոր) Բ. Մինասեան, Պրն. (պարոն) Վ. Ղազարեան, Օրդ. (օրհորդ) Ս. Պարոնեան, Տիկ. (տիկին) Լ. Արոյեան: Սովորական խօսքի մէջ վերադիրները դուրս կը մնան, իսկ տիտղոսներն ու պաշտօնները պարզ կը գրուին. - Սահակ կթղ. (կամ՝ կաթ.), Յուսիկ քին. Սեղրակեան, Նորայր ծ. վրդ. Աշրգեան, վեր. Ս. Բիլաղպեան, պրն. Յովհ. Մուշեղեան եւ այլն:

գ. - Բաղադրեալ անուններուն վերջին բաղադրիչը պարզ կը գրենք, եթէ հասարակ անուն մըն է, ինչպէս՝ Սեանայ լիճ, Նեղոս գետ, Արարատեան դաշտ, Ազգ. Սահակեան վարժարան, Քարէն Եփփէ Ազգ. ճեմարան, Տարոսեան լեռնաշղթայ, Վարագայ վանք, Ս. Փրկիչ հիւանդանոց, Սև ծով, Հիւսիսային Սառուցեալ ովկիանոս, Հարաւային բևեռ, Հասարակաց գօտի:

## ԿՐՃԱՏՈՒՄՆԵՐ ԵՒ ՅԱՊԱՒՈՒՄՆԵՐ

Կրճատումը գործնական նպատակներ կը հետապնդէ, պայմանաւ որ հասկնալի ըլլայ: Կրճատուած բառին առջև կը դնենք կրճատումի կէտը (.) : Կրճատումը կը կատարենք տարրեր նշանակներով: Այսպէս.

1. - Կը գրենք միայն սկզբնատառը, ինչպէս՝ Յ. (Յակոբ), Ս. (Սարգիս), Մ. (Մարտիրոս) եւ այլն: Այսպէս կը կրճատենք յատուկ անուններուն մեծ մասը, հանրագիտարաններու մէջ՝ բառ-յօդուածները եւ այլն:

2. - Կը գրենք բառին առաջին վանկը կամ քանի մը գիրերը. - Յովհ. (Յովհաննէս), Կիր. (Կիրակոս), Արտ. (Արտաւազդ), Բրիստ. (Բրիստափոք), Ալ. (Ալեքսանդր) եւ այլն:

3. - Կը գրենք յարգանքի բարդ վերադիրներուն առաջին բաղադրիչը կամ անոր մէկ մասը. - Վսեմ. (վսեմաշուք), Գեր. (գերաշնորհ), Հոգ. (հոգեշնորհ), Վեր. (վերապատուիլ), Արհի. (արհիապատիւ), Արժ. (արժանապատիւ) եւ այլն:

3. - Կը գեղչենք բաղադրեալ յատուկ անուններուն առաջին բաղադրիչին ածանցը, ինչպէս՝ Ազգ. Սահակեան վարժարան (Ազգային Սահակեան վարժարան), Թաղ. Խորհուրդ (Թաղական Խորհուրդ), Բաղաք. Ժողով (Բաղաքական Ժողով), Տնտես. Խորհուրդ (Տնտեսական Խորհուրդ), Ուսումն. Խորհուրդ (Ուսումնական Խորհուրդ), Բժշկ. Յանձնախումբ (Բժշկական Յանձնախումբ) եւ այլն:

4. - Կ'ամփոփենք, պահելով առաջին երեք կամ չորս

բաղաձայնները, ինչպէս՝ վրժ. (վարժարան), եկղց. (եկեղեցի), պղտ. (պողոտայ), քրթ. (քաղաք), պրն. (պարոն), օրդ. (օրհորդ), կթղ. (կաթողիկոս), եպս. կամ եպսկ. (եպիսկոպոս), վրդ. (վարդապետ), քնն. (քահանայ) եւ այլն:

5. - Կը կրճատենք բարդ բառերու առաջին արմատը, ինչպէս՝ Ա. պետ (Ատենապետ), Բ. Դուռ (Բարձրագոյն Դուռ), Կ. Պոլիս (Կոստանդնուպոլիս) եւ այլն:

6. - Միութիւններու, հաստատութիւններու եւ պետութիւններու բաղադրեալ անուններուն սկզբնատառերը գործածելով միայն, ինչպէս՝ Հ.Մ.Բ.Մ. - Հայ Մարմնամարզական Ընդհանուր Միութիւն, Ս.Օ.Խ. - Սուրիահայ Օգնութեան Խաչ, Հ. Հ. - Հայաստանի Հանրապետութիւն, Ս.Ա.Հ. - Սուրիական Արարական Հանրապետութիւն:

7. - Կրճատումը բառակազմական արժէք կը ստանայ, երբ կը գրուի առանց կէտի, սկզբնատառերը իրարու կցելով: Բառակազմական արժէք ունեցող կրճատումներուն կը տրուի յապաւում անունը: Կը յապաւենք գլխաւորաբար բաղադրեալ անունները: Յապաւումները կը կարդացուին երկու ձևով.

ա) Վանկային ձևով, ինչպէս՝ ՄԱԿ - Միացեալ Ազգերու Կազմակերպութիւն, ՍՕԽ - Սուրիահայ Օգնութեան Խաչ, ՀՕՄ - Հայ Օգնութեան Միութիւն, ՌԱԿ - Ռամկավար Ազատական Կուսակցութիւն:

բ. - Գիրերու անուններով, ինչպէս՝ ՀՅԴ - Հայ Յեղափոխական Դաշնակցութիւն, ՀԲԸՄ - Հայ Բարեգործական Ընդհանուր Միութիւն, ՀՄՄ - Հայ Մարզական Միութիւն:

Շարթուած օրերու անուններուն տարածուած կրճատումները: - Կիր., Բշր., Գշր., Դշր., Եշր., Ուրբ., Շրթ.:

Ամսուան անունները կ'արտայայտեն թուանշանով, ոմանք կը կրճատուին՝ Յուն. (Յն. կամ Յնվ.), Փետր., Օգոս., Սեպտ., Հոկտ., Նոյ., Դեկտ.:

Կրօնատրոններու եւ ոչ կրօնատրոններու տիտղոսները, աստիճանները, վերադիրները, պաշտօնն ու վայրը կրճատելու կերպը տե՛ս էջ 91:



ՈՒՂՂԱԳՐԱԿԱՆ ԵՐԿՁԵՒՈՒԹԻՒՆՆԵՐ

Չգրել*	Գրել	Չգրել	Գրել
անբիծ	անբիծ	հաչել	հաջել
ամենէն	ամէնէն	հետագայ	յետագայ
ամէնա...	ամենա...	հէքևաթ	հեքիաթ
ամիջապէս	ամմիջապէս	հունդ	հունտ
անհնդեղ	անհեքեթ	հրամմէ՛	հրամէ՛
անոյշ	անուշ, Անոյշ	Հրանտ	Հրանդ
առէչ	առէջ	Հրաչիա	Հրաչնայ
առընչութիւն	առնչութիւն	ձկտիլ	ձգտիլ
առընչուիլ	առնչուիլ	ձկտում	ձգտում
արձագանք	արձագանգ	Ճամփայ	ճամբայ
բամբակ	բամպակ	ճիշտ	ճիշդ, ճշդել
բանդ	բանտ	Միսակ	Միսաք
բացօղեայ	բացօթեայ	մողէս	մողէգ
զամբո	զամփո	յոքնակի	յոզնակի
զինտ	զինդ	շողոքորդ	շողոքորթ
զմբէթ	զմբեթ	ոհմակ	փոհմակ
երբէք	երբեք	ոյժ	ուժ
զգածում	զգացում	պտըտիլ	պտտիլ
զերդ	զերթ	սաղարդ	սաղարթ
ընդանի	ընտանի	Սեղրակ	Սեղրաք
ընթեռնիլի	ընթեռնելի	սիզ	սիթ
թագուն	թաքուն	սրունկ	սրունք
թակարթ	թակարդ	ցատքել	ցատկել
թաղանդ	թաղանթ	փափագ	փափաք
թանգ	թանկ	փնտրել	փնտռել
թանգանայ	թանկանայ	քարտէս	քարտէզ
թանկարան	թանգարան	քերդող	քերթող
թատերգութիւն	թատրերգութիւն	քողագերծել	քօղագերծել
ժանկ	ժանգ		
խենդ	խենթ		
խնջոյք	խնճոյք		
ծալիլ	ծալել		
ծղրիդ	ծղրիթ		
կատսայ	կաթսայ		
կարկաջել	կարկաչել		
կլլել	կլլել		
համարեայ	համարեա՛		

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1.-Չայնաւորներու ուղղագրութիւնը	
Ա	3
Ե եւ Է	5
Ը	14
Ի	18
Ո եւ Օ	21
ԻԻ	26
ՈՒ	27
2.-Երկհնչիւններու ուղղագրութիւնը	
ԱՅ եւ ՈՅ	30
ԵԱ, ՅԱ, ՅԵԱ, ԵԱՅ, ԻԱ, ՅԻԱ, ԻԱՅ, ԵԱՅ, ԷԱ	31
ԵՕ, ԵՈ, ԷՈ, ԻՈ, ԻՈՅ, ԻՕ, ՅՈ, ՅՕ, ԷՕ	34
3.-Բաղաձայններու ուղղագրութիւնը	
Բ, Փ եւ Պ	36
Գ, Բ եւ Կ	38
Դ, Թ եւ Տ	41
Չ, Յ եւ Ծ	43
Չ, Չ եւ Ճ	46
Չ եւ Ս	49
Ժ եւ Ծ	50
Խ եւ Ղ	50
Հ եւ Յ	51
Մ եւ Ն	53
Ռ եւ Ր	55
Վ, Ո, Ի (աւ, եւ, իւ, ու)	61
4.-Ածանցներու ուղղագրութիւնը	
ա.-Նախածանցներ	63
բ.-Վերջածանցներ	64
5.-Նմանաձայն բառեր	68
6.-Թուականներու ուղղագրութիւնը	74
7.-Կէտադրութիւն	
Ա. Տրոհումի Նշաններ	

\* Աշխատութեան մէջ տեղին անդրադարձած ենք ուղղագրական երկձեւութիւններուն: Այս ցանկին մէջ առաջին շարքի տարբերակները կ'ամ շեղումներ են, կ'ամ քիչ հանդիպող տարբերակներ, որոնց գործածութիւնը թելադրելի չէ:

1.-Վերջակէտ	77
2.-Միջակէտ	77
3.-Ստորակէտ	77
4.-Բութ	81
Բ.-Առողջանութեան նշաններ	
1.-Հարցման նշան կամ պարոյկ	82
2.-Շեշտ	83
3.-Երկար կամ բացագանչութեան նշան	84
4.-Չայնարկութիւններու կէտադրութիւնը	84
Գ.-Բացալայտութեան նշաններ	85
1.-Չակերտ	85
2.-Փակագիծ	86
3.-Կախման կէտ	87
4.-Բազմակէտ	87
5.-Ապաթարց	87
6.-Միութեան, անջատման, տողադարձի գծիկներ	87
8.-Ո՞ր կը գործածենք գլխագիրը	90
9.-Կրճատումներ և յապատումներ	92
10.-Ուղղագրական նրկձևութիւններ	94

ՅԱԿՈՒ ԶՈՒԱՔԵԱՆ  
ՀԱՅԵՐԷՆԻ ԱԻԱՆԴԱԿԱՆ ՈՒՂՂԱԳՐՈՒԹԻՒՆ

Կողք՝  
ԱՐՏՕ ՀԱՄԲԱՐՉՈՒՄԵԱՆԻ

Տպ. «ԱՐԵՒԵԼԸ»

Հայէպ, 2000

Հեղինակի հասցէ՝

P. O. Box 4708, Aleppo, Syria